

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ
ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022

# ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ

ZANGEZUR
ՊԱՀՊԱՆԵԼՈՎ
ԱՐԺԵՔՆԵՐԸ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


2 ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

3 ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

5 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

10 ԶՊՄԿ-Ի ՄԱՍԻՆ

13 ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

20 ԲՍԿ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

33 ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

36 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

47 ՀԱՄԱՅՆՔ

57 ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

74 ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

76 ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

92 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



# ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

GRI [2-22]

Հարգելի՛ գործընկերներ, բարեկամներ,

Անդրադառնալով 2022 թվականի մեր գործունեությանը՝ առանձնահատուկ հպարտությամբ եմ ներկայացնում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ի (ԶՊՄԿ) Կայուն զարգացման հաշվետվությունը. պատասխանատու և անվտանգ հանքարդյունաբերությանն ուղղված թերևս մեր հերթական հանձնառությունը:

Մեկնարկելով կայուն զարգացման մեր ճանապարհորդությունը՝ ԶՊՄԿ-ում հավատացած ենք, որ պատասխանատու և հաշվետու հանքարդյունաբերությունը շահագրգիռ կողմերի համար իրական արժեքներ ստեղծելու և Հայաստանի տնտեսական աճին նպաստելու միակ ուղին է: Այդ իմաստով, մեր բոլոր ծրագրերի զարգացման հիմքում են դրվել շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական պատասխանատվության և կայուն կառավարման մոտեցումները:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում Ընկերության ջանքերը միտված են մեր գործունեությամբ պայմանավորված ածխածնի հետքի ծավալների բացահայտմանը, թափոնների արդյունավետ կառավարմանը և բնական միջավայրի հետ համահունչ գործունեության ապահովմանը: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը նվազագույնին հասցնելու նպատակով մենք իրականացրել ենք կենսաբազմազանության պահպանմանը, ջրի կառավարմանն ու արտանետումների կրճատմանն ուղղված միջոցառումներ:

Սոցիալական առումով ԶՊՄԿ-ն շարունակում է համայնքներում դրական փոփոխությունների ուղղությամբ վճռորոշ դեր խաղալ: Տեղական համայնքների հետ մեր սերտ հարաբերությունները նպաստում են համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը, կենսամակարդակի բարձրացմանն ու նոր աշխատատեղերի ստեղծմանը: Նմանապես, մենք հանձնառու ենք և անում ենք ամենը մեր աշխատակիցների կենսագործունեության անվտանգության, առողջության ու ընդհանուր բարեկեցության ապահովման ուղղությամբ:

Կառավարչական հարթությունում, անցած տարվա ընթացքում Ընկերության ջանքերի առանցքային ուղղությունը առավելագույն թափանցիկության և էթիկական գործելաոճի ապահովումն էր: Հնարավորինս կատարելագործելով Ընկերության կորպորատիվ կառավարման կառույցները՝ մենք մշակել և ներդրել ենք այնպիսի գործիքակազմ և կանոնակարգեր, որոնք թույլ են տալիս դարձնել մեր գործունեությունն առավել թափանցիկ և էթիկական, ինչպես նաև համապատասխանել գոյություն ունեցող լավագույն միջազգային չափանիշներին:

Մեր ընտրած ճանապարհը սոցիալական պատասխանատվություն և էթիկական գործելաոճ դրսևորող, բնապահպանական առումով գրագետ ու գիտակից կազմակերպության վերածվելու համար անհրաժեշտ ջանքերի ճանապարհն է, որը բերում է զարգացման հնարավորություններ:

Մենք ցանկանում ենք մեր անկեղծ երախտագիտությունը հայտնել բոլոր շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ Ընկերության աշխատակիցներին, համայնքների անդամներին ու գործընկերներին՝ կայուն զարգացման ճանապարհին մեր շարժիչ ուժը լինելու համար: Ձեր մշտական աջակցությունն ու մեր թիմի հանդեպ վստահությունն անչափ կարևոր են և ոգեշնչում են մեզ՝ ստեղծելու ավելի կայուն ապագա:

Դժվար է հերքել այն փաստը, որ կայուն զարգացման ապահովումը երկարատև գործընթաց է, որը ենթադրում է անընդհատ ի հայտ եկող նորանոր նպատակներ: Դեպի կայունություն ճանապարհորդությունը երբևէ չի ավարտվում, և այդ ուղին հետամուտ լինելը և՛ մարտահրավեր է, և՛ բարձրագույն առաքելություն: Կայունությունն ամենօրյա նվիրում է և այն չունի վերջնակետ:

Նայելով առաջ՝ մենք հասկանում ենք, որ մեզ սպասում են բազում մարտահրավերներ ու խոչընդոտներ, սակայն մեր ունեցած հաջողություններն ու ձեռքբերումները ոգեշնչում են մեզ և տալիս են դրանք հաղթահարելու ուժ: Ընկերության ղեկավարությունը հաստատակամ է ջանք չխնայելու, որ ԶՊՄԿ-ն դառնա ոչ միայն Հայաստանի օրինակելի, առաջատար և հաշվետու հանքարդյունաբերական ընկերություն, այլև դասվի կայուն զարգացման առումով աշխարհի լավագույն ընկերությունների շարքին, որոնք միավորվել են ոլորտում կայունության ապահովման առաքելության շուրջ:

**ՌՈՄԱՆ ԽՈՒԴՈԼԻ**
**Գլխավոր տնօրեն**

# ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ



Ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ ներկայացնելու ԶՊՄԿ-ի երկրորդ Կայուն զարգացման հաշվետվությունը, որում ներառված են համապարփակ տեղեկություններ Կլիմային առնչվող ֆինանսական հաշվետվողականության աշխատանքային խմբի /ԿՖՀԱԽ/TCFD/ մեր առաջին հաշվետվությունից: Տվյալների ճշգրտությունն ապահովելու նպատակով մեր կողմից կատարվել է տվյալների հավաքագրման համակարգի լրամշակում և հանրայնացում, ինչն ինքնին բավականաչափ բարդ և բազմակողմ գործընթաց է: Միևնույն ժամանակ, մենք աշխատել ենք տվյալների հրապարակման գործընթացը բարելավելու և գործող լավագույն չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Ես հպարտությամբ եմ արձանագրում այն փաստը, որ ԶՊՄԿ-ն առաջինն է Հայաստանում գործող ինչպես հանքարդյունաբերական, այնպես էլ այլ ոլորտի ձեռնարկությունների շարքում, որը պատրաստել է TCFD հաշվետվություն: Նախորդ տարուց ի վեր մեզ հաջողվել է ապահովել զգալի առաջընթաց առավել թափանցիկ հաշվետվողականության վերաբերյալ հանձնառության առումով: Ի տարբերություն նախորդ հաշվետվության, որում ներկայացված էր կարևոր թեմաներին վերաբերող ընդհանուր տեղեկատվություն, այս տարի մենք որոշել ենք ավելացնել հրապարակվող տեղեկատվության ծավալն ու Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնության /GRI/ պահանջներին համահունչ՝ բարելավել դրա որակը: Եվ ես կարծում եմ, որ դա մեզ հաջողվել է: Մասնավորապես, մեր կողմից իրականացվել է Ընկերության շահագրգիռ կողմերի և կայուն զարգացման մասով ազդեցությունների վերլուծություն՝ Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնության չափանիշներով սահմանված ընթացակարգերի համաձայն: Արդյունքում, 2022 թվականի Հաշվետվությունում մենք ներառել ենք ԶՊՄԿ-ի բնապահպանական, տնտեսական ու սոցիալական ազդեցություններին վերաբերող տասնինը (19) էական թեմաներ:

Ես ցանկանում եմ խորին շնորհակալությունս հայտնել իմ թիմին՝ նրանց կատարած զգալի և կարևորագույն աշխատանքի համար, մասնավորապես՝ տվյալների հավաքագրման ընթացքում ցուցաբերած պատրաստակամության, բարելավման ենթակա ոլորտները բացահայտելու վճռականության, ինչպես նաև առաջացող մարտահրավերները ճկունությամբ հաղթահարելու համար: Կցանկանայի նաև երախտիքս հայտնել ԶՊՄԿ-ի ղեկավարությանը՝ կայուն զարգացման նախաձեռնություններին մշտապես աջակցելու, թափանցիկ հաշվետվողականության կարևորությունը գիտակցելու և դրա ապահովման համար անհրաժեշտ գործիքակազմ ու ռեսուրսներ տրամադրելու համար:

Կայուն զարգացման համապարփակ հաշվետվությունը՝ որպես կանոն, ներառում է երեք հիմնական տարր: Մասնավորապես, այն կարևորում է արձանագրված հաջողությունները, ներկայացնում է բարելավման ենթակա ոլորտներն ու սահմանագծում է հետագա զարգացման ուղին, և ես համոզված եմ, որ մեր հաշվետվությունում առկա են այդ բոլոր բաղադրիչները: Մենք գիտակցում ենք, որ իրական զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է բացահայտել այն ոլորտները, որոնք պահանջում են ավելի մեծ աշխատանք, ինչպես նաև այն, որ իրական ձեռքբերումները չափվում են հստակ ձևակերպված թիրախային ցուցանիշներով:

Այս Հաշվետվությամբ մենք ուրվագծում ենք կայուն զարգացման բոլոր նախաձեռնություններն իրականություն դարձնելու մեր հավակնոտ նպատակները, այն է՝ տեղական էկոհամակարգեր ձևավորելուց մինչև բնապահպանական ազդեցության կրճատմանն ուղղված ռեսուրսների օպտիմալացում: Քաջ գիտակցելով այն փաստը, որ նշված նպատակների իրագործման համար պահանջվում է շարունակական աշխատանք ու նվիրում՝ ես, այնուամենայնիվ, հակված եմ դիտարկել այն ոչ թե որպես պարտականություն, այլ որպես առավելապես քաջալերող ու արժեքավոր փորձ:

Ավանդաբար, հանքարդյունաբերական ընկերությունները պատրաստակամ չեն ներկայացնելու ոլորտին բնորոշ աշխատանքային սկզբունքները, ինչը հիմնականում պայմանավորված է կայունության գաղափարախոսության մեջ նախկինում ունեցած թերացումներով: Մենք, որպես հանքարդյունաբերական ընկերություն, պատրաստ ենք և ձգտում ենք մեր բնագավառի այլ ընկերությունների հետ համատեղ զարգացման, և ցանկանում ենք հասնել այն կետին, որտեղ կարող ենք հպարտությամբ արձանագրել, որ մենք ոչ միայն հանքագործներ ենք, այլ նաև մեր աշխատանքը պատասխանատու և անվտանգ կատարող ընկերություններ, որոնք ապահովում են ավելի մաքուր և բնապահպանական տեսանկյունից ապահով ապագա ստեղծելու համար անհրաժեշտ ռեսուրսներ:

**Կայուն զարգացման գծով տնօրեն**
**ԱՐՄԵՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ**


212
HD785
216
HD785
KOMATSU

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

12 RESPONSIBLE CONSUMPTION AND PRODUCTION

ՄԱԿ ԿԶՆ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

GRI [2-2, 2-3, 2-14]

ԶՊՄԿ-ի 2022 թվականի կայուն զարգացման հաշվետվության (այսուհետ՝ «Հաշվետվություն») նպատակն է՝ ներքին ու արտաքին շահագրգիռ կողմերին ներկայացնել ԶՊՄԿ-ի կայուն զարգացման նպատակները, իրականացված միջոցառումները և արձանագրված արդյունքները:

Հաշվետվությունը, որն արտացոլում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ԶՊՄԿ») և «Լեռ-Էքս» ՍՊԸ-ի 2022 թվականի ֆինանսական տարվա (հունվարի 1–ից մինչև դեկտեմբեր 31) գործունեությունը, հրապարակվել է 2023 թվականի դեկտեմբերին: Հաշվետվությունում ներկայացված են ՀՀ Սյունիքի մարզում գտնվող Քաջարանի բացահանքում իրականացվող ԶՊՄԿ-ի հանքարդյունաբերական ու հանքահարստացման գործողությունները, Քաջարանի և Երևանի գրասենյակների գործունեությունն ու նրանց վերահսկողության ներքո իրականացվող հիմնական գործառույթները:

Հաշվետվությունն անդրադառնում է կայուն զարգացմանը վերաբերող կարևորագույն հարցերին Գլոբալ հաշվետվողականության նախաձեռնության /GRI/ չափանիշների համատեքստում: Հաշվետվությունում առկա GRI չափանիշների ցանկը ներկայացված է հավելվածում: Հաշվետվությունն արժանացել է ԶՊՄԿ-ի ղեկավարության հավանությանը:

Բացի այդ, Հաշվետվությունում առկա են նաև ընթացիկ հիմնավոր ենթադրությունների և դատողությունների վրա կառուցված հեռանկարային հայտարարություններ, որոնք, սակայն, տարատեսակ գործոններով պայմանավորված, կարող են տարբերվել և չհամընկնել իրական արդյունքների հետ:

Սա մեր ընկերության երկրորդ տարեկան Կայուն զարգացման հաշվետվությունն է: ԶՊՄԿ-ի առաջին հաշվետվությունը ներկայացված է **http://www.zcmc.am/eng/sustainability/**

# ԷԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԷԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ

GRI [3-1, 3-2]

Կայուն զարգացման մասով ՋՊՄԿ-ի ազդեցությունների էականությունը գնահատելու և այդ առումով էական թեմաներն ու ոլորտները բացահայտելու նպատակով, մեր կողմից սույն հաշվետվությունը պատրաստելու ընթացքում, կատարվել է կարևորության գնահատում: Նշված թեմաները ներկայացնում են Ընկերության գործունեությամբ պայմանավորված և տնտեսության, շրջակա միջավայրի և մարդկանց, այդ թվում՝ մարդու իրավունքների ոլորտներում արձանագրված կարևորագույն ազդեցությունները:

Կարևորության գնահատման գործընթացը ներառում է հետևյալ փուլերը.

Հավանական էական ազդեցությունների ցանկ

Ազդեցությունների կարևորության գնահատում՝ ներքին հարցում

Էական թեմաների վերջնական ցանկ

## ՀԱՎԱՆԱԿԱՆ ԷԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Կայուն զարգացման վերաբերյալ հաշվետվողականության շրջանակներում, մեր կողմից նույնականացվել են էական թեմաներ, որոնք կարևոր են ինչպես Ընկերության, այնպես էլ մեր շահառուների համար: Վերոնշյալ հավանական էական թեմաների շրջանակը հստակեցնելու նպատակով, մենք, կիրառելով կայուն զարգացման վերաբերյալ հաշվետվողականության լավագույն միջազգային փորձը, իրականացրել ենք ՋՊՄԿ-ի գործառնությունների և ավելի լայն գործունեության համապարփակ վերլուծություն:

Համեմատական վերլուծությունը կատարվել է ութ (8) խոշորագույն միջազգային հանքարդյունաբերական ընկերությունների կողմից ներկայացված էական թեմաների համեմատությամբ: Այնուհետև, այդ թեմաները համադրվել են ՋՊՄԿ-ի նախորդ՝ 2021 թվականի կայուն զարգացման հաշվետվությունում ներկայացված հիմնական թեմաների հետ: Ամփոփելով՝ համախմբվել են համեմատական վերլուծության արդյունքներն ու ՋՊՄԿ-ի գործունեության վերլուծությունը՝ հաշվի առնելով ինչպես բացասական, այնպես էլ դրական ազդեցությունները:

Այս համապարփակ գնահատման արդյունքում կազմվել է քսանվեց (26) նախնական ոլորտներից ցանկ, որոնցում առկա է կամ կարող է արձանագրվել կայուն զարգացման մասով ՋՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ազդեցություն (հավանական էական թեմաներ):

## ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ. ՆԵՐՔԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Կայուն զարգացման մասով ՋՊՄԿ-ի ազդեցությունների առաջնահերթությունը գնահատելու համար կատարվել է ներքին հարցում: Այս հարցումն ընդգրկել է ՋՊՄԿ ղեկավարությանը, ներառելով ոչ միայն ընկերության անձնակազմին, այլ նաև դեպարտամենտների և բաժինների ղեկավարների, որոնք վերահսկում են ՋՊՄԿ-ի գործունեության հիմնական ոլորտները, ինչպիսիք են՝ արտադրություն, բիզնես զարգացում, կայուն զարգացում, ֆինանսներ, էներգետիկա և տեխնիկական անվտանգություն:

Ուսումնասիրության մասնակիցների կողմից կատարվել է ՋՊՄԿ-ի ընթացիկ և հեռանկարային կայուն զարգացման ազդեցությունների գնահատում հետևյալ չափորոշիչներով.

**Ազդեցության մակարդակ**
ազդեցության ներկայիս կամ հավանական ուժգնությունը

օրինակ՝ կյանքի որակի բարելավման աստիճան, շրջակա միջավայրի վատթարացման մակարդակ

**Ազդեցության շրջանակ**
ազդեցության ներկայիս կամ հավանական տարածվածությունը

օրինակ՝ ազդեցության ենթարկված անձանց կամ ոլորտների քանակը

Մենք օգտագործել ենք 0-ից մինչև 3-ը հասնող սանդղակ, որտեղ 0-ն ենթադրում է զրոյական ազդեցություն, իսկ 3-ը՝ առավելագույն ազդեցություն:

## ԷԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՑԱՆԿ

Երրորդ փուլում մենք կատարել ենք ուսումնասիրության արդյունքների վերլուծություն և նշված երկու չափորոշիչներով գնահատում, ինչից հետո կազմել ենք առաջնահերթ ազդեցությունների ցանկ:

Ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ սահմանված առավելագույն 3-ից գնահատված միջին ազդեցությունը կազմել է 1.8 (ըստ ազդեցության մակարդակի) և 1.7 (ըստ ազդեցության շրջանակի): Ըստ մակարդակի կամ շրջանակի գնահատված միջինից բարձր ազդեցություններից ելնելով՝ կազմվել է էական թեմաների նախնական ցանկ: Այնուհետև, Հաշվետվության պատրաստման համար պատասխանատու փորձագետների կողմից կատարված ստուգման արդյունքում պատրաստվել է էական թեմաների վերջնական ցանկ: Արդյունքում, էական թեմաների ցանկը համալրվել է «Կենսաբազմազանություն», «ՋԳ արտանետումներ» և «Խտրականության բացառում և հավասար հնարավորությունների ապահովում» թեմաներով:

Ընդհանուր առմամբ, առանձնացվել է տասնինը (19) էական թեմա: Ստորև ներկայացված է հրապարակման ենթակա էական թեմաների քարտեզը, որտեղ թեմաների դիրքը որոշվում է համապատասխան ազդեցությունը՝ «Ազդեցությունների մակարդակ» և «Ազդեցությունների շրջանակ» չափորոշիչներով գնահատելուց հետո:

**ԷԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՔԱՐՏԵԶ**



## ԹԵՄԱՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ GRI ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

| № | Էական թեմաներ * | Հրապարակման համար կիրառված GRI չափանիշներ |
|---|---|---|
| 1 | Պետական վճարումներ (նոր) | GRI 207 Հարկեր (2019) |
| 2 | Աշխատակիցների կառավարում | GRI 202 Շուկայում ներկայություն (2016); GRI 401 Զբաղվածություն (2016); GRI 402 Աշխատանք/Կառավարում հարաբերություններ (2016); GRI 404 Ուսուցում և կրթություն (2016) |
| 3 | Տնտեսական ազդեցություններ | GRI 201 Տնտեսական կատարողական (2016); GRI 203 Անուղղակի տնտեսական ազդեցություններ (2016); GRI 204 Գնումների գործընթացներ (2016) |
| 4 | Հակակոռուպցիոն (նոր) | GRI 205 Հակակոռուպցիոն(2016) |
| 5 | Համայնքների ներգրավում | GRI 413 Տեղական համայնքներ (2016) |
| 6 | Ջուր և կեղտաջրեր | GRI 303 Ջուր և կեղտաջրեր (2018) |
| 7 | Արտակարգ իրավիճակների կառավարում (նոր) | - |
| 8 | Հանրային քաղաքականություն (նոր) | GRI 415 Հանրային քաղաքականություն (2016) |
| 9 | Փակում և վերականգնում (նոր) | - |
| 10 | Մատակարարման շղթայի պատասխանատվություն (նոր) | - |
| 11 | Աշխատողների անվտանգություն | GRI 403 Աշխատավայրում առողջություն և անվտանգություն (2018) |
| 12 | Արհմիություններ ստեղծելու և կոլեկտիվ պայմանագրեր կնքելու ազատություն (նոր) | - |
| 13 | Պոչամբարներ (նոր) | - |
| 14 | Մթնոլորտային արտանետումներ (նոր) | GRI 305 Արտանետումներ (2016) |
| 15 | Կլիմայի փոփոխությանը հարմարվողականություն և դիմակայունություն | - |

* (նոր) նշումով թեմաները չեն դիտարկվել որպես էական ԶՊՄԿ-ի 2021 թվականի կայուն զարգացման հաշվետվությունում

| № | Էական թեմաներ * | Հրապարակման համար կիրառված GRI չափանիշներ |
| --- | --- | --- |
| 16 | Թափոններ | GRI 306 Թափոններ (2020) |
| 17 | Կենսաբազմազանություն | GRI 304 Կենսաբազմազանություն (2016) |
| 18 | Խտրականության դեմ պայքար և հավասար հնարավորություններ | GRI 405 Բազմազանություն և հավասար հնարավորություններ (2016)<br>GRI 406 Խտրականության դեմ պայքար (2016) |
| 19 | Ջերմոցային գազերի արտանետումներ | GRI 302 Էներգիա (2016); GRI 305 Արտանետումներ (2016) |

## Ոչ էական թեմաներ

Հողերի և ռեսուրսների նկատմամբ իրավունքներ

Բնիկ ազգերի իրավունքներ

Մանկական աշխատանք

Արհեստագործական կամ փոքրածավալ հանքարդյունաբերություն

Մարդու իրավունքների խախտում անվտանգության ապահովման ընթացքում

Հարկադրված աշխատանք և ժամանակակից ստրկություն

Հակամարտության և բարձր ռիսկային գոտիներ





# ԶՊՄԿ-Ի ՄԱՍԻՆ

## ԶՊՄԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

GRI [2-1, 2-6]

1951 թվականին որպես պետական ձեռնարկություն հիմնադրած «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը (ԶՊՄԿ) հանդիսանում է Հայաստանի խոշորագույն ընկերություններից մեկն ու հայկական հանքարդյունաբերական ոլորտի ճանաչված առաջատարը:

ԶՊՄԿ-ն տեղակայված է Հայաստանի հարավարևելյան մասում՝ Ողջիի դաշտավայրում: Ընկերության գործունեությունը իրականացվում է  Քաջարան և Կապան համայնքներում: Կոմբինատը գտնվում է Հայաստանի մայրաքաղաք Երևանից 345 կմ և Հայաստանի երկրորդ խոշորագույն մարզի՝ Սյունիքի վարչական կենտրոն հանդիսացող Կապանից 25 կմ հեռավորության վրա:

Հայաստանի մոլիբդենի ու պղնձի հաստատված ու հաշվարկված երկարաժամկետ պաշարներով խոշոր հանքավայրերի շահագործման շնորհիվ, ԶՊՄԿ-ն ապահովում է տարեկան մինչև 22 մետրային տոննա (Մտ) արտադրանք: Մենք նախատեսում ենք մեծացնել արտադրության ծավալները գլոբալ պահանջարկը բավարարելու նպատակով:

Մենք արդյունահանում և վերամշակում ենք պղինձ ու մոլիբդեն, որոնք օգտագործվում են ամենօրյա սպառման հազարավոր անուն ապրանքների արտադրության համար, անփոխարինելի են ժամանակակից հասարակության համար և նպաստում են կյանքի որակի բարելավմանը: Մեր կողմից արտադրվող ռեսուրսներն անչափ կարևոր են տնտեսական զարգացման ու ածխածնի արտանետումների կրճատման տեսանկյունից և մենք հանձն ենք առել այդ ռեսուրսների անվտանգ, պատասխանատու և արդյունավետ մատակարարումը:

**Մոլիբդենից ստացվող մոլիբդենի օքսիդն ու ֆերոմոլիբդենը հիմնականում կիրառվում են պողպատի արտադրությունում՝ կոռոզիայի հանդեպ դիմադրողականության, ամրապնդման և ջերմակայունության համար:**
**Պղինձը ներկայումս հանդիսանում է օգտագործման առումով աշխարհում ամենատարածված ու բազմաֆունկցիոնալ մետաղը, քանի որ այն ակտիվորեն կիրառվում է արդյունաբերական արտադրությունում:**

Մինչև 2031 թվականը, էլեկտրիֆիկացման շնորհիվ ակնկալվում է պղնձի տարեկան պահանջարկի ավելացում՝ ներկայիս **25 Մտ-ից մինչև 36.6 Մտ**: Ըստ McKinsey & Company*  ընկերության կանխատեսումների՝ հաջորդ տասնամյակի մեկնարկի դրությամբ մատակարարման ծավալները կկազմեն **մոտ 30.1 Մտ՝ ստեղծելով մոտ 6.5 Մտ** պահանջարկ:

2020 թվականի դրությամբ, էկո սպառումը կազմել է պղնձի սպառման ընդհանուր ծավալի 4%-ը: Goldman Sachs-ի վերլուծաբանների վերջին կանխատեսումների համաձայն, ակնկալվում է, որ այս ցուցանիշը կավելանա մինչև չորս անգամ՝ 2030 թվականի դրությամբ՝ հասնելով 17%-ի: Ըստ վերլուծաբանների՝ 2030թ**.  դրությամբ, զրոյական արտանետումներ ապահովող զարգացման պարագայում՝ պղնձի պահանջարկը կավելանա ևս 54%-ով:

Հանդիսանալով տարածաշրջանի առաջատար հանքարդյունաբերական ընկերությունը՝ մենք կիրառում ենք արդյունավետությունն ապացուցած տեխնոլոգիաներ և արտադրական մեթոդներ, այն է՝ հանքի շահագործում բաց եղանակով  և հանքաքարի մշակում գործարանային պայմաններում: Ընկերությունն ունի նաև լցակույտեր, հանքի աշխատանքի համար անհրաժեշտ ենթակառուցվածք և պոչամբար:

* “Bridging the copper supply gap”, Scott Crooks at al., McKinsey’s Metals & Mining Practice, www.mckinsey.com, 17 փետրվարի 2023

** “The global copper market is entering an age of extremely large deficits”, Rick Mills, www.mining.com, 25 հուլիսի 2023

**ՎԱՃԱՌՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱՎԱԼՆԵՐ (2022)**

ՄՈԼԻԲԴԵՆԻ ԽՏԱՆՅՈՒԹ
**22.4 ՀԱԶԱՐ ԹԱՑ ՄՏ**

ՖԵՐՈՄՈԼԻԲԴԵՆ
**8.6 ՀԱԶԱՐ ՏՈՆՆԱ**

ՊՂՆՁԻ ԽՏԱՆՅՈՒԹ
**243.9 ՀԱԶԱՐ ԹԱՑ ՄՏ**

Մեր ընկերությանը տրամադրված լիցենզիան գործում է մինչև
**2041 ԹՎԱԿԱՆԸ**




ԶՊՄԿ ամբողջական արտադրական ցիկլ ապահովող ձեռնարկություն է, որը ներառում է հետևյալ երեք օբյեկտները

## ԲԱՑԱՀԱՆՔ

Քաջարանի հանքավայրի շահագործումը կատարվում է բաց եղանակով, ինչը հարմար է խոշոր հանքարդյունաբերական տեխնիկայի կիրառման առումով: Ներկայիս տարեկան արդյունահանման ծավալները կազմում են **մոտ 22 Մտ**: Հանքարդյունահանման այս մեթոդը թույլ է տալիս իրականացնել բացահանքից հանքաքարի արդյունավետ մեծածավալ արդյունահանում, որը, այնուհետև, ենթարկվում է վերամշակման՝ արժեքավոր պղինձ ու մոլիբդեն ստանալու նպատակով:

Վերջին երկրաբանական ուսումնասիրությունները փաստում են, որ Քաջարանի հանքավազանում առկա են ընդհանուր առմամբ հանքաքարի **մոտ 2.1 մլրդ Մտ** հաստատված պաշարներ, որի **5.8 մլն Մտ** կազմում է պղնձի պաշարները, իսկ **826 Մտ**՝ մոլիբդենը (մանրամասների համար տես ԶՊՄԿ-ի 2021 թվականի Կայուն զարգացման հաշվետվությունը, էջ 10):

## ԱՐԾՎԱՆԻԿԻ ՊՈՉԱՄԲԱՐ

Հարստացուցիչ ֆաբրիկայում կատարվող վերամշակումից հետո պոչանքները, ջրատար մի շարք խողովակաշարերի ու վաքերի միջով, տեղափոխվում են Կապան համայնքի մաս կազմող Արծվանիկ գյուղի մոտակայքում գտնվող պոչամբար: Պոչամբարը հանքարդյունաբերական ու մետաղական հանքաքարի վերամշակման մնացորդների պահեստավորման համար նախատեսված ինժեներական կառույց է, որն ապահովված է ջրային զանգվածի կառավարման համար պաշտպանիչ ամբարտակով: Փրփրային հարստացման ժամանակ ջրի մակերես չբարձրացած հանքանյութերն անցնում են հարստացուցիչ գործարանն ու պոչամբարն իրար միացնող պոչատար խողովակների ու վաքերի միջով: Այս երթուղին անցնում է Ողջի գետի ձախ ափով և կուտակում պոչանքը Կապանի տարածքում գտնվող պոչամբարում:

## ՀԱՐՍՏԱՑՈՒՑԻՉ ՖԱԲՐԻԿԱ

ԶՊՄԿ-ի հարստացուցիչ ֆաբրիկան հագեցած արտադրական միավոր է, որն ունակ է ապահովելու տարեկան մինչև 22 Մտ հանքաքարի մշակում: Ֆաբրիկայի վերամշակման կարողություններն ու մեծ փորձը թույլ են տվել վերջին մի քանի տարիների ընթացքում զգալիորեն ավելացնել վերամշակման ծավալները:

Հարստացուցիչ ֆաբրիկան աշխատում է ավանդական մեթոդներով: Մասնավորապես՝ ջարդման, մանրացման և ֆլոտացիոն/հարստացման գործընթացների շնորհիվ հանքաքարից ստացվում է պղնձի և մոլիբդենի առանձին խտանյութեր, որից հետո դրանք ջրազրկվում են երկու առանձին արտադրական սարքավորումներում: Որակի հսկողությունն իրականացվում է լաբորատորիաներում, որտեղ մշակվում են հանքաքարի նմուշներ, կատարվում են ֆլոտացիոն անալիզներ և այլ հետազոտական փորձարկումներ՝ արտադրանքի պատշաճ որակն ապահովելու նպատակով:

**Արծվանիկի պոչամբարը տեղակայված է Արծվանիկի կիրճում՝ հարստացուցիչ ֆաբրիկայից մոտ 34.5 կմ հեռավորության վրա: Ծովի մակարդակից 900 մետր բարձրության վրա գտնվող պատվարն այժմ գործում է 398 մլն խ/մ ծավալով:**

# ԶՊՄԿ-Ը ԹՎԵՐՈՎ

Վերջին տարիների ընթացքում պահպանել է Հայաստանի խոշորագույն հարկատուի կարգավիճակը

Վաճառքի ծավալներ
**822.1**
մլն ԱՄՆ դոլար
(+20.6%՝ 2021թ. համեմատ)

Հանդիսանում է երկրի խոշորագույն գործատուներից մեկը **5**

Հանքաքարի արտադրության ընդհանուր ծավալը կազմում է
**20.7** Մտ տարեկան
(+13%՝ 2021 համեմատ)

Աշխատակիցների թիվը կազմում է **4 587**
(+5% ՝ 2021թ. համեմատ)

Դասվում է աշխարհում մոլիբդեն արտադրող առաջատար **10** ընկերությունների շարքին

## ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ(%)



# ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ (ԲՍԿ) ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

GRI [2-6]

ԶՊՄԿ-ի ԲՍԿ կառավարման հիմքում ընկած է շահագրգիռ կողմերի հետ փոխադարձ վստահության գաղափարը, ինչը թույլ է տալիս ողջամիտ լուծումներ գտնել ինչպես սպառողների, այնպես էլ հասարակության համար:

Մենք պարտավորվել ենք՝

- համապատասխանել կայուն զարգացման մասով գործող օրենսդրական ակտերի պահանջներին և միջազգային չափանիշներին,
- իրականացնել արդյունավետ կառավարում, որը ենթադրում է ղեկավարների մակարդակով սոցիալական ու բնապահպանական գործունեության վերահսկողություն,
- ներքին ու արտաքին շահագրգիռ կողմերի հետ իրականացնել կայուն զարգացման հարցերի շուրջ թափանցիկ հաղորդակցություն և համագործակցություն,
- մշտապես բարելավել Ընկերության գործունեության արդյունավետությունը՝ հիմնվելով գործադիր մարմնի կողմից վերահսկողության վրա:

## ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

**ԼԻՆԵԼ ԱՌԱՋԱՏԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ, ԿԻՐԱՌԵԼ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԱՅՈՒՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ ՄԵՐ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԵՏՔԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ և ՆՊԱՍՏԵԼ ԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ:**

ԲՍԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ ՈՐԴԵԳՐԵԼՈՎ՝ ՄԵՆՔ ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄ ԵՆՔ.




GRI [2-9, 2-10, 2-18]

Ընկերության կառավարչական ու վերահսկողական կազմը ներառում է հետևյալ մարմինները՝ Բաժնետերերի ընդհանուր ժողով, Տնօրենների խորհուրդ և մեկ գործադիր մարմին՝ Գլխավոր տնօրեն:

Տնօրենների խորհրդի հիմնական դերը ընկերության երկարաժամկետ կայունության ապահովումն է՝ ռազմավարական կառավարումը վերահսկելու միջոցով: Սա ներառում է Ընկերության տեսլականի սահմանումը, առաքելությունը, ռազմավարությունը, ռազմավարական նպատակների սահմանումն ու հիմնական կատարողական չափորոշիչների հաստատումը: Տնօրենների խորհուրդն իրականացնում է նաև Ընկերության միակ գործադիր մարմնի կատարողականի վերահսկողությունը, սահմանում է ռիսկերի կառավարման և ներքին վերահսկման համակարգերի սկզբունքներն ու մոտեցումները, և աշխատում է ընդլայնել Ընկերության կորպորատիվ կառավարման շրջանակը:

Տնօրենների խորհուրդը բաղկացած է 8 անդամից, որոնց ընտրում է Բաժնետերերի ընդհանուր ժողովը: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են հաջորդ Խորհրդի ընտրությամբ: Խորհրդի գործունեության արդյունավետությունը գնահատվում է ՀՊՄԿ-ի բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից: Բաժնետերերի ընդհանուր ժողովը լիազորված է իրականացնել գնահատումներ, ընդունել անհրաժեշտ որոշումներ և կատարել Տնօրենների խորհրդի կազմի փոփոխություն՝ ընդհուպ մինչև Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցում:

**Տնօրենների խորհրդի կառուցվածքը ըստ անկախ գործելու չափորոշիչի**




**Տնօրենների խորհրդի կառուցվածքը ըստ սեռերի**




Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն ապահովվում է  Վերստուգիչ հանձնաժողովը (երեք անդամից բաղկացած), որն ընտրվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

ՀՊՄԿ-ի ընթացիկ գործունեության կառավարումն իրականացնում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընտրվող Գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենը պատասխանատու է ՀՊՄԿ-ի ընթացիկ գործունեությանը վերաբերող բոլոր հարցերի համար, բացառությամբ՝ այնպիսի հարցերի, որոնք գտնվում են Բաժնետերերի ընդհանուր ժողովի և Տնօրենների խորհրդի բացառիկ իրավասության ներքո: Գլխավոր տնօրենն ու Գլխավոր տնօրենի տեղակալը /իրավաբանական բաժնի ղեկավարը/ հանդիսանում են Տնօրենների խորհրդի անդամ:

ՀՊՄԿ-ի խորհուրդն ունի Ընկերության կայուն զարգացման գործունեությունը վերահսկելու դեր, այս հարցում նրան աջակցում են  տարբեր բաժիններ:

# ՉՊՄԿ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2022Թ



ՄԱԿ ԿԶՆ

# ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱ

## ԳՈՐԾԱՐԱՐ ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Իր գործունեության ընթացքում ՉՊՄԿ-ն փորձում է առաջնորդվել էթիկական, մասնագիտական ու իրավական ամենաբարձր չափանիշներով:
Ընկերության հիմնական նորմերն ու մոտեցումները ներկայացված են ՉՊՄԿ-ի Վարքագծային կանոններում և Մարդու իրավունքների վերաբերյալ Ընկերության քաղաքականությունում: Մեր նպատակն է՝ ապահովել վերոնշյալ հիմնական փաստաթղթերում արտացոլված պատասխանատու կորպորատիվ կառավարման կանոնների պարտաճանաչ կատարումը մեր բոլոր աշխատակիցների ու կառավարման մարմինների կողմից:
Ընկերության Վարքագծային կանոններն արտացոլում են աշխատանքային էթիկայի ու վարքագծային չափանիշների վերաբերյալ Ընկերության ակնկալիքներն ու դիրքորոշումը: Մասնավորապես մենք պահանջում և ակնկալում ենք, որ մեր բոլոր աշխատակիցներն ու ղեկավարությունն իրենց մասնագիտական ու անձնական վարքագծում, կղեկավարվեն նշված կանոններով, կիրականացնեն իրենց գործունեությունն օրենքին համապատասխան, իրենց գործընկերների և բոլոր շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններում կդրսևորեն հարգանք, քաղաքավարություն, ազնվություն, արժանապատվություն ու պարկեշտություն, կհարգեն այլոց արժեքները, մշակույթը, համոզմունքներն ու կրոնը, կարժևորեն իրենց հետ աշխատող անձանց կատարած աշխատանքն ու ներդրումը ընդհանուր գործում և, ի վերջո, կխուսափեն ամեն տեսակի ահաբեկումից, ոտնձգությունից և խտրականությունից:
Մենք հարգում, պաշտպանում և խթանում ենք մարդու իրավունքների վերաբերյալ Ընկերության քաղաքականությամբ սահմանված հիմնարար սկզբունքները, այդ թվում՝ հավասարության և արժանապատվության սկզբունքներն ու անձնական և գաղտնիության իրավունքները: Մենք ձգտում ենք համայնքների և շահագրգիռ կողմերի առավել ակտիվ ներգրավվածությանն ու մասնակցությանը, ինչպես նաև կողմնակից ենք արհմիություններ ստեղծելու ու կոլեկտիվ պայմանագրեր կնքելու գաղափարին:
ՉՊՄԿ-ում առկա են աշխատանքի, զարգացման և առաջխաղացման հնարավորություններ, որոնք առաջարկվում և ապահովվում են ըստ արժանիքների:
Ընկերությունը դեմ է ցանկացած տեսակի խտրականության, մասնավորապես՝ ռասայական, սեռական, կրոնական, էթնիկ կամ սոցիալական ծագման, համոզմունքների, մշակույթի կամ լեզվական, հաշմանդամության, տարիքի, քաղաքական հայացքների կամ այլ տեսակի խտրականության, ինչպես նաև չի հանդուրժում աշխատողի ազնվության և/կամ արժանապատվության նկատմամբ հարգանքի բացակայություն:
Մեր Ընկերության համբավն ու վստահելիությունը ձևավորվում են Ընկերության կողմից որդեգրված գործարար էթիկայի, ռազմավարական ուղղվածության ու աշխատողների վարքագծի շնորհիվ:
Աշխատակիցները պարտավոր են աջակցել Ընկերությանը՝ ամեն տեսակի ոտնձգությունների դեմ պայքարում: Ընկերության կողմից մշակված ահազանգման քաղաքականությունն ուղղված է նպաստելու ՉՊՄԿ-ի կողմից որդեգրված էթիկական վարքագծին, ինչպես նաև զարգացնելու իրավախախտումների մասին ժամանակին ու անհետևանք ահազանգելու մշակույթը: Աջակցման կամ կանխարգելման նպատակով ձեռնարկվող գործողությունների վերաբերյալ որևէ կասկած ունենալու դեպքում, աշխատակիցները պարտավոր են խորհրդակցել կայուն զարգացման գծով տնօրենի հետ:

# ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

GRI [2-23, 2-24, 205-3]

Մենք պարտավորվել ենք ստեղծել այնպիսի բիզնես էկոհամակարգ, որը կբացառի կոռուպցիան, և որը կապահովի պայմանագրային ու գույքային հարաբերությունների թափանցիկություն: ԶՊՄԿ-ի համոզմամբ՝ ընկերության տնօրենները, պաշտոնատար անձինք ու աշխատակիցները տեղյակ են այն մասին, որ կոռուպցիան հանդիսանում է լուրջ իրավախախտում, որը կարող է էապես ազդել ԶՊՄԿ-ի համբավի և գործունեություն ծավալելու թույլտվության վրա: Մենք մշակել ենք վերոնշյալ նպատակի պաշտպանությանն ուղղված քաղաքականությունների ու ընթացակարգերի համալիր համակարգ:

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ ՈՒ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

- Վարքագծային կանոնները սահմանում են ընկերությունում, շուկայում և երկրում գործելու էթիկական վարքագծի ու արհեստավարժության կանոնները:
- Հակակոռուպցիոն քաղաքականությունը սահմանում է ԶՊՄԿ-ի բոլոր տնօրենների, պաշտոնատար անձանց ու աշխատակիցների կողմից որևէ կոռուպցիոն արարք/գործելաոճ դրսևորելու արգելքը:
- Կայուն զարգացման քաղաքականությունը սահմանում է պատասխանատու գործելու և հաճախորդների ու հասարակության համար ողջամիտ լուծումներ առաջարկելու պարտավորությունը:

## ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

- Նախատեսվում է ստեղծել կոմիտե և այն կառավարել ղեկավարության կողմից, որի կազմի մեջ է մտնում նաև  Կայուն զարգացման տնօրենը,  և որի պարտականությունները սահմանված են համապատասխան քաղաքականություններում և ներառում են հակակոռուպցիոն քաղաքականության համապատասխանության մոնիտորինգ, դրա նրբությունների սահմանում, ենթադրյալ խախտումների հետաքննություն սկսելը, և հարկադիր մեխանիզմների կազմակերպում: Համագործակցելով գլխավոր տնօրենի հետ՝ Կոմիտեն առանցքային դեր է խաղում հնարավոր շահերի բախումների հասցեադրման և լուծման գործում:

## ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՅԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ

- Մենք դիտարկում ենք մատակարարման շղթան որպես մեր հիմնարար արժեքների տարածման միջոց, որի շնորհիվ հնարավոր է ձևավորել էթիկական վարքագծի և անվտանգ գործելաոճի սկզբունքներով գործող մեկ ամբողջականություն: Մեր գործընկերներից մենք ակնկալում ենք թափանցիկ և պատասխանատու մոտեցում, ինչը կապահովի համապարփակ ինտեգրում և կապացուցի մեր նվիրումը գլոբալ մակարդակով գործարար էթիկային ու կայուն գործարար գործելաոճին:

2022 թվականին ԶՊՄԿ-ն ընդլայնել է թափանցիկ ու ազնիվ բիզնես միջավայրի խթանմանն ուղղված իր պարտավորությունը: Կենտրոնացնելով ջանքերը էթիկական սկզբունքներ սերմանելու և զարգացնելու վրա՝ մեր կողմից ձեռնարկվել են կանխարգելիչ, մեղմացուցիչ և կայունացնող բնույթի ռազմավարական գործողություններ ու միջոցառումներ՝ ճկուն, թափանցիկ և էթիկական առումով առողջ գործառնական հիմք ստեղծելու նպատակով: Այս առումով 2022 թվականը կարևոր էր, քանի ոԱր ընկերությունը վերանայեց իր որոշ հիմնական քաղաքականությունները, այդ թվում՝ Հակակոռուպցիոն քաղաքականությունն ու Կորպորատիվ վարքագծի կանոնները: Զուգահեռաբար, վերանայվեց և համապատասխանեցվեց նաև բողոքարկման մեխանիզմը՝ այն առավել ներառական ու ճկուն դարձնելու նպատակով: 2023 թվականին մենք նախատեսում ենք ԶՊՄԿ-ի իրավաբանական բաժնի աջակցությամբ ու վերահսկողությամբ մշակել մեծ թվով քաղաքականություններ, ընթացակարգեր ու կանոնակարգող փաստաթղթեր:

## ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ և ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Առաջատար դիրքում մնալու համար մենք մշտապես իրականացնում ենք համեմատական վերլուծություններ՝ համադրելով մեր Ընկերության և տվյալ բնագավառի այլ առաջատարների ու մեր մրցակիցների կատարողականները: Բացի այդ, մենք մշտապես ուսումնասիրում ենք տվյալ բնագավառի մասնագիտական մրցանակաբաշխություններում մասնակցելու հնարավորությունները՝ ընդունելով էթիկական գործելաոճի կարևորությունը և փորձելով ոչ միայն ի ցույց դնել մեր ջանքերը, այլ նաև սահմանել մեր բնագավառի համար նոր ուղենիշներ:

2022 թվականի վերջին եռամսյակում մենք նախաձեռնեցինք արտաքին աուդիտ, որով ստուգվեց Ընկերության համապատասխանությունը ՄՖԿ-ի չափանիշներին, ՀՄՄԽ և ՄԱԿ-ի գլոբալ կոմպակտի պահանջներին: Մենք նախատեսում ենք ընդլայնել գնահատման շրջանակը՝ ներառելով Copper Mark-ի սկզբունքները: Արտաքին աուդիտի շրջանակներում մշակվեց գործողությունների պլան՝ նշված չափանիշներին լիովին համապատասխանելու համար: Անցկացված աուդիտը թույլ տվեց կատարել մեր քաղաքականությունների խորքային ուսումնասիրություն և ձևակերպել կարճաժամկետ նպատակներ: Յուրաքանչյուր տարի Ընկերությունում անցկացվում են տարատեսակ աուդիտներ՝ հայտնի արտաքին աուդիտորական կազմակերպությունների կողմից՝ մեր ձեռքբերումներն ու առաջընթացը գնահատելու և հաստատելու նպատակով:

Ներկայումս Ընկերությունում ստեղծվում է նաև մասնագիտական ուսումնական կենտրոն, որը հագեցած կլինի ժամանակակից սարքավորումներով: Հարուստ և բազմաբնույթ ուսումնական միջավայր ստեղծելու համար Ընկերությունը նախատեսում է ներգրավել արտաքին փորձագետների և մասնագետների:

Ստորև ներկայացված են մեր հիմնական կառավարման նպատակները, որոնք Ընկերության զարգացման այս փուլում մենք համարում ենք կարևոր և իրագործելի:

**ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՈՒՍՈՒՑՈՒՄ և ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

Մեր նպատակն է՝ ամբողջովին բավարարել հանքարդյունաբերական ոլորտի հիմնական ուսուցման կարիքները 2023 թվականի ավարտի դրությամբ:

**ԹԱՐՄԱՑՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄ**

Մեր նպատակն է ինտեգրել նոր որդեգրված քաղաքականությունները՝ մշտադիտարկելով դրանց իրականացման ընթացքն ու բացահայտելով հնարավոր խախտումները:

**ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ**

Մեր արժեքների պահպանման նպատակով 2024 թվականի կեսերին մենք նախատեսում ենք ստեղծել Համապատասխանության կոմիտե, որը կապահովի վերահսկողություն, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կառաջարկի ուղղիչ միջոցառումներ:

**ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ**

Մենք պարտավորվել ենք ապահովել GRI -ին համապատասխան կայուն զարգացման հաշվետվողականություն, ներառյալ, բայց ոչ միայն՝ Կլիմային առնչվող ֆինանսական հաշվետվողականության աշխատանքային խմբի (TCFD) շրջանակներում իրականացվող կանոնավոր հաշվետվողականությունը:

# ԲՍԿ ՆԿԱՏՄԱՄԲ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

## ԲՍԿ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

GRI [2-6]

Մեր կողմից ընդունվող որոշումների հիմքում ընկած են կայուն զարգացման գաղափարները, որոնք կազմում են մեր աշխատաոճի անբաժան մասը, քանի որ մենք ձգտում ենք ընդունել մեր կողմից ընդունվող յուրաքանչյուր որոշման ամբողջական ազդեցությունն ու հետևանքները:

Մենք փորձում ենք համադրել խելացի նորարարական գաղափարներն ու մեր աշխատակիցների, նրանց ընտանիքների, տեղական համայնքների, մեր հաճախորդների և, ընդհանուր առմամբ, գլոբալ շահերը, ինչպես նաև ապահովել առկա թանկարժեք ռեսուրսների առավելագույն օգտակարությունն ու պիտանելիությունը բոլոր նրանց համար, ովքեր ունեն դրա կարիքն ու արժևորում են այդ ռեսուրսները: Մենք ձգտում և աշխատում ենք ավելի լավ աշխատատեղեր և որակյալ կրթական ու բիզնես հնարավորություններ ստեղծել Ընկերության համար բարեկեցիկ ապագա ապահովելու նպատակով:

## ՄԵՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

**ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ ԵՆՔ ԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՈՒ ԱՄԵՆԱՄԵԾ ՊԱՀԱՆՋԱՐԿ ՈՒՆԵՑՈՂ ՄԵՏԱՂՆԵՐԻ, ԱՅՆ Է՝ ՊՂՆՁԻ և ՄՈԼԻԲԴԵՆԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՌԱՑԻՈՆԱԼ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԴՐԱ ԿԱՐևՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒ ԴԵԿԱՐԲՈՆԻԶԱՑԻԱՅԻ ԱՌՈՒՄՈՎ:**

Մենք շարունակում ենք առաջնորդվել ընկերության զարգացման ռազմավարությամբ և մշտապես փնտրում ենք մրցակցային առավելություններ ապահովող նորանոր աղբյուրներ՝ մեր շահագրգիռ կողմերի համար տվյալ ոլորտի առավելագույն ու լավագույն օգուտներն ու շահույթը ապահովելու նպատակով, ինչպես նաև ստեղծել ընդհանուր արժեքներ մեր համայնքների, բաժնետերերին ու գործունեության վայրը հանդիսացող երկրի (Հայաստանի), ինչպես նաև բոլոր մասնակիցների համար: Այս ամենը հնարավոր է իրականացնել միայն ազնվության, համագործակցության, թափանցիկության և փոխադարձ արժեքների վրա հիմնված իրական գործընկերության միջոցով:

# ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԸ

### ՈՐԱԿ

մենք կարևորում ենք պատշաճ որակ ապահովելու անհրաժեշտությունը, քանի որ այն հանդիսանում է գործողությունները, նախագծերը, բիզնես զարգացումն ու վարչարարությունը խթանող հիմնարար սկզբունք:

### ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

համապատասխան ոլորտում առաջատար լինելը պահանջում է նոր գաղափարների անվերջ որոնումներ: Այս որոնումը ներառում է ինչպես տեղում, այնպես էլ այլ վայրերում ձևավորվող գաղափարները:

### ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ընկերության ղեկավարությունն ընդունում և համաձայն է այն փաստի հետ, որ իր դերակատարումը չի սահմանափակվում մարդկանց ու գործունեության ղեկավարմամբ, այլ ենթադրում է պարտավորություն՝ իրենց պարտականություններին համահունչ առաջնորդություն դրսևորելու, ունենալու Ընկերության նպատակների իրագործման տեսլական և լինելու պատրաստ՝ ուղղորդելու մարդկանց: Որպես առաջնորդներ, նրանք նախագծում, մշակում և ապահովում են շարունակական ուղղորդում և մոտիվացիա:

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

վերջին հաշվով, ֆինանսական հաջողությունը բոլոր ձեռնարկված գործողությունների արդյունքն է և ձևավորվում է Ընկերության տեսլականի, արժեքների ու համակարգերի արդյունավետ իրականացման շնորհիվ:

Մեր կողմից արտադրվող հիմնական մետաղներն անչափ կարևոր են ապագայի համար և կարող են անփոխարինելի դեր խաղալ գլոբալ մարտահրավերների, օրինակ՝ կլիմայական փոփոխությունների, հաղթահարման գործում: Մենք կշարունակենք անդրադառնալ այն հարցերին, որոնք հրատապ և կարևոր են մեր աշխատողների, համայնքների և տվյալ տարածաշրջանի համար՝ փորձելով ապահովել դրական փոփոխություններ՝ ինչպես մեր ոլորտում, այնպես էլ տեղական ու պետական մակարդակներով: Առաջին անհրաժեշտության ռեսուրսների առկայությունը և Ընկերության արդյունավետ աշխատանքը՝ սոցիալական արժեքների ու կայուն զարգացման մեր պարտավորությունների հետ մեկտեղ, կօգնեն մեզ շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններում լինել առավել հետևողական, ապահովել շարունակական օգուտներ և եկամուտներ ու ստեղծել երկարաժամկետ արժեքներ մեր բաժնետերերի համար:

ՄԱԿ ԿԶՆ



2021-2022 թվականներին ԶՊՄԿ-ն թարմացրել էր իր ԲՍԿ ռազմավարությունը, ինչից հետո՝ 2022-2023թ., ակտիվորեն աշխատում էր ԲՍԿ քաղաքականության մշակման ու հաստատման վրա: Սա խոսում է կայուն զարգացմանն ու պատասխանատու գործելաոճին ուղղված ընկերության հանձնառության մասին, ինչն ապացուցում է կայուն զարգացման ու էթիկական վարքագծի կարևորությունն Ընկերության համար: Հաշվի առնելով գլոբալ մակարդակով ԲՍԿ նկատառումների աճը՝ մենք գիտակցում ենք, որ մեր շահագրգիռ կողմերը մեզանից ակնկալում են բնապահպանական ու սոցիալական խնդիրների լուծման ավելի արդյունավետ մեթոդներ՝ պատշաճ կառավարման պայմանով: Մեր Ընկերության Կայուն զարգացման քաղաքականությունը համապատասխանում է փոփոխվող բիզնես միջավայրի նպատակներին, իսկ ԲՍԿ պահանջներին համապատասխանելու համար մենք ստանձնել ենք հետևյալ պարտավորությունները՝

- համապատասխանել առկա օրենքներին, կանոնակարգերին ու կայուն զարգացման մասով միջազգային իրավական ակտերին
- իրականացնել արդյունավետ կառավարում՝ Խորհրդի և գործադիրի կողմից մեր սոցիալական ու բնապահպանական գործունեության վերահսկման պայմանով
- ներքին ու արտաքին շահագրգիռ կողմերի հետ ապահովել թափանցիկ հաղորդակցություն և ներգրավում Ընկերության կայուն զարգացմանը վերաբերող կատարողականում
- անընդհատ բարելավել Ընկերության գործունեության արդյունքները

Բոլոր շահագրգիռ կողմերի ակնկալիքներին ու պլաններին համապատասխանելու համար նախաձեռնել ենք մեր աշխատակիցների, գործընկերների ու շահագրգիռ կողմերի հետ հետադարձ կապ ապահովող կանոնավոր միջոցառումներ: Դրանց շնորհիվ մենք կարողանում ենք գնահատել իրականացվող քաղաքականությունների արդյունավետությունը, ձևավորել ներառական և, միևնույն ժամանակ, մեր բիզնես էկոհամակարգի կոլեկտիվ պատկերացումներն արտացոլող ռազմավարություններ: Շարունակական բարելավման շրջանակներում վերոնշյալ հետադարձ կապի միջոցառումներից ստացված տեղեկությունները մանրամասն հաշվի են առնվում և ներառվում են մեր ռազմավարություններում՝ դրանով իսկ ապահովելով համագործակցություն ու շահագրգիռ կողմերի կարիքների բավարարում:

Մեր ԲՍԿ ռազմավարության հիմնական գաղափարները հիմնված են կայուն զարգացման լավագույն միջազգային չափանիշների ու չափորոշիչների վրա:

### ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բնապահպանական կառավարման, պոչանքների կառավարման, ջրային ռեսուրսների նկատմամբ պատասխանատու մոտեցման և կենսաբազմազանության պաշտպանության մասով՝ ՄՖԿ, ՀՄՄԿ և ISO 14001 չափանիշների կատարում և համապատասխանության ապահովում 5 տարվա ընթացքում
- Արտադրական գործողություններով պայմանավորված ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված աշխատանքային պլան՝ առաջնորդվելով գիտահեն թիրախային ցուցանիշներով

ԶՊՄԿ-Ն ՆԱԽԱՏԵՍՈՒՄ Է ԱՊԱՀՈՎԵԼ COPPER MARK և UNGC ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ՝ ՎԵՐՈՆՇՅԱԼ ՊԱՀԱՆՋՆԵՐՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒՑ ՀԵՏՈ:

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

- Սոցիալական կառավարման ՄՖԿ և ՀՄՄԿ-ի չափանիշների ապահովում 5 տարվա ընթացքում
- Անցում բարեգործությունից դեպի կայուն սոցիալական զարգացում՝ պետական ռազմավարության համակարգմամբ
- ISO 45001 չափանիշի ներդրում

### ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- Ընկերությանը սպառնացող ռիսկերի գնահատման վերաբերյալ մոտեցման մշակում և իրագործում
- Կայուն զարգացման քաղաքականությունների մշակում և իրագործում
- Տվյալների բազայի և մշտադիտարկման համակարգերի թվայնացում
- Գործադիր կոմիտեի ստեղծում
- Միջազգային չափանիշներին համապատասխանող թափանցիկության ու հաշվետվողականության ապահովում

## ԶՊՄԿ-Ի ԱՐԺԵՇՂԹԱՆ

ԶՊՄԿ-ն հանդիսանում է ուղղահայաց ինտեգրում ունեցող ընկերություն, որը զբաղեցնում է ամբողջ աշխարհը ընդգրկող կարևորագույն մատակարարման շղթայի առաջնային դիրք: Պղնձի և մոլիբդենի խտանյութը բեռնատարներով տեղափոխվում է մոտ 350 կմ հեռավորության վրա գտնվող Երևան քաղաք: Այստեղ խտանյութերը վերաբեռնվում են և բեռնատարներով անցնում մոտ 700 կմ՝ հասնելով Վրաստանի Բաթում քաղաքի հիմնական նավահանգիստ: Այնուհետև, խտանյութերն առաքվում են աշխարհի մի շարք  նավահանգիստներ:
Մենք նախատեսում ենք ներդրումներ կատարել արժեշղթային այն ոլորտներում, որոնք մեզ համար կապահովեն ներդրումների դիմաց առավելագույն օգուտներ՝ միևնույն ժամանակ ձգտելով ամենաբարձր բնապահպանական, սոցիալական ու կառավարչական չափանիշներին:

**Հետազոտում**

Մեր երկրաբանները հետազոտում և հայտնաբերում են հանքանյութերի նոր պաշարներ՝ դրանով իսկ մեզ համար ապահովելով ժամանակակից պահանջներին բավարարող կյանք: Նոր հանքավայրեր բացահայտելու համար մենք օգտվում ենք առկա լավագույն փորձից ու առաջատար տեխնոլոգիաներից՝ դրանք այնուհետև անվտանգ ու ապահով եղանակով շահագործելու նպատակով:

**Ռեսուրսների գնահատում և պլանավորում**

Արդյունավետ, ոչ ծախսատար և բնապահպանական առումով անվտանգ շինարարություն ու շահագործում իրականացնելու համար մեր երկրաբաններն ու լեռնագործներն իրենց համատեղ աշխատանքում կիրառում են հանքի պլանավորման ժամանակակից համակարգեր:

**Արդյունահանում**

Առօրյա կյանքի համար անհրաժեշտ արտադրանքը ստանալու համար մեզ օգնում է Ընկերության ավելի քան 70 տարվա փորձը: Մենք նախագծել ենք հանքի շահագործման ու դրան հաջորդող բոլոր փուլերը՝ կիրառելով թափոնների կրճատման ու շրջակա միջավայրի պաշտպանության համար լավագույն տեխնոլոգիաներ: Աշխատանքի անվտանգությունը հանդիսանում է առաջնահերթություն, հետևաբար մեր ողջ աշխատանքի վերջնանպատակը զրոյական վնասի ապահովումն է:

**Վերամշակում**

Վերամշակելով հանքաքարը՝ մենք ստանում ենք սպառողի համար անհրաժեշտ արտադրանք: Մեր տեխնոլոգիաները թույլ են տալիս մեզ կրճատել թափոնները, խնայել ջուրը, բարձրացնել արդյունավետությունը, խթանել նորարություններ և, արժևորելով մեր արտադրանքը՝ նպաստել տարածաշրջանի տնտեսական զարգացմանը:

**Լոգիստիկա և խտանյութի վաճառք**

Մենք մատակարարում ենք մեր խտանյութը՝ կիրառելով լոգիստիկ ուղիների համակարգման և օպտիմալացման համար մշակված ամենավերջին տեխնոլոգիաները: Մանրակրկիտ ուսումնասիրելով պահանջարկն ու մեր արտադրանքի կիրառման եղանակները՝ մենք հաճախորդներին առաջարկում ենք կայուն մատակարարման սխեմաներ:

**Հանքի փակման պլան**

Մենք չենք սահմանափակվելու հանքի շահագործման ժամկետով, այլ նախատեսում ենք հանքի փակմանը հաջորդող միջոցառումներ, այն է ՝ հանքի տարածքի վերականգնում և իրական օգուտների ստեղծում տեղական համայնքների համար:

ՀՊՄԿ-ն գիտակցում է կայուն ապագա ապահովելու իր պարտավորությունը, հետևաբար, Ընկերությունը պարտավորություն է ստանձնել և աշխատում է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Միավորված ազգերի գլոբալ կայուն զարգացման նպատակների իրագործման, ինչպես նաև ՄԱԿ-ի գլոբալ կոմպակտի նախաձեռնության կիրառման ուղղությամբ՝ Ընկերության բիզնես գործունեությունում հետևողականորեն ինտեգրելով կայուն զարգացման սկզբունքները:

2022 թվականի ընթացքում, ռազմավարական կայուն զարգացում ապահովող հետևյալ գործողության ոլորտները շարունակում էին մնալ կարևոր մեզ համար.

1.Համայնքների զարգացում
Տես՝ “Համայնքի ներգրավում” բաժինը

2. Տեղական մակարդակով կրթություն և ներուժի ձևավորում
Տես՝ “Համայնքի ներգրավում” բաժինը

3. Աշխատողների առողջություն
Տես՝ “Աշխատողների առողջության և աշխատանքի անվտանգության ապահովում” բաժինը

4. Արդիականացում
Տես՝ “Պոչամբարներ” բաժինը

5. Ռեսուրսների պահպանում
Տես՝ “Շրջակա միջավայր” և “Կլիմայի փոփոխությանը հարմարվողականություն և դիմակայունություն” բաժինը

6. Ուղղահայաց ինտեգրում
տես “ՀՊՄԿ գործողություններ” բաժինը

7. Թվայնացում
Տես “Կառավարում” բաժինը

# ԲՍԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲՍԿ նկատմամբ մեր ինտեգրված մոտեցումը թույլ է տալիս դիտարկել ու ներառել մեր գործունեության բոլոր կողմերը, այն է՝

| ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ | ԿԱՌԱՎԱՐՈՒՄ |
|---|---|---|
| ֆիզիկական ու բնական միջավայրի հնարավոր և/կամ իրական զգալի փոփոխություններ, կլիմայական փոփոխություններ, բնական ռեսուրսների օգտագործում, կենսաբազմազանության վրա ազդեցություններ, աղտոտվածություն, ջրային ռեսուրսների սպառում և կառավարում և այլն | համապատասխան համայնքների և աշխատողների կյանքում հնարավոր և/կամ իրական փոփոխություններ, աշխատանքներ ու աշխատանքային պայմաններ, աշխատանքի անվտանգություն, բազմազանություն, ներառականություն, մարդու իրավունքներ, շահագրգիռ կողմերի կառավարում, բողոքարկման մեխանիզմներ, սոցիալական ներդրումներ և այլն | բիզնես արժեքներ և մշակույթ, կորպորատիվ կառավարման կառույցներ, մեր Ընկերության կառավարման ընթացակարգեր՝ կարևորագույն բնապահպանական ու սոցիալական քաղաքականություններ՝ ներառյալ, հոգաբարձուների խորհուրդ, էթիկական վարքագիծ, ռիսկերի կառավարում, թափանցիկ գործելաոճ, տեղեկատվության տարածում և այլն |

Մենք մշակել ենք մի շարք ներքին փաստաթղթեր, որոնք արտացոլում են կայուն զարգացման մասով մեր հանձնառությունները:

| | | | |
|---|---|---|---|
| Բ | ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | Արտացոլում է շրջակա միջավայրի վրա Ընկերության ազդեցությունը նվազագույնի հասցնելու մեր պարտավորությունը, ինչը հնարավոր է ապահովել գլոբալ գործունեության ընթացքում բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման և ռեսուրսների պատասխանատու կառավարման միջոցով | Տե՛ս "Շրջակա միջավայր" և "Կլիմայի փոփոխությանը հարմարվողականություն և դիմակայունություն" բաժինները |
| Ս | ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | Արտացոլում է մեր մոտեցումը շահագրգիռ կողմերի լայն շրջանակի, ինչպես նաև մեր աշխատակիցների իրավունքների և աշխատավայրում ու համայնքում դրանց պաշտպանության վերաբերյալ | Տե՛ս "Կառավարում" բաժինը |
| | ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | Արտացոլում է մեր «Զրոյական պատահար» տեսլականը | Տե՛ս "Աշխատողների առողջության և աշխատանքի անվտանգության ապահովում" |
| | ՏԵՂԱԿԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | Արտացոլում է տեղական մակարդակով զբաղվածություն ապահովելու մեր պարտավորությունը | Տե՛ս "Համայնք" բաժինը |
| | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | Հաստատում է այն փաստը, որ ազդակիր համայնքներին ու ընտանիքներին, ինչպես նաև Ընկերության աշխատակիցներին վերաբերող սոցիալական հարցերը, նրանց մասնակցությունը որոշումների կայացման գործում և դրանց պատշաճ կառավարումը առաջնահերթ նշանակություն ունեն Ընկերության համար | |
| | ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ | Նկարագրում է Ընկերությունում կիրառվող բողոքարկման ընթացակարգը | |
| Կ | ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ | Արտացոլում է աշխատանքային էթիկայի, վարքի և վարվեցողության չափանիշների վերաբերյալ մեր դիրքորոշումն ու ակնկալիքները | Տե՛ս "Կառավարում" բաժինը |
| | ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | Անդրադառնում է կայուն զարգացմանը վերաբերող ընդհանուր հարցերին և ապահովում է մեր կայուն զարգացման գործողությունների համար իրավական հիմք ու շրջանակ | |
| | ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | Տրամադրում է կոռուպցիոն, կաշառակերության կամ խարդախության դեպքերի կանխարգելման կամ վերացման վերաբերյալ գործնական ուղեցույցներ | |

ՄԱԿ ԿԶՆ



# ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

GRI [2-29]

Շահագրգիռ կողմերի ներգրավումը հանդիսանում է շարունակական գործընթաց, որն ուղղված է ուղակի և անուղակի շահագրգիռ կողմերի հետ փոխազդեցությանը, փոխադարձ վստահության վրա հիմնված հարաբերությունների կառուցմանն ու պահպանմանը, տեղեկատվության և գիտելիքների փոխանակմանը, շահագրգիռ կողմերի մտահոգությունների ու գանգատների լուծմանն ու տվյալ համայնքում հանք շահագործելու համար անհրաժեշտ հանրային աջակցության պահպանմանը:

ԶՊՄԿ-ն պարտավորվել է իր գործունեության ողջ ընթացքում, ազդակիր համայնքների և շահագրգիռ կողմերի հետ իրականացնել բաց, շարունակական ու նախաձեռնողական աշխատանք ու համագործակցություն (ազդակիր համայնքներին վերաբերող լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Համայնքների ներգրավում» բաժինը): Շահագրգիռ կողմերի ավելի լայն շրջանակների ներգրավումը կատարվում է տեղեկատվության հրապարակման, կանոնավոր խորհրդակցությունների, հանդիպումների ու տեղեկացված մասնակցության միջոցով:

Մենք որդեգրել ենք Սոցիալական, Մարդու իրավունքների պաշտպանության, առողջության և աշխատանքի անվտանգության, Տեղական մակարդակով զբաղվածության ապահովման քաղաքականություններ, ինչպես նաև Բողոքարկման մեխանիզմ ու Վարվեցողության կանոններ, որոնց իրականացման համար անհրաժեշտ է կառուցողական ու հետևողական ներգրավվածություն, մասնավորապես՝ մասնակցություն շահագրգիռ կողմերի հետ փոխադարձ կապի և որոշումների կայացման գործընթացներում: Մեր կողմից մշակվել է նաև լավագույն միջազգային չափանիշներին համապատասխանող Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան, որը դեռևս ենթակա է հաստատման: Փաստաթղթի նպատակն է ապահովել շահագրգիռ կողմերի հետ փոխադարձ վստահության և հարգանքի վրա հիմնված շարունակական ու զարգացող հարաբերություններ՝ ԶՊՄԿ-ի գործունեության բոլոր ոլորտներում և գործունեության ողջ ընթացքում:

ԶՊՄԿ-ի կայուն զարգացման թիմի կողմից ստեղծված սոցիալական գրանցման համակարգում ներառված են համայնքի անդամների վերաբերյալ էլեկտրոնային փաստաթղթեր/գրանցումներ և տվյալներ, ավելի լայն բնույթի խնդրագրեր/պահանջագրեր, գանգատների գրանցամատյան ու ժողովների արձանագրություններ/գրանցամատյան (լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Բողոքարկման մեխանիզմ» բաժինը): Համակարգի նպատակն է ապահովել և արձանագրել շահագրգիռ կողմերի ներգրավման, հետևողականության ապահովման և մշտադիտարկման գործընթացները: Կայուն զարգացման թիմը նախատեսում է շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացի հանդեպ լինել առավել հետևողական՝ սոցիալական կառավարման համակարգը թարմացնելու, վերլուծելու և պարբերաբար զեկուցելու միջոցով:

## ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՔԱՐՏԵԶՆ ՈՒ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մեր ձևակեպմամբ՝ շահագրգիռ կողմ են հանդիսանում «այն անձինք կամ խմբերը, որոնք կրում են Ծրագրի ուղղակի կամ անուղղակի ազդեցությունը, և որոնք կարող են ունենալ ծրագրի նկատմամբ որևէ շահագրգռվածություն և/կամ Ծրագրի վրա ներազդելու կարողություն՝ անկախ դրա դրական կամ բացասական լինելու հանգամանքից:»

ՄԱԿ ԿԶՆ

17 PARTNERSHIPS FOR THE GOALS

GRI  ձևակերպման համաձայն՝ շահագրգիռ կողմ են հանդիսանում այն անձինք կամ խմբերը, որոնք ունեն որևէ շահագրգռվածություն, կամ որոնք կրում են կամ կարող են կրել կազմակերպության գործունեության ազդեցությունը: Բացահայտելու համար GRI  ձևակերպմամբ սահմանված շահագրգիռ կողմերին, մենք սույն Հաշվետվության շրջանակներում անցկացրեցինք ուսումնասիրություն (մանրամասների համար տե՛ս «Հաշվետվության մասին» բաժինը), որի արդյունքում մենք ունեցանք շահագրգիռ կողմերի քարտեզ, որն արտացոլում է մեր ընկերության և նրա շահագրգիռ կողմերի միջև փոխադարձ ազդեցությունը:

Շահագրգիռ կողմերի վերլուծությունը կատարվել է երկու չափորոշիչներով.

- Շահագրգիռ կողմերի խմբերի ազդեցությունը ԶՊՄԿ-ի վրա
- ԶՊՄԿ-ի ազդեցությունը շահագրգիռ կողմեր հանդիսացող խմբերի վրա

Ուսումնասիրության արդյունքների համաձայն, սահմանվել են շեմեր՝ նշված չափորոշիչներով և միջին միավորներով: Հաշվի առնելով ուսումնասիրության արդյունքները, Կայուն զարգացման թիմի կողմից համապատասխանեցվել և ընդգծվել է «Հանքարդյունաբերություն և արդյունաբերություն», «Մեդիա» և «Հասարակական կազմակերպություններ» շահագրգիռ կողմերի կարևորությունը: Արդյունքում ձևավորվել է շահագրգիռ կողմերի քարտեզ, որը ներկայացված է ստորև, և որն արտացոլում է շահագրգիռ կողմերի վերջնական պատկերը:



## ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

GRI [2-29]

| ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄ | ՇԱՀԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ | ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ |
|---|---|---|
| Աշխատակիցներ | Պատշաճ աշխատանքային պայմաններ<br>Սոցիալական օգուտներ և երաշխիքներ<br>Մրցակցային աշխատավարձ<br>Առողջապահություն, անվտանգություն և բարեկեցություն<br>Ուսուցման և մասնագիտական առաջխաղացման հնարավորություններ<br>Ընկերության մշակույթ և համբավ<br>Արհմիություններին անդամակցելու և կոլեկտիվ պայմանագրեր կնքելու ազատություն | Կանոնավոր հանդիպումներ աշխատակիցների հետ<br>Ներքին շրջանառության համար տեղեկատվական թերթիկներ<br>Մարդու իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկություններ պարունակող պայմանագրային տեղեկատվություն<br>Բողոքարկման մեխանիզմներ<br>Տեղեկատվական վահանակներ<br>Ընկերության կողմից եռամսյակը մեկ անգամ թողարկվող ամսագիր<br>Անձնակազմի ժողովներ<br>Ընկերության կայքն ու սոցիալական մեդիա էջերը<br>Ուսումնական սեմինարներ, վերապատրաստման դասընթացներ ու ժողովներ |
| Ազդակիր համայնքներ, ազդակիր համայնքների բնակչություն | Համայնքի կենսագործունեության անվտանգություն<br>Սոցիալ-տնտեսական զարգացում<br>Տեղական մակարդակով զբաղվածություն<br>Համայնքային կրթություն<br>Հողի ձեռքբերման իրավունք, տեղահանում և վերաբնակեցում<br>Տեղական զարգացման օրակարգ<br>Մարդու իրավունքներ<br>Բնապահպանական կառավարում<br>Արտադրական օբյեկտների փակում<br>Պոչամբարի կառավարում | Պաշտոնական և ոչ պաշտոնական հանդիպումներ համայնքներում<br>Բնապահպանական ու սոցիալական ազդեցության գնահատման զեկույցներ, կառավարման պլաններ, մշտադիտարկման փաստաթղթեր<br>Բողոքարկման մեխանիզմներ<br>Տեղեկատվական վահանակներր<br>Ընկերության կայք ու սոցիալական մեդիայի էջեր<br>Տեղեկատվական թերթիկներ, տեղեկատվական վահանակներ<br>Բացատրական հանդիպումներ՝ փոխադարձ շահերն ու հետաքրքրության հարցերը քննարկելու նպատակով<br>Հայտարարություններ հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր մամուլի միջոցով<br>Համայնքի ֆոկուս խմբերի կանոնավոր հանդիպումներ (համայնքի հատուկ խմբերով)<br>Քաղաքացիների ընդունելություն ՀՊՄԿ-ի գրասենյակում<br>Տեղեկատվության փոխանակում համայնքի առաջնորդների և անդամների միջև, ոչ պաշտոնական հանդիպումներ, հասցեական այցելություններ, տեղեկատվական թերթիկների կամ պաշտոնական տեղեկագրերի տարածում և տրամադրում՝ Ծրագրի թարմացումներ և կարևոր իրադարձությունների վերաբերյալ ծանուցումներ |

| ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄ | ՇԱՀԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ | ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ |
| --- | --- | --- |
| Ազգային կառավարություն | Էթիկա և համապատասխանություն<br>Հանքարդյունահանման լիցենզիայի և հարակից պահանջների կատարում<br>Ազգային ու միջազգային զարգացման նպատակների խթանում<br>Հարկման քաղաքականություն<br>Գործառնական ու բնապահպանական կառավարում<br>Պոչամբարի կառավարում<br>Կլիմայական փոփոխություններ<br>Սոցիալ-տնտեսական զարգացում<br>Թափանցիկություն և մարդու իրավունքներ<br>Հանրային առողջապահություն Անվտանգություն | Բնապահպանական ու սոցիալական ազդեցության գնահատման զեկույցներ, կառավարման պլաններ<br>Կայուն զարգացման տարեկան հաշվետվություններ<br>Բնապահպանական մշտադիտարկում՝ իրավասու պետական մարմինների կողմից<br>Պաշտոնական նամակագրություն և կանոնավոր հանդիպումներ<br>Բաժնետերերի ժողովներ<br>Հանրային խորհրդատվական հանդիպումներ |
| Բաժնետերեր և ֆինանսական հաստատություններ | Կապիտալացում և լիկվիդայնության աճ<br>Շահույթի բաշխում<br>Ընկերության կայուն զարգացում<br>Բիզնես գործունեության արդյունավետություն ու կառավարման ռազմավարություն<br>Պատշաճ կորպորատիվ կառավարում<br>Կլիմայական փոփոխությունների ազդեցություններն ու ջերմոցային գազերի կառավարում<br>Օրենքների ու կանոնակարգերի պահանջների կատարում<br>Պետական վճարումների թափանցիկություն<br>Մարդու իրավունքներ | Բաժնետերերի ընդհանուր ժողով<br>Ընկերության կայք ու սոցիալական մեդիա<br>Պաշտոնական նամակագրություն և կանոնավոր հանդիպումներ<br>Կայուն զարգացման տարեկան հաշվետվություններ |
| Արհմիություններ | Պատշաճ աշխատանքային պայմաններ<br>Սոցիալական օգուտներ ու երաշխիքներ<br>Պատշաճ աշխատավարձեր<br>Նախընտրելի և անվտանգ աշխատանքային պայմաններ<br>Արհմիություններին անդամակցելու և կոլեկտիվ պայմանագրեր կնքելու ազատություն | Համատեղ հանձնաժողովներ, կոմիտեներ ու աշխատանքային խմբեր<br>Տեղեկատվական պաստառներ<br>Ընկերության կայք ու սոցիալական մեդիա |

| ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄ | ՇԱՀԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ | ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ |
| --- | --- | --- |
| Տեղական կառավարման մարմիններ | Էթիկա և համապատասխանություն<br>Հարկային քաղաքականություն<br>Գործառնական ու բնապահպանական կառավարում<br>Կլիմայական փոփոխություններ<br>Սոցիալ-տնտեսական զարգացում<br>Թափանցիկություն և մարդու իրավունքներ<br>Հանրային առողջապահություն<br>Անվտանգություն<br>Տեղական զբաղվածություն և գնումներ | Բնապահպանական ու սոցիալական ազդեցության գնահատման զեկույցներ, կառավարման պլաններ, մշտադիտարկման փաստաթղթեր<br>Պաշտոնական նամակագրություն<br>Պաշտոնական հանդիպումներ<br>Հանրային խորհրդատվական ժողովներ<br>Համայնք/ընկերություն համատեղ միջոցառումներ և նախագծեր<br>Ոչ պաշտոնական հանդիպումներ<br>Համայնքապետերի, այլ պաշտոնատար անձանց ու համայնքի առաջնորդների հետ հատուկ հանդիպումներ |
| Բիզնես և առևտուր (մատակարարներն ու կապալառուները ներառյալ) | Գնումային գործընթացների հասանելիություն<br>Պատասխանատու կապալ ու մատակարարում<br>Մատակարարման շղթայի թափանցիկություն<br>Օրենքների ու կանոնակարգերի պահանջների կատարում<br>Գնումների վրա ծախսեր<br>Մարդու իրավունքներ<br>Աշխատակիցների աշխատանքի անվտանգության, առողջության և բարեկեցության պաշտպանություն<br>Ջերմոցային գազերի արտանետումների կրճատում | Ընկերության կայք ու սոցիալական մեդիա<br>Պաշտոնական նամակագրություն<br>Պաշտոնական հանդիպումներ ու խորհրդատվություն<br>Գործընկերություն, տեղական գնումներ |
| Հաճախորդներ | Արտադրանքի որակ<br>Մատակարարման շղթայի թափանցիկություն<br>Մարդու իրավունքներ<br>Օրենքների ու կանոնակարգերի պահանջների կատարում<br>Արտադրությամբ պայմանավորված ջերմոցային գազերի արտանետումներ<br>Գործարքների տեղեկատվական աջակցություն<br>Առաքման պայմաններ<br>Ընկերության ԲՍԿ միջոցառումներ<br>Էկո-արդյունավետ արտադրության և բաշխման տեխնոլոգիաներ | Ընկերության կայք ու սոցիալական մեդիա, լուսաբանում պետական լրատվամիջոցներում<br>Բողոքարկման մեխանիզմ<br>Պայմանագրով սահմանված տեղեկատվություն<br>Պաշտոնական ու ոչ պաշտոնական հանդիպումներ<br>Պաշտոնական նամակագրություն<br>Տեղեկատվական թերթիկներ ու տեղեկատվական պաստառներ |

| ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄ | ՇԱՀԵՐԻ ՇՐՋԱՆԱԿ | ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ |
| --- | --- | --- |
| Հանքարդյունաբերություն և արդյունաբերություն | Մարդու իրավունքներ<br>Սոցիալական պատահարներ<br>Հանրային առողջապահություն<br>Գործառնական և բնապահպանական կառավարում<br>Պոչամբարի կառավարում Արտադրական օբյեկտների փակում/տարածքի վերականգնում<br>Սոցիալ-տնտեսական զարգացում<br>Պետական վճարումների թափանցիկություն<br>Անվտանգություն և քաղաքացիական հասարակության հետ համագործակցում<br>Օրենքների և կանոնակարգերի պահանջների կատարում | Ընկերության կայք ու սոցիալական մեդիա, լուսաբանում համապետական ծածկույթով լրատվամիջոցներում<br>Կանոնավոր հանդիպումներ՝ համակարգում, տարբեր թեմաներով համատեղ խորհրդակցություններ<br>Ոլորտի լավագույն միջազգային փորձի ներդրմանն ուղղված համատեղ ջանքեր |
| Հայաստանի հանքագործների ու մետալուրգների միություն | Մարդու իրավունքներ<br>Սոցիալական պատահարներ<br>Հանրային առողջապահություն<br>Գործառնական և բնապահպանական կառավարում<br>Պոչամբարի կառավարում<br>Արտադրական օբյեկտների փակում/տարածքի վերականգնում<br>Սոցիալ-տնտեսական զարգացում | Ընկերության կայքն ու սոցիալական մեդիայի էջեր<br>Կանոնավոր հանդիպումներ՝ համակարգում, տարբեր թեմաներով համատեղ խորհրդակցություններ<br>Գործընկերություն<br>Ոլորտի լավագույն միջազգային փորձի ներդրմանն ուղղված համատեղ ջանքեր |

# ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՏԱՐԱՏԵՍԱԿ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐՈՒՄ

GRI [2-28]

Մենք ակտիվորեն մասնակցում ենք Հայաստանի հանքարդյունաբերական բնագավառի ապագայի ձևավորմանը՝ ազգային ու միջազգային մակարդակով ոլորտի շուրջ ընթացող  քննարկումներին մասնակցելու միջոցով: Ոլորտի հայտնի միություններում ու իրավապաշտպան կազմակերպություններում մեր անդամակցությունն արտացոլում է թափանցիկություն, էթիկական բիզնես գործելաոճ և կայուն զարգացում ապահովելու մեր հանձնառությունը:

Մենք հանդիսանում ենք հանքարդյունաբերական ոլորտի հրատապ հարցերի քննարկման հարթակ ու մասնագիտական կառույց հանդիսացող Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության  (ՀՀՄՄ) ակտիվ անդամ, իսկ  ԶՊՄԿ-ի գլխավոր տնօրենի առաջին տեղակալը՝ ՀՀՄՄ-ի նախագահ: Տվյալ կառույցում մասնակցությունը մեզ տալիս է ոչ միայն մեր գործընկերների հետ համագործակցելու հնարավորություն, այլ նաև թույլ է տալիս մասնակցություն ունենալ հանքարդյունաբերական ոլորտին անմիջականորեն վերաբերող քաղաքականությունների ու կանոնակարգերի ձևավորմանը: Քննարկումներին ակտիվորեն մասնակցելու, օրենսդրական նախագծերն ուսումնասիրելու և մեր կոլեկտիվ կարծիքները կառավարությանն ու համապատասխան մարմիններին ներկայացնելու միջոցով՝ մենք փորձում ենք ստեղծել պատասխանատու և կայուն հանքարդյունաբերության համար անհրաժեշտ օրենսդրական միջավայր:
ՀՀՄՄ-ում ունեցած մեր ակտիվ դերակատարումից բացի, մենք հավատարիմ ենք նաև Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությամբ (ԱՃԹՆ) սահմանված սկզբունքներին ու չափանիշներին: ԱՃԹՆ-ի շահագրգիռ անձանց բազմակազմ խմբում մեր մասնակցությունը հանդիսանում է հանքարդյունաբերական ոլորտի թափանցիկության ու հաշվետվողականության գաղափարներին մեր նվիրման վառ ապացույց: Նման կազմակերպությունում մասնակցությունը պահանջում է մեզանից ԱՃԹՆ-ի գործընթացների ուղղորդում, մշտադիտարկում և մասնակցություն՝ գնահատման ու որոշումների կայացման գործընթացներում, ինչպես նաև արդյունահանող ոլորտի վերաբերյալ հանրային քննարկումների նախաձեռնում: Նման համագործակցության շնորհիվ մենք կարողանում ենք իրականացնել մեր ժողովրդին պատկանող բնական ռեսուրսներից ստացվող եկամուտների պատասխանատու կառավարում՝  հօգուտ Հայաստանի զարգացման:
Նման կառույցներում ու նախաձեռնություններում մեր ակտիվ անդամակցությունն ու մասնակցությունը արտացոլում է ոլորտի առաջնորդության, համագործակցության, թափանցիկության և պատասխանատու ու կայուն հանքարդյունաբերության նկատմամբ ԶՊՄԿ-ի նվիրումը: Մենք համոզված ենք, որ մեր ակտիվ մասնակցությունը նման խմբերում ոչ միայն կդառնա շարունակական բարելավումների խթան, այլ նաև կնպաստի հանքարդյունաբերության կայունությանն ու առաջընթացին ինչպես Հայաստանում, այնպես էլ ողջ աշխարհում:
2022 թվականին մենք միացանք Հայաստանի մեկ այլ կարևոր բիզնես միավորմանը, այն է՝ Հայ-Բրիտանական գործարարության պալատին, որը կապերի հաստատման և լոբբիստական հարթակ է և միավորում է Հայաստանում գործող առաջատար ընկերություններին:

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

ԶՊՄԿ-ի տնտեսական ազդեցությունը չի սահմանափակվում տեղական մակարդակով, այլ տարածվում է ողջ Հայաստանով ու աշխարհով՝ ստեղծելով ինչպես հնարավորություններ, այնպես էլ մարտահրավերներ: Հաշվի առնելով այս ամենը՝ մեր կողմից նախաձեռնվում են ռազմավարական քայլեր՝ ստեղծելու համար այնպիսի ապագա, որտեղ Ընկերության զարգացումն անքակտելիորեն փոխկապակցված կլինի համայնքների բարեկեցության, ինչպես նաև ընդհանուր տնտեսական աճի հետ:
Դինամիկ փոփոխվող տնտեսական իրողությանը համապատասխանելու համար՝ ԶՊՄԿ-ն շարունակաբար զարգանում է հետևյալ կերպ՝

**Մատակարարման շղթայի ընթացակարգերի ամրապնդում.**
Հաշվի առնելով բացասական տնտեսական հետևանքների հավանականությունը՝ մենք վերանայեցինք մատակարարման շղթայի կառավարման համակարգը էթիկական ու տնտեսական տեսանկյունից շահավետ գործընկերություն ապահովելու նպատակով:

**Համայնքամետ տնտեսական պլանավորում.**
2021 թվականից ի վեր, տնտեսական պլանավորման ուղղվածությունը փոխվում է՝ դառնալով առավել տեղայնացված և ապահովելով անմիջական համայնքի՝ ԶՊՄԿ-ի գործունեությունից, առավել ուղղակիորեն ստացվող օգուտներ:

**Աշխատակիցների վերապատրաստման ծրագրերի բարելավում.**
Աշխատակիցների վերապատրաստման ընթացակարգի վերանայումը թույլ կտա ապահովել աշխատակիցների բարձր մասնագիտացումն ու որակավորումը՝ դրանով իսկ նպաստելով ինչպես առանձին աշխատողի տնտեսական բարեկեցությանն, այնպես էլ Ընկերության ընդհանուր արդյունավետությանը: 2023 թվականին նախատեսվում է բացել ուսումնական կենտրոն, որը կզբաղվի ԶՊՄԿ-ի աշխատակիցների մասնագիտական զարգացման հարցերով:

ՄԱԿ ԿԶՆ



GRI [203-1, 203-2]

## ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեղական մակարդակ

### ՉԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ.

ԶՊՄԿ-ն հանդիսանում է տարածաշրջանի կարևորագույն գործատուն՝ ապահովելով աշխատատեղեր ու պահպանելով տարածաշրջանի սոցիալ-տնտեսական կայունությունը:

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ՈՒ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ

80.2 մլն ԱՄՆ դոլար

### ՏԵՂԱԿԱՆ ԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒՄ.

Համագործակցելով տեղական մատակարարների ու օժանդակ ծառայությունների հետ՝ մեր ներկայությունը խթանում է տարածաշրջանում գործող փոքր և միջին ձեռնարկությունների եկամտաբերությունը:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՆՈՒՄ Է

մինչև 15,000

### ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ.

Որպես համայնքում գործող առաջատար ընկերություն՝ ԶՊՄԿ ֆինանսավորում է տարբեր ենթակառուցվածքային ծրագրեր՝ ճանապարհներ ու դպրոցներ, որոնք համայնքի համար ապահովում են երկարաժամկետ զարգացման ազդեցություն:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

36 մլն ԱՄՆ դոլար

Պետական մակարդակ

### ՀՆԱ ԱՃԻ ԽԹԱՆՈՒՄ.

ԶՊՄԿ-ի գործունեությունն էապես ազդում է Հայաստանի համախառն ներքին արդյունքի վրա, քանի որ Ընկերությունն իր արտահանումների շնորհիվ հանդիսանում է արտարժույթի հիմնական խոշոր մատակարարը՝ դրանով իսկ ամրապնդելով երկրի տնտեսական կայունությունը:

ԵԿԱՄՈՒՏ

822.1 մլն ԱՄՆ դոլար

### ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐ.

Հանդիսանալով խոշորագույն հարկատու և ձեռնարկություն՝ մեր Ընկերությունը վճարված հարկերի շնորհիվ ապահովում է կայուն պետական եկամուտներ:

ՊԵՏԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

220.6 մլն ԱՄՆ դոլար

## ԱՎԵԼԻ ԼԱՎ ԱՊԱԳԱ ՍՏԵՂԾԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ

Տեղական մակարդակ

Համայնքի տնտեսական աճի խթանում. Հաջորդող հինգ տարիների ընթացքում համայնքային զարգացման ծրագրերի շեշտակի, այն է՝ 20%-ով ավելացումը խոսում է տեղական տնտեսությունը զարգացնելու մեր պատրաստակամության մասին, ինչը ենթադրում է նոր աշխատատեղեր ու որակավորման բարձրացում:

Համայնքում առկա տաղանդների աջակցություն. Մենք հաստատուն ենք տեղացի տաղանդավոր անձանց աջակցելու և անմիջապես տեղում ուսումնական և տնտեսական զարգացման համար հարթակ ստեղծելու մեր որոշման մեջ:

"Ոսկե ստանդարտ" մակարդակին համապատասխանող մատակարար ցանցի ձևավորում. Մեր մատակարարներին "Ոսկե ստանդարտ" մակարդակին հասցնելու հիմնարար նախաձեռնությունը հանդիսանում է մեր ռազմավարության անկյունաքարը: Սա զուտ ցանկություն չէ, այլ իրական հանձնառություն՝ ստեղծելու այնպիսի մատակարարման շղթա, որը կապահովի տնտեսական ճկունություն ու բարգավաճում՝ ստեղծելով ավելի լայն և մեծ տնտեսական առավելություններ:

Ռազմավարական ենթակառուցվածքային զարգացումներ. Մեր գործունեության ընդլայնման հիմքում ընկած են ենթակառուցվածքային ներդրումներ, որոնք սերտորեն կապված են տնտեսական աճի հետ:

Պետական մակարդակ

Եկամուտների դիվերսիֆիկացում. Ճանապարհ հարթելով դեպի զարգացող և նոր շուկաներ՝ մենք ձգտում ենք աշխարհի մակարդակով ապահովել տնտեսական կենսունակության ալիքային ու շղթայական ազդեցություն՝ դրանով իսկ ստեղծելով նոր հնարավորություններ և դիվերսիֆիկացնելով ստացվող եկամուտները:

Հանքարդյունաբերական տեխնոլոգիաների արմատական փոփոխություն. Մենք փորձում ենք պահպանել պատշաճ նորարարական միջավայր, քանի որ գիտահետազոտական ու զարգացման ծրագրերում կատարվող ներդրումները ունակ են արմատական փոփոխություններ առաջացնել հանքարդյունաբերական տեխնոլոգիաների ոլորտում՝ դարձնելով մեզ բնագավառի առաջատար և նպաստելով պետական մակարդակով տնտեսական բարեկեցությանը:

Տնտեսական ազդեցության ամբողջականություն. Այս նախաձեռնության միջոցով մենք ձգտում ենք տնտեսական օգուտներ ապահովել տարբեր բնագավառներում՝ ստեղծելով այնպիսի մատակարարման շղթա, որը կխթանի համապարփակ զարգացում և կապահովի դրական ազդեցություններ ավելի բարձր մակարդակով:

ՄԱԿ ԿԶՆ

# ԿԱՅՈՒՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱ

GRI [408-1]

Մենք ցանկանում ենք ապահովել մեր արտադրանքի կայունությունը բոլոր հնարավոր առումներով և փորձում ենք համապատասխանել ռացիոնալ բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանման պահանջներին մեր գործունեության բոլոր փուլերում՝ երկրաբանական հետախուզական աշխատանքներից մինչև նախագծում, շինարարություն և փաստացի արդյունահանում:

Մեր կողմից կիրառվող գործիքակազմը թույլ է տալիս կատարել մատակարարների ճիշտ ընտրություն՝ ղեկավարվելով պատասխանատու բիզնես գործելաոճին ու չափորոշիչներին համապատասխանելու պահանջով: Մասնավորապես, մենք ունենք կապալառուների կառավարման ընթացակարգ, որով իրականացվում է ԲՍԿ գործընթացների և կապալառուների մասով ԶՊՄԿ-ի պահանջների կառավարում:

GRI [204-1]

Մենք ընդունում ենք նաև ազդակիր համայնքների համար սոցիալ-տնտեսական հնարավորություններն ընդլայնելու մեր պարտավորությունը: 2022 թ. կատարողական ցուցանիշների համաձայն, գնումների (ապրանքներ և ծառայություններ) համար նախատեսված բյուջեի 59% ծախսվել է Հայաստանի Հանրապետության շուկաներում: Միևնույն ժամանակ, մատակարարների թվի մասով, Հայաստանյան գործընկերները կազմում են Ընկերության մատակարարների ընդհանուր թվի 65% (տե՛ս Հաշվետվության "Տեղական մատակարարներ" բաժինը):

ԶՊՄԿ-ն իր մատակարարներից ու կապալառուներից պահանջում և ակնկալում է հայաստանյան բնապահպանական օրենքների կատարում և Ընկերության ներքին քաղաքականությունների ու ընթացակարգերի պահպանում: Այս ամենի շնորհիվ հնարավոր է դառնում ապահովել մատակարարման ողջ շղթայի բնապահպանական չափանիշների ամբողջականությունն ու միատարրությունը: Գիտակցելով հանքարդյունաբերությանը բնորոշ ռիսկերը՝ ԶՊՄԿ-ն կարևորում է ոչ միայն իր անմիջական աշխատակիցների, այլ նաև իր մատակարարների ու կապալառուների աշխատանքի անվտանգության  ապահովման հարցերը: ԶՊՄԿ-ի կողմից մշակվել է Աշխատանքի անվտանգության քաղաքականություն, որի շնորհիվ հնարավոր է ապահովել գործընթացում ներգրավված բոլոր կողմերի կենսագործունեության անվտանգությունն ու բարեկեցությունը: Մենք մեր բոլոր կապալառուներից ու մատակարարներից ակնկալում ենք աշխատանքի անվտանգության մասով սահմանված տեղական կանոնակարգերի խիստ կատարում, ինչպես նաև Ընկերության աշխատանքի  անվտանգության չափանիշների ապահովում: Սա ենթադրում է աշխատանքի անվտանգության չափորոշիչների պահպանում և կատարում նրանց աշխատանքի վայրից կամ մատուցվող ծառայության բնույթից անկախ:

ԶՊՄԿ-ն վերահաստատում է ազնվության, արհեստավարժության և օրինականության սկզբունքներին իր անփոփոխ նվիրումը: Ընկերության Վարքագծի կանոնների համաձայն, ԶՊՄԿ-ի հետ առնչվող յուրաքանչյուր անձ՝ սովորական աշխատողից մինչև տնօրեն, բիզնես գործընկեր, մատակարար կամ ծառայություն մատուցող կողմ, պարտավոր է պատշաճ ու պատասխանատու ձևով պահպանել նշված կանոններն ու դրույթները:

Մեր Ընկերությունում կիրառվող զբաղվածության քաղաքականություններն ու մատակարարների ընտրության ընթացակարգերը միտված են կրճատելու բոլոր այն ռիսկերը, որոնք կապված են մեր մատակարարների ու գործընկերների շրջանում մանկական աշխատուժի կիրառման կամ վտանգավոր աշխատանքում ներգրավելու դեպքերի հետ: Մեզ մոտ գործում են հաղորդակցության հատուկ միջոցներ, որոնց միջոցով հնարավոր է ահազանգել երեխաներին աշխատանքներում ներգրավելու դեպքերի մասին, ինչն ապահովում է հետևողական քայլեր և մանրակրկիտ հետաքննություն:

# ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ

## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
GRI [2-30]

ԶՊՄԿ-ն հանդիսանում է բարձր սոցիալական պատասխանատվություն ունեցող գործատու, որը դիտարկում է իր աշխատակիցներին որպես կարևորագույն և հիմնարար արժեք: Մեր առաջնային նպատակն է՝ ստեղծել անվտանգ և ապահով աշխատանքային միջավայր, պահպանել մեր աշխատակիցների իրավունքներն ու ազատությունները, խրախուսել նրանց և բացահայտել ու օգտագործել նրանց ողջ ներուժը:

2022 թ. ԶՊՄԿ-ի կողմից մշակվել է Տեղական զբաղվածության քաղաքականություն, ինչպես նաև թարմացվել են Վարքագծային կանոններն ու Ընկերության այլ քաղաքականությունները՝ համապատասխան ոլորտում գործունեության չափանիշները բարելավելու և ներքին աշխատանքային կանոններ ապահովելու նպատակով: Ստորև ներկայացված են այն սկզբունքները, որոնք ընկած են աշխատակիցների կառավարման հիմքում, մասնավորապես՝

- Պատշաճ և անվտանգ աշխատանքային պայմանների ապահովում՝ կարևորելով ողջ աշխատակազմի համար աշխատավայրում առողջության ու անվտանգության պահպանման անհրաժեշտությունը
- Մարդու իրավունքների, այդ թվում՝ խտրականության բացառման սկզբունքի, ինչպես նաև արհմիություններ կազմելու և նման կազմակերպություններում անդամակցելու ազատության պահպանում
- Բոլոր աշխատակիցների համար հավասար հնարավորությունների ստեղծում, ինչը թույլ կտա վերջիններիս լիովին օգտագործել սեփական ներուժն ու խթանել մասնագիտական աճը
- Աշխատողների խրախուսում՝ ինչպես նյութական, այնպես ոչ նյութական խթանների ու լրացուցիչ արտոնությունների միջոցով:

ՄԱԿ ԿԶՆ

## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

**Մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականություն**

Ընկերության Մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականությունը միտված է գլխավորապես մեր աշխատակիցների իրավունքների պահպանմանը՝ կարևորելով, մասնավորապես, այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ աշխատանքի տևողություն /աշխատանքային ժամեր/, աշխատավարձ ու արտոնություններ Աշխատակիցների կառավարման գործընթացը կանոնակարգող հիմնական փաստաթղթեր:

**Տեղական զբաղվածության ապահովման քաղաքականություն**

Որդեգրելով և առաջնորդվելով մի շարք միջազգային արձանագրություններով, որոնցից են օրինակ՝ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակ 8-ն ու Աշխատանքի միջազգային կազմակերպության նորմերը՝ մենք աշխատում ենք խթանել կայուն տնտեսական զարգացումն ու ապահովել պատշաճ աշխատանք բոլորի համար: ԶՊՄԿ-ն անչափ կարևորում է տեղական համայնքների զարգացումը՝ ձգտելով ապահովել նախ և առաջ տեղական համայնքների զբաղվածությունը և ներգրավելով արտաքին մասնագետներին՝ միայն տեղական մակարդակով անհրաժեշտ կադրերի բացակայության դեպքում:

**Կապալառուների կառավարման ընթացակարգ**

Մեր կապալառուների աշխատանքի անվտանգության և բարեկեցության ապահովումը նույնչափ կարևոր է մեզ համար, որքան որ մեր աշխատակիցներինը: Ընկերության համապատասխան ղեկավարները պատասխանատու են և պարտավոր են հետևել իրենց իրավասության ներքո գործող կապալառուների համապատասխանությանը մեր կողմից սահմանված բարձր չափանիշներին: Բացի այդ, մեր համապատասխան բաժինները, այդ թվում՝ աշխատավայրում  անվտանգության և բնապահպանության բաժինը, պարտավոր է ապահովել կապալառուների համապատասխանությունը մեր չափանիշներին ու չափորոշիչներին:

Կադրային /մարդկային ռեսուրսների/ քաղաքականության մասով, Ընկերությունը՝ իր Վարքագծի կանոններով սահմանված բարձր չափանիշներից բացի, հավատարիմ է մնում նաև իր հիմնարար արժեքներին, այն է՝ հարգանքի, ազնվության, բաց և թափանցիկ գործելաոճի սկզբունքներին: Աշխատանքային պայմանագիր կնքելուց առաջ յուրաքանչյուր աշխատող պարտավոր է ծանոթանալ Ընկերության հիմնական կանոնակարգերին, այդ թվում՝ Վարքագծի կանոններին, որը սահմանում է բոլոր աշխատողների համար պարտադիր վարքագծային էթիկայի չափանիշներ: Մարդկային ռեսուրսների բաժինը պարտավոր է վարել թափանցիկ հավաքագրման քաղաքականություն՝ փորձելով տեղի համայնքների համար ապահովել հնարավորինս շատ աշխատանքային հնարավորություններ: Բացի այդ, տվյալ բաժինը զբաղվում է նաև աշխատակիցներից ստացված գանգատների ու բողոքների ուսումնասիրմամբ՝ սերտորեն համագործակցելով Կայուն զարգացման տնօրինության հետ, որը վերահսկում է ՄՌ քաղաքականությունների կատարման ընթացքն ու շահագրգիռ կողմերից ստացված արձագանքները, ինչպես նաև վարում է առկա մասնագետների թարմացվող գրանցամատյանն ու կապ պահում ՄՌ բաժնի հետ:



## ՉԽԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

Մենք համարում ենք, որ մեր մարդկային ռեսուրսները հանդիսանում են մեր ամենաարժեքավոր ակտիվը, հետևաբար, կայուն, պատասխանատու և նվիրյալ աշխատուժ ձևավորելու մեր հանձնառությունն արտացոլվում է Ընկերության կողմից արձանագրված արդյունքներում: Մենք պարտավորվել ենք ապահովել նպաստավոր և լիարժեք աշխատանքային միջավայր, որը թույլ կտա ձևավորել երկարաժամկետ աշխատանքային հարաբերություններ՝ բավարարելով բոլոր կողմերի պահանջները:
Մենք հպարտությամբ կարող ենք արձանագրել այն փաստը, որ հաշվետու տարվա ընթացքում կարողացել ենք պահպանել մեր աշխատուժը՝ առանց աշխատողների թվի զգալի փոփոխության: Վերջին տարիների ընթացքում Ընկերության աշխատողների հոսունության մակարդակը մշտապես եղել է 6%-ից ցածր:




**Ընկերության աշխատակիցների հանդեպ ստանձնած մեր պարտավորությունը մնում է անփոփոխ: Մենք կարևորում ենք անվտանգ աշխատավայր ստեղծելու և թափանցիկ աշխատանքային պայմաններ սահմանելու, ինչպես նաև աշխատանքային պարտականությունների, պայմանների, վարձատրության չափի, արձակուրդների ու այլ նմանատիպ հարցերի վերաբերյալ հասկանալի պայմանագրային ձևակերպումներ տալու անհրաժեշտությունը:**

ՁՊՄԿ-ն հպարտ է, որ կարողանում է իր աշխատակիցներին առաջարկել ոլորտի արդյունաբերական չափանիշներին ու տեղական աշխատանքային շուկայի պահանջներին բավարարող մրցակցային վարձատրության փաթեթներ: Մենք խստորեն կատարում ենք օրենքների բոլոր պահանջները, որոնք վերաբերում են աշխատանքային ժամերին, արտաժամյա աշխատանքին և աշխատանքային արտոնություններին/փոխհատուցումներին, ինչպես նաև համապատասխանում ենք կոլեկտիվ աշխատանքային պայմանագրերով սահմանված բոլոր չափորոշիչներին: Մեր աշխատողների համար արդարության սկզբունքի վրա հիմնված բավարար վարձատրության ապահովումը մեր Ընկերության աշխատանքային հարաբերությունների հիմնարար սկզբունքներից մեկն է: ՁՊՄԿ-ի աշխատակիցների 99% անդամակցում է արհմիությանը, որի նպատակն է ապահովել պատշաճ աշխատանքային պայմաններ և պաշտպանել աշխատողների իրավունքները՝ այդ թվում նաև լրացուցիչ արտոնություններ սահմանելու միջոցով: ՁՊՄԿ-ի արհմիությունը Ընկերության աշխատակիցներին տրամադրում է միանվագ գումար հատուկ առիթներով, այդ թվում՝ ամուսնության, երեխայի ծննդյան, զինվորական ծառայության, ինչպես նաև ընտանիքի անդամի մահվան դեպքերում: Կյանքի կարևոր առիթների կապակցությամբ աշխատակիցներին աջակցելու այս ավանդույթը մեկ անգամ ևս արտացոլում է աշխատակիցների բարեկեցությունն ապահովելու Ընկերության պատրաստակամությունը:




GRI [401-2]

ՁՊՄԿ-ի լրիվ դրույքով աշխատող աշխատակիցները ստանում են ստանդարտ առավելությունների փաթեթներ, մինչդեռ ոչ լրիվ դրույքով աշխատողներն ու խորհրդատվական ծառայություններ մատուցող աշխատակիցները չեն օգտվում նույնպիսի արտոնություններից: ՁՊՄԿ-ն իր աշխատակիցներին ու նրանց ընտանիքի անդամներին առաջարկում է բժշկական ապահովագրություն և ծառայություններ, բացի այդ նրանք կարող են օգտվել ՁՊՄԿ-ի բարեգործական հիմնադրամից, որն առաջարկում է աջակցություն՝ բժշկական ապահովագրությամբ չհատուցվող ծախսերը հոգալու համար: Անհրաժեշտ է նշել, որ մեր աշխատակիցների 99%-ը լրիվ դրույքով աշխատող անձինք են: Բացի այդ, Ընկերությունն իր բոլոր աշխատակիցներին տրամադրում է երեխայի խնամքի համար արձակուրդ, որը համարվում է ստանդարտ արտոնություն:

GRI [401-3]

| Ցուցանիշներ | Ընդամենը | Տղամարդ | Կին |
|---|---|---|---|
| Երեխայի խնամքի արձակուրդ ստանալու իրավունք ունեցող աշխատակիցների թիվը | 35 | 1 | 34 |
| Երեխայի խնամքի արձակուրդից օգտված աշխատակիցների թիվը | 31 | 1 | 30 |
| Հաշվետու ժամանակահատվածում, երեխայի խնամքի արձակուրդից հետո աշխատանքի վերադարձած աշխատակիցների թիվը | 20 | 0 | 20 |
| Երեխայի խնամքի արձակուրդից հետո աշխատանքի վերադարձած և առնվազն 12 ամիս աշխատած աշխատակիցների թիվը | 25 | 0 | 25 |
| Աշխատակիցների պահպանման գործակիցը | 1.25 | __ | 1.25 |

## ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

GRI [404-1]

ՉՊՄԿ-ն կարևորում է իր աշխատակիցների մասնագիտական զարգացման անհրաժեշտությունն ու ակտիվորեն խրախուսում է նրանց մասնագիտական աճն ու որակավորումը: Բացի այդ, աշխատակիցների աշխատանքային արդյունավետության ու մասնագիտական զարգացման գործընթացներն ուղղորդելու համար ՉՊՄԿ-ն նախատեսում է ստեղծել հատուկ կենտրոնացված ուսումնական կենտրոն:



Ուսումնական նպատակներով յուրաքանչյուր աշխատակցին տարեկան հատկացված միջին ժամանակ

2021

**15**

2022

GRI [404-1]

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՉՊՄԿ-ի կողմից իրականացվող մարդու իրավունքների պաշտպանության քաղաքականությունն արտացոլում է աշխատակիցների նկատմամբ Ընկերության իրավակենտրոն մոտեցումը՝ ապահովելով նրանց պաշտպանվածությունը ինչպես աշխատավայրում, այնպես էլ Ընկերության գործունեության վայր հանդիսացող համայնքներում և Ընկերության մատակարարների, կապալառուների ու շահագրգիռ կողմերի ավելի լայն շրջանում: Այս հանձնառության մասով հետևողական լինելու համար մենք մեր գործունեության բոլոր փուլերի ընթացքում իրականացնում ենք մանրակրկիտ համալիր փորձաքննություն, մասնավորապես՝ փորձելով բացահայտել, կանխարգելել և մեղմել մարդու իրավունքների խախտման հետ կապված հնարավոր դեպքերը: Կարևոր է, որ այս մոտեցումը սահուն ձևով ներդրվի Ընկերության կորպորատիվ գործընթացներում և սոցիալական կառավարման ռազմավարություններում՝ կարևորելով մարդու իրավունքների պահպանմանն ուղղված մեր պատրաստակամությունը:




**ՉՊՄԿ-ն պարտավորվել է ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունն իր գործունեության բոլոր ոլորտներում ու ողջ ընթացքում: Ընկերությունը հարգում է իր աշխատակիցների իրավունքները և նպաստում է նրանց ընտանիքների ու ազդակիր համայնքների բարեկեցությանը: Բացի այդ, ՉՊՄԿ-ն պարտավորվել է ապահովել իր բոլոր գործողությունների ու գործունեության ոլորտների համապատասխանությունը գործող կանոնակարգերի պահանջներին՝ փորձելով ոչ միայն հետևել տարածաշրջանում գործող օրենքներին ու կանոնակարգերին, այլ նաև ներդնել միջազգային չափանիշներն ու լավագույն միջազգային փորձը՝ բոլոր այն դեպքերում, երբ տեղական օրենքները չեն ապահովում լիարժեք համապատասխանություն:**

ՉՊՄԿ-ն հավատարիմ է մնում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Աշխատանքի միջազգային կազմակերպության Աշխատանքի իրավունքի և հիմնարար սկզբունքների հռչակագրով սահմանված մարդու իրավունքների պաշտպանությանը և Հայաստանում իրականացվող իր գործունեության ընթացքում առաջնորդվում է այդ կանոնակարգերով:
Ընկերության կողմից որդեգրվել և կիրառվում է հարկադրված կամ մանկական աշխատուժի ցանկացած ձևի կիրառման նկատմամբ զրոյական հանդուրժողականության քաղաքականություն, քանի որ Ընկերությունն առաջնորդվում է պետական օրենսդրությամբ ու միջազգային չափանիշներով:

GRI [408-1]

Մարդու իրավունքների ու աշխատանքի չափորոշիչների պահպանմանն ուղղված մեր հանձնառության համաձայն, մենք ամենայն պատասխանատվությամբ հայտնում ենք, որ Ընկերությունը զերծ է **մանկական աշխատուժի կիրառման կամ երիտասարդ աշխատակիցներին* վտանգավոր աշխատանքային միջավայրի ազդեցությանը ենթարկելու** հետ կապված ամեն տեսակի ռիսկերից: Մենք վստահում ենք մեր մատակարարներին, սակայն, միևնույն ժամանակ, հետևողական ենք և մշտադիտարկում ենք նրանց գործելաոճը: Մատակարարների համար նախատեսված մեր աշխատանքային քաղաքականություններն ու ստուգման ընթացակարգերը թույլ են տալիս կանխարգելել և նվազագույնի հասցնել նման ռիսկերի հավանականությունը:

Մենք ընդունում և հարգում ենք առանց որևէ վրեժխնդրության, ահաբեկման կամ ոտնձգության սպառնալիքի՝ ազատորեն միություններ ստեղծելու, դրանց անդամակցելու կամ դրանցից զերծ մնալու մեր աշխատակիցների իրավունքները: Այն դեպքերում, երբ ՉՊՄԿ աշխատակիցներն անդամակցում են պաշտոնապես գրանցված միություններին, ՉՊՄԿ-ն հետևողական է այս անձանց հետ կառուցողական հաղորդակցման կապուղիներ ստեղծելու հարցում: Ավելին, մենք հանձն ենք առել այս միությունների ներկայացուցիչների հետ փոխադարձ հարգանքի պայմաններում ներգրավվել բաց բանակցություններում:

## ԱՄԵՆ ՏԵՍԱԿԻ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ և ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

GRI [405-1, 406-1]

Մենք կարևորում և հարգում ենք բազմազանության ու համատեղ միջոցառումներում ներառականության սկզբունքները և փորձում ենք ստեղծել այնպիսի աշխատանքային միջավայր, որը զերծ կլինի ամեն տեսակի ոտնձգություններից ու խտրականության դրսևորումներից: Այս հանձնառության ուղղորդող սկզբունքները ներկայացված են մեր Վարքագծի կանոններում:

**Հաշվետու ժամանակաշրջանում խտրականության որևէ դեպք չի արձանագրվել:**

* Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի համաձայն, արգելվում է 18 տարեկանը չլրացած երեխաներին ներգրավել վտանգավոր աշխատանքային պայմաններ ենթադրող աշխատանքներում: GRI չափանիշների համատեքստում, «երիտասարդ աշխատող» է համարվում նվազագույն աշխատանքային տարիքը բոլորած մինչև 18 տարեկան անձը:

## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ

GRI [405-1]










ԶՊՄԿ-ում աշխատողների հավաքագրման, աշխատանքի տեղավորման, հմտությունների զարգացման, վարձատրության ու մասնագիտական առաջխաղացման հնարավորություններն ուղղակիորեն պայմանավորված են աշխատողի ունեցած որակավորմամբ, հմտություններով, փորձառությամբ և ցուցաբերած արդյունավետությամբ: Այս մասով մեր կողմից կայացվող որոշումներն ու գործողություններն ուղղորդվում են հենց նշյալ սկզբունքներով:

Նշված մոտեցման իրագործման պատասխանատվությունը դրված է ընկերության այն բաժինների ղեկավարների վրա, որոնք զբաղվում են աշխատանքի անվտանգության, զբաղվածության, ինչպես նաև մարդու իրավունքների հարցերով: Դրանց թվին են պատկանում՝ ՄՌ բաժինը, Կայուն զարգացման տնօրինությունը, ֆինանսական ու բարձրագույն ղեկավարությունը, որոնց դերակատարումը չի սահմանափակվում պահանջների պասիվ կատարմամբ, այլ ենթադրում է ակտիվ մասնակցություն մշտադիտարկման, հաշվետվողականության ապահովման և Ընկերության քաղաքականությունների խթանման գործընթացներում:

Բազմազանության, ներառականության և հավասար հնարավորությունների խթանմանն ուղղված ԶՊՄԿ-ի հանձնառությունը տարածվում է Ընկերության ներքին գործընթացներից դուրս: Հաշվի առնելով ներկայիս գլոբալ բիզնես միջավայրի փոխկապակցվածությունը՝ Ընկերությունը սերտորեն համագործակցում է իր մատակարարների և գործընկերների հետ՝ դրանով իսկ կարևորելով ընդհանուր արժեքների պահպանման անհրաժեշտությունը: Մարդու իրավունքների պաշտպանության հանձնառությունը հանդիսանում է Ընկերության Վարքագծի կանոններով ամրագրված հիմնարար սկզբունք և  պարտադիր պահանջ բոլոր այն ընկերությունների համար, որոնք ցանկանում են մեզ հետ ձևավորել գործընկերային հարաբերություններ: Նման ինտեգրման շնորհիվ հնարավոր է դառնում համապատասխանեցնել ԶՊՄԿ-ի ողջ գործառնական համակարգը Ընկերության այն տեսլականին, որը ենթադրում է Ընկերության համար բազմազան, ներառական ու հավասար հնարավորություններով միջավայր:

Գիտակցելով այն փաստը, որ կայուն ապագան ձևավորվում է բազմազան անձանց և խմբերի հավաքական ուժի և կարողությունների միջոցով, ԶՊՄԿ-ն պատրաստակամ է վերացնելու պայմանական ամեն տեսակի սահմանափակումներ ու ավանդական սահմաններ: Մենք միանշանակ կողմ ենք բազմազանությանն ու ձգտում ենք ձևավորել այնպիսի միջավայր, որտեղ յուրաքանչյուրին և բոլորին կվերաբերեն հարգանքով, արժանապատվորեն և հավասարապես: Այս սկզբունքն արտացոլված է նաև մեր աշխատուժի կառուցվածքում, որտեղ առկա են բավականաչափ մեծ թվով աշխատակիցներ այլ տարածաշրջաններից ու արտասահմանից: Ստորև ներկայացված մեր այլ նպատակներն ու պլանները ոչ միայն կարևորում են մեր այս հանձնառությունը, այլ նաև ճանապարհ են հարթում դեպի առաջընթաց:



| ՆՊԱՏԱԿՆԵՐ | ԺԱՄԿԵՏ | ԹԻՐԱԽ | ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՑՈՒՑԻՉՆԵՐ |
|---|---|---|---|
| ՄՖԿ և ՀՄՄԿ չափանիշների համահարթեցում | Մինչև 2028թ | Հաջորդ հինգ տարիների ընթացքում, ՉՊՄԿ-ն կաշխատի Միջազգային ֆինանսական կորպորացիայի և Հանքարդյունաբերական ու մետաղների միջազգային խորհրդի կողմից սահմանված սոցիալական կառավարման չափանիշներն ապահովելու ուղղությամբ | Տարեկան կտրվածքով ՄՖԿ և ՀՄՄԽ ուղենիշներին համապատասխանեցում տոկոսային արտահայտմամբ<br>Անկախ գնահատումներից և աուդիտներից ստացված արձագանք<br>ՄՖԿ և ՀՄՄԽ ուղեցույցների վերաբերյալ անձնակազմի համար անցկացված դասընթացների քանակ<br>Վերոնշյալ չափանիշներին համահունչ՝ հավաքագրման, մասնագիտական առաջխաղացման ու աշխատանքային գործընթացներում արձանագրված փոփոխություններ |
| Աշխատուժի բազմազանության խթանում | Մինչև 2030թ. | Ապահովել առավել մեծ բազմազանություն Ընկերության բոլոր, և հատկապես՝ ղեկավար պաշտոններում | Ներկայացուցչության տոկոսային հարաբերակցության տարեկան աճ՝ ըստ բազմազանության հստակ չափորոշիչի<br>Աշխատակիցների ներքին ուսումնասիրությունների և արտաքին շահագրգիռ կողմերի ներգրավման հետ կապված արձագանքներ |
| Զրոյական խտրականությամբ աշխատանքային միջավայր | 2030թ. դրությամբ ապահովել խտրականության զրոյական արձանագրված դեպքեր | Վերացնել ռասայական, սեռական, էթնիկական, կրոնական, տարիքային, հաշմանդամության կամ այլ տեսակի խտրականության դեպքերը | Տարեկան կտրվածքով արձանագրվող դեպքերի քանակ<br>Աշխատանքային մթնոլորտի կանոնավոր ուսումնասիրությունների արդյունք<br>Գանգատների վերացման մեխանիզմներից ստացված արձագանք |
| Ներառական աճի և զարգացման ծրագրեր | 2025 թ. դրությամբ նախաձեռնել բազմազանության ներառականության և հավասար հնարավորություննե րի խթանմանն ուղղված առնվազն երկու առաջատար ծրագիր | Իրականացնել բազմազանության և ներառականության խթանմանն ուղղված ուսումնական և զարգացման ծրագրեր | Նախաձեռնված ծրագրերի քանակ<br>Մասնակիցների արձագանք և հետագա բարելավումներ աշխատանքային համագործակցության մասով<br>Կազմակերպության մշակույթում տեսանելի փոփոխություններ, ինչպես նշված է պարբերական ակնարկներում |

## ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

GRI [2-25, 2-26]

ՉՊՄԿ-ի կողմից մշակվել է Բողոքարկման մեխանիզմ (ԲՄ), որն իրենից ներկայացնում է պաշտոնական համակարգված գործընթաց, որն ընձեռնում է առկա խնդիրները վաղ փուլում բացահայտելու և դրանց հետագա բարդացումը կանխելու հնարավորություն: ԲՄ հանդիսանում է Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի բաղկացուցիչ մաս և սերտորեն փոխկապակցված է ՉՊՄԿ-ի այլ քաղաքականությունների, այն է՝ Վարքագծի կանոնների, Սոցիալական քաղաքականության, Սոցիալ կառավարման քաղաքականության, Զբաղվածության և այլնի հետ: Շահագրգիռ կողմերի բողոքներն ու արձագանքները մեզ համար տեղեկատվության արժեքավոր աղբյուրներ են, քանի որ օգնում են մեր ծառայությունների ու աշխատանքային գործընթացների բարելավման գործում: Դրանց միջոցով հնարավոր է բացահայտել աննկատ մնացած խնդիրներն ու թյուրըմբռնումները:

2022 թ. մենք վերանայեցինք ԲՄ-ը՝ այն միջազգային չափանիշներին ու լավագույն միջազգային փորձին համապատասխանեցնելու նպատակով:

Մշակված մոտեցումը թույլ է տալիս կանխարգելել խտրականությունը, անվտանգության մասով խախտումներն ու մարդու հիմնական իրավունքների վրա ներազդող այլ հարցերը: Ստացվող մտահոգություններն ու բողոքները տարաբնույթ են՝ սկսած հանքով պայմանավորված ազդեցություններից մինչև սոցիալական, բնապահպանական, կառավարման ու այլ հարցեր: Դրանք կարող են ներառել հանքի շահագործմամբ պայմանավորված ազդեցություններ, ինչպիսիք են՝ աղտոտվածությունը, խիտ երթևեկությունը, բարձր աղմուկն ու փոշեգոյացումը, ինչպես նաև աշխատողներին վերաբերող հարցեր, որոնցից են՝ աշխատավարձի չափը, վատ աշխատանքային պայմանները, տեղական զբաղվածությունը, պատահական և ոչ կանոնավոր համայնքային խորհրդատվությունները, ծրագրի արտոնությունների անհավասար բաշխումը, ցածր կամ զրոյական մակարդակի տեղական գնումները, առողջապահական ու աշխատանքի անվտանգության հարցերը և այլն:

Տվյալ մեխանիզմով ապահովվող ամբողջական թափանցիկությունն ու հասանելիությունն անչափ կարևոր են մեզ համար, քանի որ ապահովում են մեր կողմից կիրառվող ընթացակարգերի նկատմամբ շահագրգիռ կողմերի լիարժեք վստահությունը: ԲՄ հիմքում ընկած է գաղտնիության սկզբունքը, որը բացառում է բողոք ներկայացրած անձի կամ խմբի նկատմամբ հետագա հաշվեհարդարի հնարավորությունը: ՉՊՄԿ-ն փորձում է բոլոր գանգատների ու բողոքների համար գտնել քաղաքակիրթ լուծումներ: Սակայն, եթե բողոքատուին չի բավարարում Ընկերության կողմից ձեռնարկված միջոցներն ու գործողությունները, ապա ԲՄ-ն չի խոչընդոտում և չի բացառում բավարարման այլ միջոցները՝ ընդհուպ մինչև դատական կամ այլ ատյաններին դիմելը:

Բողոքարկման մեխանիզմը ներառում է մի քանի փոխկապակցված քայլ:



Առաջին հերթին, ԶՊՄԿ-ն տեղեկացնում է շահագրգիռ խմբերին ԲՄ-ի մասին և ազդակիր համայնքներում հրապարակում է դրա կիրառման վերաբերյալ տեղեկություններ: Սա մասնավորապես արվում է տարբեր եղանակներով, ներառելով ՝ ԶՊՄԿ-ի տեղեկատվական թերթիկները, կայքը, տպագիր բրոշյուրները, պաշտոնական ու ոչ պաշտոնական համայնքային հանդիպումները և այլն:

Բողոք կամ գանգատ ստանալուց հետո այն գրանցվում է: Այնուհետև, մենք հավաքում, գրանցում և ԲՄ գրանցամատյանում արձանագրում ենք բոլոր բանավոր և գրավոր բողոքներն ու դիմումները: ԲՄ աշխատակիցների համար կազմակերպվում են բողոքների կամ գանգատների ընդունման, վերլուծության և հետագա լուծման համար հատուկ դասընթացներ:

Հաջորդ փուլը ենթադրում է բողոքի դիտարկում և ուսումնասիրություն աշխատակազմի հատուկ անդամի կամ թիմի կողմից՝ պատասխանի հետագա նախապատրաստման նպատակով /օրինակ՝ ՄՌ բաժինը դիտարկում է զբաղվածությանը վերաբերող բողոքները, կայուն զարգացման թիմը՝ համայնքային հարցերը/: Պաշտոնական արձագանքին նախորդում են բողոքողի հետ պաշտոնական ու ոչ պաշտոնական հանդիպումները: Ըստ ԲՄ ընթացակարգի՝ առաջարկվող լուծումները պետք է ընդունելի լինեն երկու կողմերի համար և կայացվեն ողջամիտ ժամկետում:

ԲՄ ներառում է համակարգ, որը թույլ է տալիս հետևել և արձանագրել ողջ գործընթացը: Պաշտոնական պատասխանը հրապարակելուց հետո տվյալ բողոքը փակվում է ԲՄ գրանցամատյանում: Մենք իրականացնում ենք ԲՄ-ի կանոնավոր մշտադիտարկում և ԲՄ ներքին հաշվետվողականություն՝ առկա միտումները, վիճակագրական տվյալները, կրկնվող բողոքներն ու դրանց դինամիկան վերահսկելու նպատակով: Տեխնիկական առումով Կայուն զարգացման տնօրինությունը կառավարում է զբաղվածությանը և համայնքային հարցերին վերաբերող գանգատների հավաքագրման, վերլուծության և զեկուցման ողջ ընթացքը: Համայնքի հետ կապի պատասխանատուն և սոցիալական թիմի անդամները հետևում և վերահսկում են բոլոր գանգատների լուծման ընթացքը, ինչից հետո նրանք կազմում են Բողոքարկման համառոտ հաշվետվություններ:

ԶՊՄԿ-ի բարձրագույն ղեկավարությունը պատասխանատու և լիազորված է ապահովելու Ընկերության պարտավորությունների կատարումն ու Ծրագրի հետ կապված ռիսկերի և ազդեցությունների մասով համայնքի մտահոգությունների ու գանգատների պատշաճ հանգուցալուծումը:

GRI [413-2]

Մենք ընդունում ենք, որ հանքարդյունաբերական գործողությունների և, մասնավորապես, Ջափնի, Սևաքար, Աճանան, Լեռնաձոր, Արծվանիկ, Ըրկենանց և Սյունիք տեղավայրերում գտնվող ազդակիր համայնքների բարեկեցության միջև առկա է բարդ փոխկապակցվածություն: ԲՄ ստեղծման տարեթվից, այն է՝ 2022 թվականի աշնն, հետո ստացված գանգատների մեծամասնությունը վերաբերում են ԶՊՄԿ-ի տարբեր տարիների ընթացքում իրականացված գործունեությամբ պայմանավորված հողի դիմաց փոխհատուցման հարցերին:

Բողոքողների հետ շարունակական համագործակցության, թափանցիկ հաղորդակցության և պատասխանատու միջոցներ ձեռնարկելու միջոցով՝ մենք պարտավորվում ենք պատշաճ կերպով դիտարկել և լուծումներ առաջարկել բոլոր ստացվող գանգատների համար, ինչպես նաև տեղեկացնել ձեռնարկված գործողությունների մասին՝ դրանով իսկ նվազեցնելով մարդկանց ու շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները:



# ՀԱՄԱՅՆՔ

## ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ

### ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԹԻՐԱԽԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

GRI [413-1, 413-2]

ԶՊՄԿ-ն կարևորում է համայնքների ամբողջական ու համապարփակ ներգրավման անհրաժեշտությունը՝ քաջ գիտակցելով ազդակիր համայնքների սոցիալ-մշակութային կյանքի վրա հանքարդյունաբերական գործունեությամբ պայմանավորված զգալի ազդեցությունը: Համայնքների ներգրավվածության ապահովումը կայուն զարգացմանն ուղղված մեր հիմնարար հանձնառություններից է, և մենք պարտավոր ենք բիզնես որոշումներ կայացնելիս հաշվի առնել ու ներառել կայուն զարգացման սկզբունքները, ինչպես նաև մեր շահագրգիռ կողմերի տեսլականն ու կարիքները՝ մեր գործունեությամբ պայմանավորված սոցիալական ազդեցությունները կանխարգելելու, մեղմելու կամ շտկելու նպատակով:

ԶՊՄԿ-ն աջակցում է ինչպես Սյունիքի մարզում, այնպես էլ Հայաստանի ողջ տարածքում վերջին մի քանի տասնյակ տարիների ընթացքում իրականացվող տարբեր ծրագրերին ու համայնքային նախագծերին: Համայնքների կարիքները, մարտահրավերներն ու առաջնահերթությունները հասկանալու համար մենք կատարում ենք մեծ աշխատանք: Մասնավորապես, մեր գործունեության երկար տարիների ընթացքում մենք ակտիվորեն համագործակցել ենք տեղական համայնքների և կազմակերպությունների հետ՝ իրականացնելով համայնքային զարգացման տարատեսակ ծրագրեր ու միջոցառումներ, այդ թվում՝ հմտությունների ձևավորման, մասնագիտական զարգացման, փոքր բիզնեսի աջակցման, հրատապ արձագանքման ու ճգնաժամային կառավարման, շրջակա միջավայրի պաշտպանության ու բնական ռեսուրսների պահպանման ծրագրեր: Մենք հետևողական ենք համայնքների նպատակներին համապատասխանող անհրաժեշտ աջակցություն տրամադրելու հարցում և ձգտում ենք տեղական համայնքների ու, ընդհանուր առմամբ, ողջ հասարակության համար ապահովել երկարաժամկետ դրական ազդեցություն:

Համայնքների ներգրավման մեր մոտեցման հիմքում ընկած են մարդու իրավունքների պահպանման, սոցիալական ու տեղական զբաղվածության ապահովման քաղաքականությունները, բողոքարկման մեխանիզմներն ու աշխատանքային օրենսգիրքն ու օրենքները, հանքարդյունաբերական ոլորտի կանոնակարգերը, մարդու իրավունքի վերաբերյալ միջազգային համաձայնագրերն ու դրանց սկզբունքները:



**Համապարփակ և ամբողջական ներգրավում**

Հաշվի առնելով մեր գործունեության վայր հանդիսացող տարածաշրջանի բարդ ու անկայուն սոցիալ-մշակութային և շրջակա միջավայրի վիճակը՝ մենք իրականացնում ենք փոխշահավետ համագործակցություն, որն օգտակար ու շահավետ կլինի և կապահովի ընդհանուր դրական արդյունք ազդակիր ու տեղական համայնքների համար:*

**Շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններ**

Հիմնված լինելով փոխադարձ հարգանքի սկզբունքի վրա՝ շահագրգիռ կողմերի ներգրավման մեր ջանքերն ուղղված են վստահության և երկարաժամկետ համագործակցության զարգացմանը: Հետադարձ կապ ապահովող մեխանիզմների կիրառումը, ստացված բողոքների ու գանգատների պատշաճ լուծումն ու թափանցիկ հաղորդակցության հնարավորությունների ապահովումն արտացոլում են կայուն զարգացմանն ուղղված մեր հանձնառությունը: Մենք փորձում ենք ձեռք բերել և խորացնել տեղական համայնքների և պետական, տարածաշրջանային ու տեղական կառավարման մարմինների ու այլ շահագրգիռ կողմերի վստահությունը՝ նրանց հետ վարելով բաց երկխոսություն:

**Համայնքակենտրոն մոտեցում**

Քաջ գիտակցելով հողի նկատմամբ իրավունքների, ջրային պաշարների հասանելիության, համայնքի առողջության ու բարեկեցության կարևորությունը՝ մենք համագործակցում ենք համայնքների, մասնավորապես՝ խոցելի ու սահմանային խմբերի հետ: Տեղական խնդիրների համար տեղական մակարդակով լուծումների ապահովումը մնում է մեզ համար նախընտրելի մոտեցում:

**Ինստիտուցիոնալ վերահսկողություն**

ԶՊՄԿ-ի տարբեր մարմինները, այն է՝ ՄՌ, կայուն զարգացման և ֆինանսական բաժիններն ու բարձրագույն ղեկավարությունը լիազորված են իրականացնելու մշտադիտարկում, ինչպես նաև ապահովելու մարդու իրավունքների պահպանմանն ուղղված մեր պարտավորությունների անխափան կատարում:

**Ներգրավման հենք**

Կարևորելով խնդիրների վաղ հայտնաբերման անհրաժեշտությունը՝ մեր ԲՄ-ի թիմը փորձում է հնարավորինս շուտ հայտնաբերել ու մեղմել բացասական ազդեցություններն ու լուծել առկա վեճերը:

**Վստահության ձևավորում**

Բողոքարկման մեխանիզմի գործառույթը չի սահմանափակվում վեճերի լուծմամբ, այլ արտացոլում է համայնքների պատկերացումներն ու ջանքերը արժևորելու, ինչպես նաև առաջացող խնդիրներն անաչառ լուծելու և երկարաժամկետ վստահություն ձևավորելու մեր Ընկերության հանձնառությունը:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԶՊՄԿ-Ի ՄԱՐՄԻՆՆԵՐՆ ՈՒ ԲԱԺԻՆՆԵՐԸ

**ՄՌ բաժին**

Ապահովում է ամեն տեսակի խտրականությունից զուրկ, ներառական աշխատանքային միջավայր, որտեղ առաջխաղացման հնարավորությունները տրվում են ըստ արժանիքների: ՄՌ բաժինն իրականացնում է նաև մարդու իրավունքների և համայնքային ներգրավման թեմաներով ուսումնական ծրագրերի վերահսկում:

**Կայուն զարգացման թիմ**

Մշակում է սոցիալական քաղաքականություններ ու համայնքների աջակցության ռազմավարություններ, կատարում է սոցիալական ազդեցությունների գնահատում, սահմանում է ազդեցությունների մեղմացման միջոցներ և նպաստում է ազդակիր ու այլ համայնքների կենսակերպի բարելավմանը՝ ապահովելով հանքի շահագործմամբ պայմանավորված օգուտների ավելի լայն և համապարփակ բաշխում:

**Բարձրագույն ղեկավարություն**

Մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված մեր պարտավորությունը կատարելու նպատակով՝ իրականացնում է Ընկերության ռազմավարությունների կանոնավոր վերանայում և վերահսկողություն, ինչպես նաև սահմանում է աշխատակիցների ու համայնքների կառավարման նկատմամբ ընկերության ընդհանուր մոտեցումներ:



* Տես «Բառարան»

Մենք գիտակցում ենք այն դերակատարումը, որ ԶՊՄԿ-ն կարող է ունենալ տեղական համայնքների կենսակերպի բարելավման գործում: Տեղական համայնքների զբաղվածության քաղաքականության շրջանակներում, ազդակիր համայնքներն ընտրվում  և որոշվում են ելնելով ԶՊՄԿ-ի ծրագրի իրականացման վայրի ու ենթակառուցվածքների հեռավորությունից: Ազդակիր համայնքների թվին են պատկանում՝ Չափնի, Սևաքար, Քաջարան, Աճանաս, Լեռնածոր, Արծվանիկ, Սյունիք, Երկենանց գյուղական համայնքերն ու Կապան և Քաջարան քաղաքային համայնքները: «Տեղական» եզրույթը վերաբերում է նաև հարակից համայնքներին: Տեղական/ազդակիր համայնքներից 40-60 կմ հեռավորության վրա գտնվող համայնքները դիտարկվում են որպես ավելի լայն շրջանակ /տարածաշրջանային և պետական մակարդակ/, հետևաբար վերջիններիս վրա Ծրագրով պայմանավորված ազդեցությունները համարվում են երկրորդական ազդեցություններ: Մենք պարտավորվել ենք ապահովել երկարատև դրական փոփոխություններ՝ ինտեգրելով միջազգային չափանիշներն ու լավագույն միջազգային փորձը և «Ընդհանուր տեսլական, ընդհանուր պատասխանատվություն» մոտեցումը:

Ստորև ներկայացված են ԶՊՄԿ-ի հանձնառությունն արտացոլող նպատակներն ու գործողությունները.

| **Նպատակներ** | **Սահմանված ժամկետ** | **Գործողություններ** | **Առաջընթացի ցուցիչներ** |
|---|---|---|---|
| Սոցիալական ներդրումների ուղղվածության փոփոխություն՝ կախվածությունից դեպի անկախություն | Համայնքների երկարաժամկետ զարգացմանն ու աճին ուղղված 2-3 նախաձեռնության աջակցություն՝ մինչև 2025թ. | Անցում բարեգործական մոտեցումից դեպի զարգացման մոտեցում՝ նպատակ ունենալով կրճատել հանքից կախվածությունը և փոխել սոցիալական ներդրումների մշակույթը | Տեղական զարգացմանն ուղղված նախաձեռնությունների թիվ<br>Վերոնշյալ ծրագրերի նախաձեռնման գործում համայնքի մասնակցության ու ներգրավման մակարդակ<br>Տեղական բիզնես նախաձեռնությունների շնորհիվ ստեղծված աշխատատեղերի թիվ<br>Պատկերավոր օրինակներ՝ տեղական ներուժի զարգացում, բիզնես զարգացում և տեխնիկական աջակցություն, մասնագիտական գաղտնիքներ, տեղական շուկայի զարգացում |
| Պետական զարգացման պլանների հետ համապատասխանության ապահովում | Տարածաշրջանային կառավարման մարմինների հետ, տարեկան երկու անգամ, խորհրդատվական և համապատասխանեցման հարցերով հանդիպումների կազմակերպում 2023 թ. դրությամբ | Տարածաշրջանի սոցիալական ներդրումները մշակել հաշվի առնելով տվյալ երկրի պետական զարգացման պլանները (որպես կանոն առկա են 5-ամյա պլաններ) | Համապատասխանեցման հարցերով կազմակերպված  հանդիպումների թիվ<br>Պետական զարգացման պլաններին աջակցող նախաձեռնությունների թիվ<br>Պատկերավոր օրինակներ՝ սուբվենցիոն ծրագրեր,  առաջնահերթ կարևորության տեղական ոլորտների աջակցությանն ուղղված միջոցառումներ (ենթակառուցվածք, համայնքի առողջապահություն և այլն) |
| Տարածաշրջանային զարգացման կարևորում | Տարածաշրջանային ու տեղական կառավարման նպատակների կարևորում՝ ելնելով համայնքների առաջնահերթ կարիքներից ու ձգտումներից | Մինչև 2025թ., նախաձեռնել 4-5 տարածաշրջանային նախագիծ՝ ելնելով տեղական համայնքների կարիքներից ու ակնկալիքներից | Նախաձեռնված տարածաշրջանային միջոցառումների քանակ<br>Ծրագրերի մշակման և իրագործման գործողություններում համայնքի ներգրավման ու մասնակցության մակարդակ |
| ԲՍԿ և աշխատանքի անվտանգության թեմաներով սեմինարներ ու դասընթացներ | Տարեկան առնվազն 20 ուսումնական դասընթացի կազմակերպում | Տեղի բնակչության և ընկերության աշխատողների համար կազմակերպել բնապահպանական, սոցիալական ու կառավարման սկզբունքների և աշխատանքիանվտանգության վերաբերյալ ուսումնական դասընթացներ ու սեմինարներ | Անցկացված ուսումնական դասընթացների թիվ<br>Ընկերությունը ներկայացնող մասնակիցների թիվ<br>Թիրախային համայնքներից մասնակիցների թիվ<br>Աշխատանքի անվտանգության և ԲՍԿ չափանիշների ապահովման մասով չափելի բարելավումներ |
| ԲՄ-ի շարունակական իրագործում | Գործող ԲՄ-ի առկայություն 2023թ. դրությամբ | Ներդնել համայնքից ստացվող բողոքների արձագանքման համակարգ՝ ապահովելով յուրաքանչյուրի լսելիությունն ու աջակցությունը | Գրանցված բողոքների թիվ<br>Ժամանակին ապահովված արդյունավետ արձագանքներ<br>Լուծված խնդիրների թիվ |

Սահմանելով վերոնշյալ նպատակները՝ ԶՊՄԿ-ն ոչ միայն կարևորում է կայուն արտադրություն ապահովելու իր հանձնառությունը, այլ նաև վերահաստատում է ազդակիր համայնքների բարեկեցությանը, զարգացմանն ու աճին նպաստելու իր նվիրումը: Նշյալ համայնքներում բովանդակալից ու նպատակային ներդրումներ կատարելու արդյունքում, ԶՊՄԿ-ն ակնկալում է ստեղծել այնպիսի ապագա, որտեղ՝ իրականացվող հանքարդյունաբերական գործողությունների շնորհիվ, հնարավոր կլինի ապահովել առավել բարեկեցիկ կյանք և հանքարդյունաբերության ու համայնքների ներդաշնակ համագոյակցություն:

- ԶՊՄԿ-ի աշխատակիցների ընդհանուր թվի ավելի քան 80% տեղական համայնքներից են (հիմնականում Կապան ու Քաջարան խոշորացված համայնքից ու հարակից բնակավայրերից)
- 2022թ. կատարված համայնքային ներդրումների մոտ 80% ուղղվել է Կապանին ու Քաջարանին, իսկ 20%՝ ավելի հեռավոր տարածքներ
- 2022թ. ընթացքում, օրենսդրության պահանջներին ի պատասխան, ԶՊՄԿ-ն անցկացրել է մոտ 10 հանրային լսում ազդակիր համայնքներում ազդեցությունների գնահատման թեմայով

## ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐ

Քաջ գիտակցելով պատասխանատու հանքարդյունաբերության ու տեղական համայնքների հետ հարաբերությունների կարևորությունը՝ ԶՊՄԿ-ն ամենայն պատասխանատվությամբ է մոտենում համայնքային ներգրավվածությանը, ազդեցությունների գնահատմանն ու զարգացման ծրագրերի իրագործմանը: Ստորև ներկայացված է պատասխանատու համայնքային ներգրավման լավագույն չափորոշիչներին համապատասխանեցված մեր ռազմավարությունների և ընթացակարգերի համառոտ նկարագրությունը.

**Ելակետային տվյալներ ու վերլուծություններ**

Սոցիալական զարգացմանն աջակցելու և ընդհանուր տեսլական գտնելու նպատակով՝ ԶՊՄԿ-ի կողմից, 2022թ. ծմռանը, նախաձեռնվել է ազդակիր համայնքներից ելակետային տվյալների հավաքագրման գործընթաց, որի ընթացքում տեղական համայնքների անդամներից ստացվել են համայնքին վերաբերող տարատեսակ տվյալներ: Այս գործընթացը թույլ է տալիս պատշաճ կերպով ներկայացնել և բավարարել համայնքի ներկայացուցիչների կարիքները, այդ թվում՝ գենդերային հարցերը: Հավաքագրվող տվյալները, մասնավորապես, ներառում են տեղեկություններ համայնքային ենթակառուցվածքների (առողջապահություն, կրթություն, սպորտ/արվեստ և այլն), աշխարհագրության, զբաղվածության, ժամանակավոր կամ մշտական արտագաղթի, առաջնահերթ կարիքների ու համայնքային զարգացման խոչընդոտների և այլնի վերաբերյալ:

ԶՊՄԿ-ն՝ համայնքների սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ իրական պատկերացում ունենալու նպատակով, նախատեսում է յուրաքանչյուր տարի թարմացնել այս տվյալները, ինչպես նաև հետևել ու վերլուծել համայնքների զարգացման դինամիկան, տարիների ընթացքում արձանագրվող սոցիալական փոփոխությունները, համայնքային զարգացման միտումները, կարծիքներն ու տեսլականը:

Բացի այդ, ԶՊՄԿ-ի կողմից, Սյունիքում և ազդակիր համայնքներում, իրականացվել է կարիքների արագ գնահատում՝ նշյալ համայնքների առաջնահերթ կարիքները, նրանց զարգացման խոչընդոտները, տեսլականն ու հանքարդյունաբերության վերաբերյալ համայնքների պատկերացումները պարզելու նպատակով:

2023 թ. նախատեսվում է բոլոր ազդակիր համայնքներում իրականացնել կարիքների գնահատում: Կարիքների գնահատման, ինչպես նաև տարեկան կտրվածքով անցկացվող ելակետային տվյալների հավաքագրման արդյունքների հիման վրա կմշակվի ԶՊՄԿ-ի համայնքային ներդրումների ռազմավարություն հաջորդ 4-5 տարիների համար:

**Հանրային ու համայնքային հանդիպումներ**

Ելնելով թափանցիկության ապահովման մեր հանձնառությունից՝ մենք պարտավոր ենք հրապարակել սոցիալական ու բնապահպանական ազդեցությունների գնահատման արդյունքները: Մենք համոզված ենք, որ թափանցիկ համագործակցության ու համապատասխան տեղեկատվության փոխանակման շնորհիվ, շահագրգիռ կողմերն ավելի լավ պատկերացում կունենան մեր գործունեության բնույթի և ազդեցությունների կառավարման մասով Ընկերության մոտեցումների վերաբերյալ:

Հայաստանի օրենսդրական պահանջներին ի պատասխան, 2022 թ. ԶՊՄԿ-ն կազմակերպել է Ընկերության գործունեությամբ պայմանավորված բնապահպանական ազդեցությունների գնահատման վերաբերյալ մոտ 10 հանրային լսում: Բացի այդ, համայնքներում անցկացվել են աուդիտորների և համայնքի անդամների մասնակցությամբ հանդիպումներ, որտեղ քննարկվել են համայնքային զարգացման ու ներգրավման մեխանիզմների վերաբերյալ Ընկերության մոտեցումներն ու գյուղական համայնքների բնակիչների մտահոգությունները:

2022 թ. կազմակերպվել են մի շարք հանդիպումներ ԶՊՄԿ-ի կայուն զարգացման ու բնապահպանական թիմերի և տեղական հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ: Ընկերության կողմից կազմակերպված իրազեկման հանդիպումների ընթացքում դիտարկվել են ընկերության բնապահպանական ու սոցիալական սկզբունքներն ու բիզնես գործառնությունները, համագործակցության հնարավորություններն ու հասարակական կազմակերպությունների մտահոգությունները:

Չնայած այն հանգամանքին, որ ընկերությունում դեռևս չի գործում համայնքային մասնակցության մշտադիտարկման պաշտոնական ծրագիր, այնուամենայնիվ, ըստ առկա տվյալների, բնապահպանական ու սոցիալական բաժինների աշխատակիցների մոտ 90% տեղացիներ են, հիմնականում՝ Քաջարանից, Կապանից ու այլ տեղական համայնքներից, ինչն Ընկերության համար ապահովում է հուսալի և վստահելի տեղեկատվություն «սկզբնաղբյուրից»:

**Զարգացման ծրագրեր ազդակիր ու ավելի հեռավոր համայնքների համար**

ԶՊՄԿ-ն ակտիվորեն մասնակցում է տարբեր համայնքներում, այդ թվում՝ Կապանի, Քաջարանի, Արծվանիկի, Չափնիի ու ավելի հեռավոր համայնքներում կազմակերպվող սոցիալական զարգացման միջոցառումներին, որոնք հիմնականում անդրադառնում են տեղի բնակչության կարիքներին ու ակնկալիքներին և կազմակերպվում են համայնքի ղեկավարների ու տեղական կառավարման մարմինների ներկայացուցիչների հասարակական կազմակերպությունների ու շահառուների հետ համատեղ քննարկումների ու որոշումների արդյունքում որոշված ձևաչափով ու կարգով: Այս ամենի շնորհիվ, մեր սոցիալական աջակցությունը դառնում է առավել հասցեական ու իմաստալից՝ ներառելով այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են օրինակ՝ համայնքի առաջնային առողջապահությունը, կրթությունը, ամսական վճարումները, ուսանողների աջակցությունը, երիտասարդների համար սպորտի ու արվեստի կենտրոնները, տեղական կրթական ու առողջապահական հաստատությունների աջակցությունը, սուբվենցիոն ծրագրերը և այլն:

**Ծառայությունների ու ապրանքների տեղական շուկայի խթանում**

ԶՊՄԿ-ի կողմից նախաձեռնված հաջորդ միջոցառումն ուղղված էր տեղական շուկայի խթանմանը, ինչը ենթադրում է համայնքային զարգացում, հանքի շահագործումից կախվածության նվազեցում, տեղում նոր աշխատատեղերի ստեղծում և համայնքների ներուժի հզորացում: 2022 թ. մեկնարկած ԶՊՄԿ-ի տեղական գնումների կառուցվածքի ուսումնասիրության արդյունքում հստակեցվել է տվյալ տարվա ընթացքում ձեռք բերված ապրանքների ու ծառայությունների շրջանակը, ինչպես նաև տեղական ու այլ շուկաներում իրականացված գնումների հարաբերակցությունը, բնագավառներն ու ոլորտները: Սակայն առավել կարևորն այն է, որ ծառայությունների ու ապրանքների տեղական շուկան զարգացնելու նպատակով նախատեսվում է մշակել Տեղական գնումների քաղաքականություն ու մոտեցումներ: Որպես օրինակ կարող է ծառայել համազգեստների ու հագուստների արտադրությամբ զբաղվող տեղական ընկերությունների խթանումը: Այս նախաձեռնության արդյունքում համապատասխան համայնքների համար ակնկալվում է ուղղակի դրական ազդեցություն, ինչը կբերի տեղական արտադրության ու շուկայի խթանմանն ու տեղական համայնքների զարգացմանը: Լրացուցիչ տեղեկությունների համար տես «Տեղական մատակարարներ» բաժինը:

**Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան ու բողոքարկման մեխանիզմ**

Շահագրգիռ կողմերի ներգրավումը հանդիսանում է ԶՊՄԿ-ի հիմնական արժեքներից մեկը, ինչի հետ կապված ընկերությունը կազմակերպում է համայնքների տարբեր սեգմենտների /այդ թվում՝ կանանց, խոցելի խմբերի ու այլնի/ համար խորհրդատվական բնույթի հանդիպումներ՝ դարձնելով ներգրավմանն ուղղված մեր միջոցառումներն առավել ներկայացուցչական ու կարիքների արձագանքման առումով առավել արդյունավետ: Լրացուցիչ տեղեկությունների համար տես «Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան» բաժինը:

Շահագրգիռ կողմերի շրջանակը պարզելուն, նրանց կարիքները հասկանալուն ու ներգրավման պլաններ մշակելուն ուղղված մեր մշտական աշխատանքները հնարավորություն են տալիս հաշվի առնել ու ներառել նրանց կարծիքներն ու պահանջները Ընկերության որոշումների կայացման գործընթացներում: Այս ամենն արտացոլված է Ընկերության կողմից որդեգրած լավագույն փորձով ու չափանիշներով 2022 թվականին մշակված Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանում: Լրացուցիչ տեղեկությունների համար տես «Բողոքարկման մեխանիզմ» բաժինը, որտեղ Բողոքարկման մեխանիզմը ներկայացված է որպես հաղորդակցության միջոց:

GRI [203-1]

ԶՊՄԿ-ի կողմից 2022 թ. տարբեր սոցիալական ու զարգացման ծրագրերում կատարված ընդհանուր ներդրումները կազմել են մոտ 15 մլն ԱՄՆ դոլար, ինչը կրկնակի անգամ ավել է 2021 թ. սոցիալական ներդրումների համեմատ:




Ստորև ներկայացված են ԶՊՄԿ-ի կողմից տրամադրված աջակցության առավել խոշոր շահառու ոլորտները.

- Կապանում և Քաջարանում իրականացված և խոշոր համայնքային ենթակառուցվածքային ծրագրեր հանդիսացող սուբվենցիոն ծրագրեր՝ 18%
- Համայնքների աջակցություն և ենթակառուցվածքներ՝ 13%, օդանավակայանին տրամադրվող աջակցություն՝ 13%
- Ամսական վճարումներ (10%). հինգ ազդակիր համայնքում ամսական կրթաթոշակ տրամադրելու ԶՊՄԿ-ի պարտավորությունը խոսում է Ընկերության բարի կամքի և համայնքները հզորացնելու ու խթանելու հանձնառության մասին: Տեղական շուկան և ընկերությունները զարգացնելու միջոցով՝ Ընկերությունը հետապնդում է հեռահար նպատակ, այն է՝ վերացնել նման մոտեցումը մոտակա տարիների ընթացքում և կրճատել համայնքների կախվածությունը նման կրթաթոշակներից ու աշխատանքներից
- Սպորտի, մշակույթի և կրթության նպատակով երիտասարդներին տրամադրվող աջակցություն, համայնքային առողջապահություն, տարատեսակ կրթական, սոցիալական, ներառական ու այլ ծրագրեր իրականացնող ՀԿ-ներ՝ 5-8% յուրաքանչյուրը:

ԶՊՄԿ-ի 2022թ. աջակցության զգալի մասը տրամադրվել է սուբվենցիոն ծրագրերի միջոցով (18%) և ուղղվել է համայնքների զարգացման հիմնական խնդիրների լուծմանը, որոնք՝ համայնքների միջոցների սղության պատճառով, մնում են չլուծված:
Նման ծրագրերի հիմքում ընկած է Մարզի 5-ամյա զարգացման պլանին աջակցելու ԶՊՄԿ-ի հանձնառությունը, որը նախատեսվում է իրականացնել մարզի ու տեղական համայնքների ղեկավարների հետ համատեղ քննարկումների և գործողությունների արդյունքում: Այս 5-ամյա զարգացման պլանը ներառում է համապատասխան համայնքների ռազմավարական ոլորտներն ու բնագավառները, որոնք գտնվում են մարզի կառավարման մարմինների ուշադրության կենտրոնում՝ առողջապահությունը, ենթակառուցվածքները, կրթությունը, գյուղատնտեսությունն ու այլն:
Երկու հիմնական համայնքում 2022 թ. իրականացված սուբվենցիոն ծրագրերը վերաբերում էին միջհամայնքային ճանապարհներին, փողոցների վերանորոգմանը, խմելու ջրի համակարգի բարելավմանն ու գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերմանը:




ԶՊՄԿ-ն մշտապես, ազդակիր համայնքներում, իրականացնում է սոցիալական զարգացման միջոցառումներ, ներառելով՝

- Երկու խոշորացված քաղաքային համայնքները, այն է՝ Կապանն ու Քաջարանը (որոնք ձևավորվել են օպտիմալացման արդյունքում՝ մեկ վարչական կառավարման ներքո միավորելով մի քանի համայնք)
- Ութ գյուղական համայնք, այն է՝ Չափնի, Սևաքար, Աճանան, Լեռնաձոր, Արծվանիկ, Քաջարան, Ըրկենանց ու Սյունիք, որոնք հանդիսանում են Կապան ու Քաջարան քաղաքային բնակավայրերը, որոնք համարվում են ազդակիր համայնքներ՝ ելնելով նշված համայնքների կենսակերպի վրա ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված տարբեր մակարդակի ազդեցություններից:

2022 թ. ԶՊՄԿ-ի կողմից կատարված սոցիալական ներդրումների ընդհանուր գումարը կազմել է 15 մլն ԱՄՆ դոլար, որի հատկացումները կատարվել են՝ ա) ԶՊՄԿ-ի բարեգործական հիմնադրամի, բ) ընկերության կողմից ուղղակի ներդրումների և գ) սուբվենցիոն ծրագրերի միջոցով: 2022 թ. բարձրագույն ղեկավարության կողմից կայացվել է սոցիալական ներդրումներն ու ծախսերը բարեգործական հիմնադրամի միջոցով կատարելու վերաբերյալ որոշում:

## 2022 թ. կարևորագույն փաստեր. համագործակցության հաջողված մոդել

**ԶՊՄԿ-ի ներդրումների զգալի մասը կատարվել է սուբվենցիոն ծրագրերի միջոցով համայնքների զարգացման հիմնական մարտահրավերները հաղթահարելու նպատակով, քանի որ համայնքները՝ սահմանափակ ռեսուրսների պատճառով, ինքնուրույն ունակ չեն լուծելու այս խնդիրները:**

**Այսպիսով, կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների ու մասնավոր սեկտորի միջև առկա է եռակողմ պայմանավորվածություն առ այն, որ բոլոր կողմերը կատարում են ֆինանսական ներդրումներ ու համատեղ ուժերով լուծում են խոշոր ենթակառուցվածքների հետ կապված հարցեր, որոնք այլապես կմնան չլուծված: Այն նաև ենթադրում է կողմերի միջև ընդհանուր գործընկերության ու ընդհանուր ռեսուրսների ձևավորում՝ համայնքների առջև ծառացած խնդիրներն ավելի թիրախավորված լուծելու, ավելի շատ օգուտներ ստանալու և ավելի լայն ոլորտներ ներառելու նպատակով:**

**Սուբվենցիոն գործընկերության խոշորագույն ներդրումը՝ մոտ 40–70 տոկոս, ապահովում է ՀՀ կառավարությունը՝ ի տարբերություն տեղական համայնքների, որոնք ունեն համեմատաբար համեստ մասնաբաժին: Մասնավոր բնագավառը ևս ունի իր կարևոր դերակատարումը, այն է՝ ապահովել մնացած ֆինանսավորումն ու համայնքների առաջնահերթ կարիքները բավարարելու համար անհրաժեշտ ռեսուրսներ:**

**2022 թ. ընթացքում, ԶՊՄԿ-ն մասնակցել է Կապանում և Քաջարանում իրականացվող տաս սուբվենցիոն ծրագրերում՝ մոտ 2.75 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարի չափով: ԶՊՄԿ-ի մասնաբաժինը կազմել է սուբվենցիոն ծրագրերի 10–40 տոկոսը՝ ապահովելով խոշոր ենթակառուցվածքների, հասարակական առողջապահական հաստատությունների և խմելու ջրի խողովակաշարերի վերանորոգում, խաղահրապարակների, սպորտային ու այլ օբյեկտների կառուցում:**

**Միայն անցած տարվա ընթացքում սուբվենցիոն ծրագրերին ուղղված ԶՊՄԿ-ի ներդրումները կազմել են ձեռնարկության՝ 2022 թ. սոցիալական ներդրումների մոտ 20%: ԶՊՄԿ-ն պարտավորվել է աջակցել ազդակիր համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ ստեղծելով այնպիսի ընդհանուր տեսլական, որում համայնքի առաջնահերթությունները, կարիքներն ու հեռանկարները կլինեն ընկերության ռազմավարական բիզնես շահերի կենտրոնում: Այս ամենն իրականացվում է սուբվենցիոն ծրագրերի միջոցով, ինչպես նաև տեղական համայնքների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավոր սեկտորի ձեռնարկությունների հետ գործընկերության ու այլ ուղղակի ներդրումների միջոցով: ԶՊՄԿ-ի համայնքային երկարաժամկետ աջակցման հանձնառությունը կլինի շարունակական՝ ի շնորհիվ մարզի ղեկավարության հետ Փոխըմբռնման հուշագրի:**

## ՏԵՂԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ

ԶՊՄԿ-ն կարևորում է տեղական շուկայի զարգացման շրջանակներում տեղական մատակարարներին աջակցելու անհրաժեշտությունը, քանի որ տեղացի մատակարարները՝ աշխատատեղեր ապահովելու և տնտեսական աճը խթանելու շնորհիվ, հանդիսանում են մարզային տնտեսության հիմնասյունը: Գնումները տեղական մատակարարներից կատարելու միջոցով՝ մենք կրճատում ենք տրանսպորտային ծախսերը, նվազեցնում ենք շրջակա միջավայրի վրա ազդեցություններն ու նպաստում ենք տեղական համայնքների զարգացմանը: Բացի այդ, տեղական մատակարարներին աջակցելու միջոցով հնարավոր է դառնում բարելավել ապրանքների որակը, քանի որ ավելի սերտ համագործակցությունը բերում է ավելի լավ հաղորդակցության ու որակի ավելի խիստ վերահսկման: Ի վերջո, տեղական մատակարարների ու զբաղվածության խթանման և զարգացման արդյունքում կնվազի հանքից և հանքի շնորհիվ ստեղծվող աշխատատեղերից կախվածությունը:

ԶՊՄԿ-ն նախատեսում է մշակել տեղական գնումների քաղաքականություն, որն իրենից ներկայացնում է տեղական կապալառուների ու ընկերությունների խթանմանն ուղղված միջոցառումների ամբողջական փաթեթ: Կարևորելով պաշտոնական թափանցիկ գնահատման գործընթացի անհրաժեշտությունը՝ Ընկերության կողմից իրականացվում է 2022 թ. գնումների վերաբերյալ տվյալների հավաքագրում և վերլուծություն՝ ներառելով տեղական մակարդակով, այն է՝ Հայաստանի բոլոր մարզերում ու հատկապես Սյունիքում իրականացված գնումները:

Մենք կողմ ենք մեր մատակարարման ցանցի դիվերսիֆիկացմանը և կարևորում ենք հատկապես տեղական մատակարարների ծառայությունները: Մեր հիմնական մատակարարները հայաստանյան ընկերություններն են, որոնք ապահովում են մեր գնումների ընդհանուր ծավալի կեսից ավելին:







Եթե դիտարկենք գնումների բաշխվածությունը ըստ Հայաստանի մարզերի, ապա գնումների գրեթե 60% կատարվում է Երևանից, մինչդեռ Սյունիքը, որտեղ գտնվում են մեր արտադրական ենթակառուցվածքները, ապահովում է գնումների ընդամենը 11%: Սա խոսում է Սյունիքի մարզից գնումների ծավալն ավելացնելու անհրաժեշտության և հնարավորությունների մասին:



ԶՊՄԿ-ն հանդիսանում է նաև ծառայությունների խոշոր սպառող, մասնավորապես, խոսքը էներգիայի սպառման, ռեկուլտիվացիոն /վերականգնման/, հորատման ու պայթեցման, հումքի վերամշակման տեխնիկական ու այլ ծառայությունների մասին է: Խոսելով մեզ տրամադրվող ծառայությունների աշխարհագրության մասին՝ մենք ուրախությամբ փաստում ենք, որ դրանց 98% տրամադրվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, իսկ Սյունիքի բաժինը, այս առումով, կազմում է ընդհանուր ծավալի մեկ երրորդը:







Այս վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել տեղական գնումների խթանման ներուժ ունեցող ոլորտները, ինչպես նաև մշակել տեղական գնումների շուկան ընդլայնելու համար պրակտիկ ու ծախսախնայող մեխանիզմներ, ինչը պետք է արտացոլվի ԶՊՄԿ-ի տեղական գնումների վերաբերյալ քաղաքականությունում:

2023 թ. նախատեսվում է կատարել տեղական հագուստ արտադրող ձեռնարկությունների վերլուծություն՝ դիտարկելով այն որպես տեղական գնումների հնարավոր աղբյուր: Նշված ձեռնարկությունները գործում են Սյունիքում և ունեն ԶՊՄԿ-ի հետ համագործակցելու լավ հնարավորություններ:

2023 թ. ընթացքում նախատեսվում է իրականացնել մատակարարների տվյալների բազայի վերլուծություն և հագուստ արտադրող տեղական ձեռնարկությունների ուսումնասիրություն՝ հաշվի առնելով տեղական տնտեսության վրա երկարաժամկետ դրական ազդեցության հնարավորությունն ու դրսևորելով տեղական գնումների հանդեպ հետևողական մոտեցում:

# ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

## ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

«ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՄԻՏՎԱԾ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՆԵՐԴՆԵԼՈՒ և ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԱՊԱՀՈՎԵԼ ԼԻԱԿԱՏԱՐ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ, ԱՅՆ Է՝ ՉՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ»: ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ, ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ և ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԻՆՏԵԳՐՎԱԾ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԿԱՐևՈՐԱԳՈՒՅՆ ԿԵՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ և ՍՏՈՒԳՈՒՄԸ:

## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

### ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԹԻՐԱԽԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

GRI [403-1, 403-7]

Մեր աշխատակիցների և Ընկերության գործունեության վայր հանդիսացող համայնքների անվտանգության ու բարեկեցության ապահովումը մեր կարևորագույն առաջնահերթությունն է: Մենք պարտավորվել ենք մեր աշխատակիցների, այցելուների և մեր գործունեության ազդեցությունը կրող բոլոր անձանց համար ապահովել անվտանգ աշխատավայր և մուտքի ու ելքի հնարավորություններ: Առկա հնարավոր վտանգները բացահայտելու նպատակով, ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակներում, մենք իրականացնում ենք Ընկերության բոլոր աշխատանքային տարածքների կանոնավոր ստուգումներ, հաշվարկում ենք ռիսկերն ու աշխատում ենք դրանց մեղմացման ուղղությամբ, իսկ մեղմացման անհնարինության դեպքում, փորձում ենք նվազեցնել դրանք մինչև ընդունելի մակարդակը: Մենք՝ առողջության ու անվտանգության թիմի կողմից իրականացվող ամենօրյա և շաբաթական ստուգումների միջոցով, իրականացնում ենք բոլոր ռիսկերի մշտադիտարկում՝ նպատակ ունենալով ապահովել զրոյական վնաս և զրոյական պատահար մեր բոլոր ենթակառուցվածքներում ու արտադրական տարածքներում:

Առողջության ու անվտանգության մասով մենք ստանձնել ենք հետևյալ պարտավորությունները՝

ՄԱԿ ԿԶՆ

- պահպանել և հետևել աշխատավայրում առողջության ու անվտանգության տեղական կանոնակարգերին ու պետական իրավական ակտերին
- կատարել Ստանդարտացման միջազգային կազմակերպության (ՍՄԿ) և Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) չափանիշներով սահմանված հանձնարարականները
- ապահովել ընկերության առողջապահության և անվտանգության ցուցանիշների արդյունավետ կառավարում
- ձգտել մեր կատարողականի և ցուցանիշների շարունակական բարելավման

Այս մասով մեր ստանձնած հանձնառություններն ամրագրված են առողջության ու աշխատանքի անվտանգության վերաբերյալ Ընկերության քաղաքականությունում, որը ներդրվել է 2022թ., և որը վերահաստատում է այս առումով մեր ստանձնած հանձնառությունները՝ հանդիսանալով ոլորտի առավել որակյալ կառավարմանն ուղղված կարևորագույն քայլ:
Ընկերության վերոնշյալ քաղաքականությունը ենթադրում է ընկերության մակարդակով անվտանգության մշակույթի շարունակական զարգացում՝ հավատարիմ մնալով միջազգային չափանիշներին ու լավագույն միջազգային փորձին, ինչպես նաև առավելագույն թափանցիկության ապահովում՝ այս ոլորտում մեր գործունեության վերաբերյալ կանոնավոր հաշվետվողականության միջոցով: Ընկերության առողջության ու անվտանգության քաղաքականությունը նախատեսում է նաև աշխատակիցների ու կապալառուների վերապատրաստում և կիրառվող ԱԱ քաղաքականության արդյունավետության կանոնավոր ստուգում՝ դրանով իսկ ապացուցելով այս ուղղությամբ ձեռնարկվող Ընկերության ջանքերը:
Ավելին, ԶՊՄԿ-ն չի սահմանափակվում ընկերության սահմաններով, այլ տարածում է իր անվտանգության քաղաքականությունը հանրության և շահագրգիռ կողմերի շրջանում՝ ապահովելով իր բիզնես գործելակերպի թափանցիկությունը:
Ընկերությունը ստանձնել է առաջնորդությանն ուղղված հանձնառություն, այն է՝ ապահովել մարդկանց անվտանգությունն ու բարեկեցությունը շարունակաբար և ընկերության բոլոր մակարդակներով ու ոլորտներում, ինչի համար անհրաժեշտ են՝ անվտանգության քաղաքականություններ ու ընթացակարգեր, համապատասխան կրթական ու վերապատրաստման միջոցառումներ, ռիսկերի կանոնավոր գնահատում և վերլուծություն, արտակարգ իրավիճակների պատրաստվածություն, անհատական պաշտպանության միջոցների կիրառում, հաշվետվողականության ու զեկուցման մեխանիզմներ, ինչպես նաև բոլորի և յուրաքանչյուրի՝ բարձրաստիճան ղեկավարից մինչև սովորական աշխատող, իրազեկվածությունը անվտանգության մշակույթի վերաբերյալ:
Մենք դիտարկում ենք աշխատավայրում առողջության ու անվտանգության ոլորտի զգալի բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված մեր այս մոտեցումը որպես ռազմավարական առաջնահերթություն և գործառնությունների բարելավման հիմնական խթանիչ: Մեր այս մոտեցման հիմքում ընկած են հետևյալ հիմնական սկզբունքները.

### ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մեր գործունեության, արտադրանքի ու ծառայությունների հետ կապված հնարավոր վտանգները բացահայտելու, գնահատելու և վերահսկելու նպատակով՝ մեր կողմից ձեռնարկվում են ռիսկերի կանոնավոր գնահատման միջոցներ: Իսկ Ընկերության գործառնությունների կամ աշխատանքային միջավայրի փոփոխություններն արտացոլելու համար նշյալ գնահատման գործընթացները պարբերաբար թարմացվում և վերանայվում են: Բացահայտված ռիսկերի կառավարման համար կիրառվում են անվտանգության վերահսկման տեխնիկական միջոցներ, անհատական պաշտպանիչ սարքավորումներ, տեխնիկական անվտանգության ընթացակարգեր և աշխատանքային տարածքների շարունակական ստուգումներ:

### ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում հետևում է աշխատանքի առողջության ու անվտանգության մասով գործող պետական օրենքների ու կանոնակարգերի պահանջներին, ինչպես նաև հաշվի է առնում ոլորտի լավագույն միջազգային փորձն ու ուղենիշները: 2022թ. Ստանդարտացման ու չափագիտության ազգային մարմնի կողմից, ԶՊՄԿ-ն արժանացել է ISO 45001 ստանդարտին:

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ և ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Մենք անչափ կարևորում ենք սպառնացող ռիսկերի և դրանց մեղմելու միջոցների վերաբերյալ աշխատողների իրազեկման և վերապատրաստման անհրաժեշտությունը: Վերապատրաստման գործընթացն ապահովում է աշխատավայրում անվտանգության վերաբերյալ ուսուցում, արտակարգ իրավիճակներին արձագանքելու կարողություններ, ինչպես նաև վտանգների նույնականացման և ռիսկերի կառավարման գիտելիքներ ու հմտություններ:

## ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունում գործող աշխատավայրում առողջության ու անվտանգության քաղաքականությունների և ընթացակարգերի վերաբերյալ իրազեկման նպատակով, մեր բոլոր աշխատակիցների, կապալառուների և բիզնես գործընկերների համար, ընկերությունում գործում են հաղորդակցման ու կապի հասանելի միջոցներ: Մենք ներգրավում ենք մեր աշխատակիցներին առողջության ու անվտանգությանը վերաբերող որոշումների կայացման գործընթացներում: Բացի այդ, Ընկերությունում գործում է «Վտանգավոր իրավիճակների մասին զեկուցման» թեժ գիծ:

## ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Մենք փորձում ենք մշտապես բարելավել աշխատավայրում առողջության և աշխատանքի անվտանգության մասով մեր կատարողականը տարատեսակ չափման մեթոդների ու գործիքների միջոցով, այդ թվում նաև՝ մշտադիտարկելով վնասվածքների և ժամանակավոր անաշխատունակության հանգեցնող վնասվածքների քանակը և հնարավոր վթարների վերաբերյալ տվյալները: Մենք մանրակրկիտ ձևով ուսումնասիրում ենք բոլոր պատահարները՝ խորքային պատճառները պարզելու, ուղղիչ միջոցներ ձեռնարկելու և դրանց կրկնությունը կանխելու նպատակով, ինչպես նաև պարբերաբար ստուգում ենք ընկերությունում գործող առողջության և անվտանգության կառավարման համակարգերը՝ բարելավման ենթակա ոլորտները բացահայտելու նպատակով:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԻՐԱՌՈՒՄ ԲԻԶՆԵՍ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Մենք փորձում ենք կիրառել աշխատավայրում առողջության ու անվտանգության մեր չափորոշիչները կապալառուների, մատակարարների և այլ գործընկերների հետ հարաբերություններում: Ինչը նշանակում է, որ կապալառուների ընտրությունը կատարվում է ելնելով անվտանգության նկատմամբ վերջիններիս մոտեցումից՝ դրանով իսկ ապահովելով նրանց կողմից աշխատավայրում առողջության և անվտանգության պահանջների պատշաճ կատարումը: Կապալառուների աշխատանքների կառավարման պահանջները ձևակերպված և ամրագրված են կապալառուների կառավարման ընթացակարգում:

ԶՊՄԿ-ն ուղղորդվում և ղեկավարվում է Ընկերության որդեգրած մարդու իրավունքների քաղաքականությամբ սահմանված և աշխատակիցների բարեկեցությանն ու անվտանգությանը վերաբերող սկզբունքներով: Վերոնշյալ քաղաքականությամբ ամրագրված է մեր այն հանձնառությունը, որով մենք պարտավորվում ենք ստեղծել ու պահպանել անվտանգության ու առողջապահության իրավական ակտերին, կանոններին ու ներքին հրահանգներին համապատասխանող պատշաճ աշխատանքային միջավայր: Աշխատակիցների հետ համագործակցելու միջոցով՝ մենք փորձում ենք ստեղծել և պահպանել այնպիսի աշխատանքային միջավայր, որը կլինի անվտանգ ու առողջ և, միևնույն ժամանակ, թույլ կտա բացահայտել ու մեղմել հնարավոր ռիսկերը՝ ամեն տեսակի վթարներից ու առողջության վրա բացասական ազդեցություններից խուսափելու նպատակով: Նման միջոցներ ձեռնարկելով՝ մենք փորձում ենք պահպանել գերազանցության չափանիշը մեր բոլոր աշխատակիցների համար անվտանգ, առողջ և արդյունավետ աշխատավայր ապահովելու հարցում:

> 2022 թ. ընթացքում մենք շարունակել ենք աշխատանքի անվտանգության մասով կայուն ցուցանիշներ ապահովելուն ուղղված մեր աշխատանքները, որի արդյունքում՝
>
> - 2022 թ. մահվան ելքով որևէ պատահար չի գրանցվել,
> - 2022 թ. Ընկերությունը չի տուգանվել՝ անվտանգության կանոնները չպահպանելու հիմքով,
> - մեր կողմից շահագործվող տարածքներում, կապալառուների մասնակցությամբ որևէ պատահար չի գրանցվել:

Մենք պարտավորվել ենք շարունակաբար բարելավել առողջության, աշխատանքի անվտանգության ու կայուն զարգացման մասով մեր կատարողականը և այս հանձնառության համապատասխան՝ նախանշել ենք մեր ԲՍԿ ռազմավարությամբ սահմանված հիմնական նպատակներն ու գործողությունները:

| ՆՊԱՏԱԿ | ԽՆԴԻՐ | ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ | ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ |
|---|---|---|---|
| ISO 45001 չափանիշի ներդրում և պահպանում | Ապահովել ընկերությունում գործող անվտանգության միջոցների ու մեթոդների համապատասխանությունը միջազգային ամենաբարձր չափանիշներին | ISO 45001 անվտանգության չափանիշի լիարժեք ներդրում և պահպանում ընկերության գործունեության բոլոր ոլորտներում | ISO 45001 չափանիշի ներդրման ավարտվածության աստիճանը՝ տոկոսային արտահայտմամբ, ինչպես նաև ընթացիկ ստուգումներ և վկայագրման փուլեր |
| Անվտանգության ապահովման ոլորտում խրախուսման և կարգապահական պատասխանատվության համակարգի ներդրում | Աշխատավայրում սահմանված անվտանգության պահանջների կատարման համար կիրառել խրախուսման և պարգևատրման միջոցներ՝ միևնույն ժամանակ պատասխանատվության ենթարկելով սահմանված պահանջները խախտող անձանց | Աշխատողների նկատմամբ կիրառվող խրախուսանքի և կարգապահական պատասխանատվության հավասարակշռված մեխանիզմի ներդրում ընկերության՝ առողջության ու աշխատանքի անվտանգության կանոնակարգերում | Աշխատանքի անվտանգության հետ կապված պատահարների նվազում, ինչպես նաև կանոնավոր հարցումներ աշխատողների շրջանում |
| Աշխատանքի պաշտպանության և արդյունաբերական անվտանգության ցուցանիշների բարելավում | Անվտանգության ընդհանուր ցուցանիշների բարելավման միջոցով ապահովել աշխատավայրում տեղի ունեցող պատահարների քանակի շարունակական նվազեցում | Աշխատանքի անվտանգության հիմնական ցուցանիշների, այդ թվում՝ ժամանակավոր անաշխատունակության հանգեցնող պատահարների/վնասվածքների (LTI, ԺԱՅՊ) և ժամանակավոր անաշխատունակության հանգեցնող պատահարների/վնասվածքների հաճախականության (LTIFR, ԺԱՅՊՅ) ցուցանիշների զգալի բարելավում | Կանոնավոր հաշվետվողականություն ԺԱՅՊ և ԺԱՅՊՅ, ինչպես նաև անվտանգության այլ ցուցանիշների վերաբերյալ, նախորդ ժամանակահատվածների հետ համեմատական վերլուծություն |
| ԲՍԿ ու աշխատանքի անվտանգության վերաբերյալ դասընթացների կազմակերպում | Ապահովել ԲՍԿ սկզբունքների և անվտանգության առաջատար տեխնոլոգիաների վերաբերյալ համայնքի ու աշխատողների իրազեկվածությունը | ԲՍԿ և աշխատանքի անվտանգության թեմաներով կանոնավոր վերապատրաստման դասընթացներ ինչպես տեղական համայնքների, այնպես էլ ընկերության անձնակազմի համար | Կազմակերպված դասընթացների և վերապատրաստման միջոցառումների և մասնակիցների քանակն ու հետուսումնական ստուգման արդյունքները |

## ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

GRI [403-1, 403-2, 403-3, 403-8, 403-9]

Մեր կողմից սահմանվել և կիրառվում է աշխատավայրում առողջության ու անվտանգության բարձր չափանիշներ ապահովող իրավական շրջանակ, որի կառավարման համակարգի հիմքում դրվել են տեղական ու համաշխարհային չափանիշներն ինտեգրող պետական և միջազգային օրենքներ ու կանոնակարգեր: Այս համակարգը թույլ է տալիս մեր աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունն ապահովելու համար կիրառել լավագույն միջազգային փորձը:

Տվյալ համակարգի հիմքը հանդիսացող ռիսկերի կառավարման մոտեցման շնորհիվ մենք կարողանում ենք նույնականացնել, հայտնաբերել, կարևորել և մեղմել համապատասխանության ապահովման հետ կապված ամենաէական ռիսկերը: Սեփական չափանիշներ ու ուղեցույցներ սահմանելիս՝ մենք առաջնորդվում ենք ISO, ILO, IFC և ISF համաշխարհային հայտնի չափանիշներով:

**Առողջության ու աշխատանքի անվտանգության համակարգը կիրառելի է և վերաբերում է Ընկերության բոլոր աշխատակիցներին, կապալառուներին ու այցելուներին (100%), հատկապես այն անձանց, ովքեր ներգրավված են բարձր ռիսկայնության գործողություններում: Մենք քաջ գիտակցում ենք, որ վտանգավոր կամ վնասակար պայմաններում աշխատողների համար անհրաժեշտ է սահմանել առողջության ու անվտանգության ամենախիստ ու համապարփակ ուղեցույցներ:**

Մեր համոզմամբ՝ Ընկերության առողջության ու աշխատանքի անվտանգության կառավարման համակարգում անհրաժեշտ է ներառել ինչպես Ընկերության վարչական աշխատողներին, այնպես էլ բոլոր այն անձանց, ովքեր չեն հանդիսանում ԶՊՄԿ-ի անմիջական աշխատակից, սակայն Ընկերությանը տրամադրում են ծառայություններ: Ընկերության կողմից կիրառվող կապալառուների կառավարման ընթացակարգը՝ իր հստակ ձևակերպված դրույթների ու պահանջների շնորհիվ, ապահովում է մեր ողջ գործունեության և բոլոր ոլորտների համապատասխանությունը առողջության ու անվտանգության ամենաբարձր չափանիշներին:

**ԶՊՄԿ-ում կիրառվող «Ընկերության տարածքում գործող կապալառուների կառավարում» չափանիշի համաձայն, մենք ձգտում ենք ապահովել Ընկերության տարածքում աշխատող կապալառուների առողջությունն ու անվտանգ աշխատանքը: Մեր կարծիքով, մեր կապալառու ընկերությունների գործունեությունը կազմում է մեր սեփական գործունեության մաս, հետևաբար, նրանց առողջության ու անվտանգության ապահովումը բխում է մեր հանձնառություններից:**

Ընկերության կառավարման համակարգի արդյունավետությունը ստուգելու նպատակով, պարբերաբար անցկացվում են ներքին մանրակրկիտ ստուգումներ /աուդիտներ/, որոնց ընթացքում գնահատվում է անվտանգության պահանջների կատարման արդյունավետությունը և բացահայտվում են հնարավոր ռիսկեր, ինչպես նաև տրվում են բարելավմանն ուղղված հանձնարարականներ: Նման աուդիտների ընթացքում կատարվում է Ընկերության մոտ 3 500 աշխատակցի և կապալառու ընկերությունների մոտ 500 աշխատակցի, ինչպես նաև ընկերության գործունեության բոլոր մակարդակներում կիրառվող աշխատանքի անվտանգության միջոցների ստուգում: Նման ստուգումներից ստացված արդյունքներն օգնում են հստակեցնելու աշխատանքի անվտանգությանն ուղղված մեր միջոցառումները, առաջարկել պրակտիկ լուծումներ աշխատավայրի անվտանգության խթանման նպատակով, ինչպես նաև հասնել մեր գերակա նպատակին, այն է՝ զրոյական պատահար աշխատավայրում:

Արտադրական վնասվածքներին ու հիվանդություններին վերաբերող ընդգրկուն փաստաթղթերը ծառայում են որպես դրանց հետագա կանխարգելման միջոց: Հիվանդությունների ու վնասվածքների վերաբերյալ մանրամասն տվյալները թույլ են տալիս ավելի լավ պատկերացում ստանալ խնդրահարույց ոլորտների մասին և գտնել դրանց բարելավման հնարավորությունները:

Մենք՝ կայուն զարգացման միջոցով, ցանկանում ենք հասնել այն մակարդակին, որտեղ հնարավոր կլինի ապահովել ամենախիստ չափանիշներին համապատասխանող առողջության և անվտանգության համակարգ և այդ համակարգը կիրառող պատշաճ որակավորմամբ մասնագետներ, ինչի համար կիրառում ենք առողջության և աշխատանքի անվտանգության չափման տարատեսակ ցուցանիշներ, մասնավորապես՝ հնարավոր վտանգավոր իրավիճակների, պատահարների ու վթարների վիճակագրական տվյալներ:

Ուղղորդվելով «Ծրագրել-Իրականացնել-Ստուգել-Գործել» մոդելով՝ մենք պարտավորվել ենք բարելավել աշխատանքի անվտանգության միջոցառումների որակը, որն իր հերթին կնպաստի ընկերության՝ առողջության և անվտանգության կառավարման համակարգի շղթայական ու շարունակական բարելավմանը: Այս գործընթացը համապատասխանում է անվտանգության կառավարման ոլորտի լավագույն միջազգային փորձին, քանի որ ապահովվում է անվտանգության միջոցառումների ճկունությունը և մշտապես առաջացող մարտահրավերների ու փոփոխվող պայմանների նկատմամբ հարմարվողականությունը:

## 1 ԾՐԱԳՐԵԼ

Մենք սահմանում ենք անվտանգ աշխատանքի նպատակներ և խնդիրներ, նույնականացնում ենք հնարավոր վտանգներն ու ռիսկերը՝ դրանց հաղթահարմանն ուղղված անվտանգության միջոցառումներ պլանավորելու նպատակով: Սա ենթադրում է անվտանգության քաղաքականությունների, ընթացակարգերի և կանխարգելիչ ռազմավարությունների մշակում:

## 2 ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ

«Իրականացնել» նշանակում է գործարկել մեր կողմից մշակված անվտանգության քաղաքականություններն ու ընթացակարգերը, վերապատրաստել աշխատողներին և իրական աշխատանքային միջավայրում ամենօրյա հաճախականությամբ իրականացնել աշխատանքի անվտանգության միջոցառումներ:

## 3 ՍՏՈՒԳԵԼ

Մենք իրականացնում ենք անվտանգության միջոցառումների արդյունավետության մշտադիտարկում և գնահատում՝ հավաքում ենք անհրաժեշտ տվյալներ, իրականացնում ենք անվտանգության ստուգումներ և գնահատում ենք «Ծրագրել» բաժնում նշված նպատակների և թիրախային ցուցանիշների կատարումը: Այս գործընթացն օգնում է բացահայտել բարելավման կարիք ունեցող ոլորտները:

## 4 ԳՈՐԾԵԼ

Վերջին փուլում, ելնելով «Ստուգել» փուլի արդյունքներից, մենք իրականացնում ենք բացահայտված թերությունների շտկմանն ու անվտանգության միջոցառումների բարելավմանն ուղղված գործողություններ: Վերջինս ենթադրում է քաղաքականությունների և ընթացակարգերի համապատասխանեցում, աշխատողների վերապատրաստում և անվտանգության ապահովմանն ուղղված լրացուցիչ միջոցների ձեռնարկում:

2022 թ. մենք հայտնել ենք ժամանակավոր անաշխատունակության հանգեցնող միջին ծանրության հինգ (5) վնասվածքի մասին: Ժամանակավոր անաշխատունակության հանգեցնող վնասվածքների հաճախականությունը նշված տարում կազմել է 0.61*: Մեր վերլուծության համաձայն՝ 2022 թ. արձանագրված վնասվածքները հիմնականում առաջացել են սայթաքելու, սահելու, ընկնելու և բարձրությունից վայր ընկնելու պատճառով:

GRI [403-9]

| ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | 2021 | 2022 |
|---|---|---|
| Օրական/շաբաթական հաճախականությամբ, հանքի տարածքում և տարածքից դուրս, առողջության և աշխատանքի անվտանգության ու բնապահպանական պահանջների կատարման ստուգումներ | 298 | 505 |
| Տեղում իրականացված ռիսկերի գնահատման միջոցառումներ | 26 | 24 |
| ԲՍԿ պահանջների վերաբերյալ անցկացված դասընթացներ | | |
| ՉՊՄԿ-ի անձնակազմ | 979 | 696 |
| Ներածական դասընթաց՝ անձնակազմի/այլոց համար | 188 | 218 |
| Կապալառուներ և ենթակապալառուներ | 33 | 126 |
| Աշխատանքի հետ կապված պատահարներ | | |
| Ընդամենը՝ մարդ/ժամ | 7,924,904 | 8,016,696 |
| Գույքի վնասում (մեքենաներ և բեռնատարներ) | 14 | 27** |
| Առաջին օգնության դեպքեր | 251 | 294 |
| Ճանապարհատրանսպորտային պատահարներ | 2 | 6 |
| Բնապահպանական պատահարներ | 2 | 8 |
| Ժամանակավոր անաշխատունակության դեպքեր | 3 | 5 |
| Մահվան դեպքեր | 0 | 0 |
| ԺԱՅՊՀ | 0.38 | 0.62 |



* Ժամանակավոր անաշխատունակության հանգեցնող վնասվածքների հաճախականությունը հաշվարկվում է յուրաքանչյուր միլիոն ժամ աշխատանքի կտրվածքով:
** Որոնցից 3-ը հանքի շահագործման սարքավորումների վնասում է

2022 թ. ընթացքում կապալառուների մասնակցությամբ Ընկերության գործառնական տարածքներում որևէ պատահար չի արձանագրվել:
Մենք վերանայել ենք նաև ԺԱՅՊ-երի հաշվարկման կարգը, ինչի պատճառով ունեցել ենք ԺԱՅՊ-ի աճ նախորդ տարվա արդյունքներով և ինչի պատճառով ակնկալում ենք ԺԱՅՊ-երի արձանագրված դեպքերի աճ 2023 թ.:
Կարևորելով պատահարները/վթարները ժամանակին ու մանրակրկիտ հետաքննելու անհրաժեշտությունը՝ ԶՊՄԿ-ն պարտավորվել է պարզել նման դեպքերի սկզբնապատճառներն ու մշակել կանխարգելիչ ռազմավարություններ՝ հետագայում դրանց կրկնությունից խուսափելու նպատակով: Մենք իրականացնում ենք Ընկերության աշխատակիցների, կապալառուների և այցելուների մասնակցությամբ Ընկերության տարածքներում տեղի ունեցող բոլոր պատահարների ու վթարների համապարփակ հետաքննություն: ՀՀ օրենքների համաձայն և «Պատահարների պատճառների վերլուծության մեթոդ» /ՊՊՎՄ/-ով սահմանված կարգով, յուրաքանչյուր դեպքի հետաքննության արդյունքներով կազմվում է վտանգների նույնականացման և ռիսկերի գնահատման մանրամասն հաշվետվություն, որն օգնում է ձևակերպել և իրականացնել ուղղիչ միջոցառումներ՝ պատահարների հետևանքները կառավարելու և առավել անվտանգ և խստապահանջ աշխատավայրում առողջության ու անվտանգության կառավարման համակարգ ձևավորելու համար:

## ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ և ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

GRI [403-4, 403-5, 403-8]

ԶՊՄԿ-ն պարտավորվել է ապահովել Ընկերության աշխատողների և ղեկավարության միջև բաց և թափանցիկ հաղորդակցման հնարավորություններ՝ նպատակ ունենալով ստեղծել մի միջավայր, որտեղ հնարավոր կլինի Ընկերությունում գործող հաշվետվողականության կանոնակարգերով սահմանված կարգով, հավանական վտանգների ու վտանգավոր իրավիճակների վերաբերյալ, վարել երկխոսություն: Մեր տարածքներում գործող կապալառուները պարտավոր են՝ նույն կարգով և նույն չափով, հետևել վերոնշյալ կանոնակարգերին: Մեր կողմից թարմացվել է նաև «Վտանգավոր իրավիճակներ»-ի մասին զեկուցման համակարգը և ներդրվել են հաղորդակցման կանոններ՝ նշված քննարկումներն արդյունավետ անցկացնելու նպատակով:

**Մենք սատարում ենք և հաստատում ենք աշխատակիցների այն իրավունքը, համաձայն որի՝ յուրաքանչյուր աշխատող կարող է հրաժարվել ցանկացած առաջադրանքից, որը նա համարում է իր կյանքի կամ առողջության համար վտանգավոր:**

ԶՊՄԿ-ն համարում է, որ աշխատակիցների ակտիվ մասնակցությունն ու խորհրդատվությունը հանդիսանում են աշխատավայրում առողջության և անվտանգության կառավարման համակարգի հենասյուն: Աշխատակիցների առավելագույն իրազեկվածության ու մասնակցության ապահովման նպատակով, մեր կողմից գործարկվել են տարբեր միջոցներ, այն է՝ պաշտոնական հանդիպումներ գծային ղեկավարների հետ, աշխատանքի անվտանգության վերաբերյալ փորձի փոխանակում և թեմատիկ քննարկումներ: Աշխատողներն ակտիվորեն ներգրավված են վտանգների բացահայտման, ռիսկերի գնահատման և ռիսկերի կառավարման վերաբերյալ որոշումներ կայացնելու գործընթացներում: Մասնակիցներին տրամադրվող տեղեկությունները վերաբերում են նախկինում գրանցված պատահարների համապարփակ ուսումնասիրությանը, հնարավոր վտանգներին ու ձեռնարկված ուղղիչ միջոցառումներին:
Հաշվի առնելով անվտանգ աշխատանքի և ռիսկերի գնահատման լավագույն միջազգային փորձը՝ մենք վստահորեն կարող ենք ասել, որ անվտանգ վարքագիծն անքակտելիորեն կապված և կախված է հնարավոր վտանգների և անվտանգ աշխատանքի ընթացակարգերի վերաբերյալ իրազեկվածությունից: Աշխատանքային վայրում առկա վտանգների ու ռիսկերի մասին աշխատողի իրազեկվածությունն օգնում է ճանաչել վտանգավոր պայմաններն ու վարքագիծը, ինչը վթարների և պատահարների կանխարգելման առաջին քայլն է: Ավելին, հետևյալ անվտանգության ուղեցույցների կարևորության գիտակցումն ու սեփական պատասխանատվության ընկալումը ևս բարձրացնում են համապատասխանության մակարդակը:

Աշխատակիցներին ու կապալառուներին տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն ու ուսուցման հնարավորություններ՝ մենք ապահովում ենք առաջադրանքներն անվտանգ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ: Հետևաբար, մենք կարևորում ենք մեր տարածքներում աշխատող բոլոր անձանց համապարփակ ուսուցման անհրաժեշտությունը մասնագիտական առողջության ու աշխատանքի անվտանգության առումով՝ համարելով այն իրազեկվածության բարձրացման, կատարողականի բարելավման, արդյունավետության խթանման ու անվտանգության մշակույթի հիմնական գործիք:

**ԶՊՄԿ-ն իր աշխատակիցների և կապալառուների համար կազմակերպում է համապարփակ հատուկ դասընթացներ ու ծրագրեր, որոնց ուսումնական ծրագրերը մանրակրկիտ մշակված են՝ անվտանգության վերաբերյալ ընդգրկուն տեղեկատվություն տրամադրելու և միաժամանակ մասնագիտական հմտություններ ձևավորելու նպատակով:**

Մեր ուսումնական գործընթացը սկսվում է ԶՊՄԿ-ի տարածք մուտք գործող յուրաքանչյուր անձի պարտադիր ներածական հրահանգավորմամբ, որն ընդհանուր պատկերացում է տալիս անվտանգության մեր մշակույթի և ընթացակարգերի մասին ուսուցման գործընթացի հետագա փուլերին անցնելու համար:

Ընկերությունում կազմակերպվում են նաև աշխատակիցների մասնագիտական հմտությունների զարգացման ու ամրապնդման դասընթացներ: Թիրախային ուսումնական մոդուլները թույլ են տալիս ընկերության աշխատակիցներին զինել մասնագիտական աշխատանքային միջավայրում ապահով ու վստահ գործելու համար անհրաժեշտ գիտելիքներով և հմտություններով: Բացի այդ, մենք կարևորում ենք նաև իրավական կանոնակարգերով սահմանված վերապատրաստման և ուսուցման գործընթացների հաճախականությունն ու պարբերականությունը: Դասընթացներն ապահովում են ոչ ստանդարտ մասնագիտությունների, այն է՝ կռունկավարների, հորատողների, ճնշումային սարքավորումների օպերատորների և պայթեցման մասնագետների համապատասխան վերապատրաստումն ու որակավորումը՝ աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման նպատակով: Դասընթացների հաճախականությունը կախված է կատարվող գործառույթների բնույթից և տատանվում է տարեկան մեկ անգամից մինչև երեք տարին մեկ անգամ միջակայքում: Որակավորման և որակավորման բարձրացման դասընթացները կազմակերպվում են ելնելով տրամադրվող վկայականի ժամկետից: Գործընթացը մեկնարկում է մինչև վկայականի ժամկետի ավարտը՝ գործող օրենքների պահանջներն ապահովելու նպատակով:




Ընկերության աշխատակիցների **մոտ 29%** ստացել են արտաքին կազմակերպությունների կողմից շնորհվող առողջության և աշխատանքի անվտանգության արտոնագրեր, որոնք պարտադիր են բարձր ռիսկայնության աշխատանք կատարող անձանց համար և հաստատում են մասնագիտական վտանգները կառավարելու վերջիններիս որակավորումն ու իրավունքը: Աշխատանքային թույլտվություն ստանալու համար նշյալ վկայագրերի առկայությունը պարտադիր է ինչպես մեր աշխատակիցների, այնպես էլ կապալառուների համար: Չնայած որ կապալառու ընկերությունները պարտավոր են ինքնուրույն ապահովել սեփական աշխատակիցների արտոնագրումը, այնուամենայնիվ, ԶՊՄԿ-ն իրականացնում է նշյալ պահանջի պատշաճ վերահսկողություն՝ անվտանգ աշխատանքային միջավայր պահպանելու մեր հանձնառության շրջանակներում:

**2022թ. կարևորագույն ձեռքբերումները. Անվտանգ վարքագծի խթանում**

**2022թ. ՉՊՄԿ-ում առաջին անգամ կազմակերպվեց վարորդական հմտությունների զարգացման (վթարային կառավարման) դասընթաց:**

**Ճանապարհների անվտանգության ու երթևեկության կանոնների պահպանումը լուրջ խնդիր է Հայաստանի մարզերի, անգամ քաղաքային բնակավայրերի համար, հետևաբար, անվտանգության մակարդակի բարձրացման և ճանապարհատրանսպորտային պատահարների նվազեցման նպատակով մենք կազմակերպում ենք վթարային կառավարման դասընթացներ:**

**Կարևորելով Ընկերության տեխնիկական միջոցների անվտանգ շահագործման/կառավարման անհրաժեշտությունը՝ 2022թ. ուղևորատար մեքենաների վարորդների համար, Հայաստանում ճանաչված «X-Drive» ընկերության կողմից, անցկացվեցին տեսական ու գործնական դասընթացներ:**

**ՉՊՄԿ-ում տարիներ շարունակ ընդունված էր առանց ամրագոտի վարելու պրակտիկան, ինչն անվտանգության առումով մեծ խնդիր էր առաջացնում ինչպես Ընկերության տարածքում, այնպես էլ Ընկերության տարածքից դուրս: 2022 թ. ներդրվեց նոր համակարգ, որի համաձայն ոչ ապահով և վտանգավոր երթևեկության, այդ թվում՝ ամրագոտի չկրելու համար, սահմանվեցին պատասխանատվության միջոցներ: 2022 թ. ընկերության ՄՌ բաժինը՝ կապի բաժնի օգնությամբ, կազմակերպեցին անվտանգ երթևեկության վերաբերյալ մի շարք ներածական ու անվտանգության թեմաներով դասընթացներ, որոնց նպատակն է 2023 թ. ամբողջականացնել կարգապահական համակարգի ներդրումը:**

**Պատժային համակարգի ներդրումը հանգեցրեց տեսանելի վարքագծային փոփոխությունների /առնվազն այն առումով, որ Ընկերության տարածքում ամրագոտի կրելը դարձավ պարտադիր գործելակերպ/, և մենք հավատացած ենք, որ կարողությունների ձևավորման և գիտելիքների ապահովմանն ուղղված նման միջոցները կհանգեցնեն երկարաժամկետ վարքագծային փոփոխությունների ու մշակույթի բարելավման:**

**Մեր ուսումնական ծրագրի շրջանակներում ցուցադրվում են ոչ սթափ վարելու բացասական հետևանքներն ու ամրագոտի և այլ անվտանգության միջոցների կիրառման օգուտները ներկայացնող վիզուալ նյութեր:**

**Ընդհանուր առմամբ, դասընթացներին մասնակցել է մոտ 125 վարորդ՝ ստանալով մասնակցության վկայական: Նման դասընթացները նախատեսվում է դարձնել կանոնավոր:**

## ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ

GRI [403-6, 403-10]

ԶՊՄԿ-ում, մենք փորձում ենք ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ հնարավոր կլինի ապահովել մեր աշխատակիցների ֆիզիկական ու հոգեկան առողջությունը: Այս նպատակով Ընկերության կողմից սահմանված է՝ **մինչև աշխատանքի անցնելն ու աշխատանքի ընթացքում պարտադիր մանրակրկիտ բժշկական ստուգման պահանջ**: Նշված բժշկական ստուգումներն իրականացվում են ՀՀ առողջապահության նախարարության կողմից 29.06.2002թ. սահմանված չափանիշներով և ՀՀ կառավարության թիվ 867 որոշմամբ նախատեսված կարգով:

Նման ստուգումներն ապահովում են առողջության դինամիկ հսկողության, մասնագիտական հիվանդությունների վաղ հայտնաբերման, վթարների կանխարգելման և հատկապես վտանգավոր կամ ռիսկային միջավայրում աշխատողների համար անվտանգ աշխատանքային պայմաններ ստեղծելու հնարավորություններ: Այս կարևոր միջոցը երաշխավորում է մեր աշխատակիցների ֆիզիկական ու հոգեկան պիտանելիությունն ու հանքարդյունաբերական ոլորտի մասնագիտական մարտահրավերները հաղթահարելու պատրաստվածություն:

Ելնելով կանոնավոր բժշկական ստուգումների արդյունքներից, մեր աշխատակիցների շրջանում ամենատարածված առողջական խնդիրներն են՝ բարձր ճնշումը, քրոնիկ սիրտանոթային հիվանդություններն ու ողնաշարի հետ կապված խնդիրները: Բժշկական ստուգումների արդյունքում որևէ աշխատակցի մոտ մասնագիտական ու աշխատանքային պարտականությունների կատարման առումով հակացուցումներ հայտնաբերելու դեպքում, տվյալ աշխատակցին տրվում են այլ տեսակի աշխատանքային պարտականություններ՝ սահմանված խիստ ընթացակարգի համաձայն: Դրանով իսկ մենք կարողանում ենք խուսափել խնդիրներից և չվտանգել մեր աշխատակիցների առողջական վիճակը՝ իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում:

**Բժշկական ստուգումների արձանագրությունների համաձայն՝ վերջին հինգ տարվա ընթացքում Ընկերությունում չի արձանագրել որևէ մասնագիտական հիվանդություն կամ մասնագիտական հիվանդությունների կանխարգելման հետ կապված մահվան ելքով պատահար:**

Մենք Ընկերության բոլոր կապալառու ընկերություններից ակնկալում և պահանջում ենք նմանատիպ բժշկական ստուգումներ իրենց բոլոր աշխատակիցների համար: ԶՊՄԿ-ն սահմանում է նույնպիսի բարձր չափանիշներ իր կապալառու ընկերությունների համար՝ դրանով իսկ խթանելով համապարփակ բժշկական ստուգումների մշակույթը իրենց ղեկավարության ներքո աշխատող բոլոր աշխատակիցների առողջությունն ու անվտանգությունն ապահովելու նպատակով: Այս եղանակով ԶՊՄԿ-ն ապահովում է նման կարևորագույն առողջապահական ծառայությունների որակն ու հասանելիությունը՝ վերահաստատելով անվտանգ, առողջ և արդյունավետ աշխատանքային միջավայր ստեղծելու Ընկերության հանձնառությունը:

Մեր կարծիքով, ընկերության աշխատակիցների բարվոք վիճակի գնահատումը չի կարող սահմանափակվել նրանց մասնագիտական պարտականությունների կատարման ժամանակ արձանագրվող վիճակով, այլ պետք է ներառի նրանց ընդհանուր առողջական վիճակն ու կենսակերպը: Այս առումով, մենք պարտավորվել ենք մեր աշխատակիցների համար ապահովել ոչ միայն իրենց մասնագիտական պարտականություններին վերաբերող բժշկական ու առողջապահական ծառայություններ, այլ նաև առաջարկում ենք ավելի լայն ծառայությունների շրջանակ: Պայմանագրային հարաբերություններ ստեղծելով բազմաթիվ տեղական կլինիկաների և առողջապահական ծառայություններ մատուցող ընկերությունների հետ՝ մեր ընկերության կողմից տրամադրվող բժշկական ապահովագրության շրջանակներում և ֆինանսական աջակցությամբ, մեր աշխատակիցներն ու նրանց ընտանիքի անդամները կարող են օգտվել լայնածավալ բժշկական ծառայություններից, որոնք ներառում են՝ տարեկան կանխարգելիչ հետազոտություններ, ստացիոնար և ամբուլատոր բժշկական օգնություն, քրոնիկ հիվանդությունների բուժում և այլն: Առողջապահությանն ուղղված Ընկերության ծախսերը գերազանցում են 1.27 մլն ԱՄՆ դոլարը:

Առողջապահական աջակցության նկատմամբ մեր այս բազմակողմ մոտեցման շնորհիվ, մեր աշխատակիցները կարող են օգտվել տարատեսակ բժշկական ու առողջապահական ծառայություններից՝ դրանով իսկ պահպանելով սեփական առողջությունն ու բարեկեցությունը:

Մենք կարևորում ենք ընդհանուր առողջության ապահովման առումով մեր աշխատակիցների ֆիզիկական պատրաստվածության դերը և ձեռնարկում ենք ակտիվ միջոցներ՝ նրանց շրջանում կանոնավոր ֆիզիկական մարզումների մշակույթ ձևավորելու նպատակով, քանի որ գիտակցում ենք մեր ոլորտի պահանջներից բխող պատշաճ ֆիզիկական պատրաստվածության անհրաժեշտությունն ու բոլոր հնարավոր ռիսկերը:
Աշխատակիցների շրջանում սպորտային ծրագրերի կազմակերպումը մեր՝ նմանատիպ նախաձեռնություններից է: Մենք ստեղծել և ակտիվորեն աջակցում ենք մասնավորապես ֆուտբոլային թիմին՝ դրանով իսկ հնարավորություն տալով մեր աշխատակիցներին զբաղվել կանոնավոր ֆիզիկական վարժություններով, ստեղծել ընկերական հարաբերություններ և վարել առողջ կենսակերպ: Մեր այս սպորտային թիմերը ոչ միայն կարողանում են հաջողություններ գրանցել, այլ նաև նպաստում են առողջ մրցակցության և ընդհանուր առմամբ աշխատակիցների ներգրավվածությանն ու բարոյականությանը:

## ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Քաջ գիտակցելով պոչամբարային տնտեսության ենթակառուցվածքների կառավարման ռիսկերը՝ ԶՊՄԿ-ն որդեգրել է նախաձեռնողական ակտիվ կառավարման մոտեցում: Այս առումով, համաշխարհային փորձագետների և կազմակերպությունների հետ համագործակցությունն օգնում է ավելի լավ պատկերացում ունենալ և լրամշակել ընկերության կատարողականի կառավարման մեխանիզմները: Մասնավորապես, իրականացվում են հետևյալ միջոցառումները՝

### ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆՔ

Մենք զգալի առաջընթաց ենք գրանցում ռեկուլտիվացման /տարածքների վերականգնման/ ու կայունացման միջոցների կիրառման առումով, մասնավորապես հորիզոնական դրենաժային համակարգի և հետլիցքի միջոցով: Կայունության ամրապնդման համար նախատեսված այս համակարգը փաստում է փորձագետների կողմից տրված խորհուրդների համաձայն կառուցվածքային բարելավումներ ապահովելու մեր ընկերության հանձնառության կատարումը: Չնչին տեղաշարժերն արձանագրող մեր մշտադիտարկման համակարգն արդեն իսկ տեղադրվել և գործում է՝ թույլ տալով արագորեն կայացնել անհրաժեշտ որոշումներ և ձեռնարկել վերականգնման աշխատանքներ:

### ՋՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ



Մենք նախաձեռնել ենք ստորգետնյա ջրերի ուղղահայաց ճնշման կրճատմանն ուղղված որոշակի ծրագրեր:

### ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՋՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գործարկվել է մակերեսային ջրի կառավարման պլան, մասնավորապես՝ Արծվանիկի պոչամբարի պատվարի արևելյան վերջնամասում և բացահանքի ողջ պարագծով, որի նպատակն է՝ զգալիորեն կրճատել ջրի ներթափանցման ծավալներն ու մեղմել դրա հետ կապված ռիսկերը:




### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Մեր գործողությունները /ստորերկրյա ջրերի կոնդիցիաների գնահատումից մինչև պոչամբարի ընդլայնման տարբերակների հետազոտում/ մշակվում և նախագծվում են փորձագիտական հանձնարարականների ու շարունակական խորհրդատվությունների և վերլուծությունների համաձայն:

### INSAR ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Նոր տեխնոլոգիաների կիրառման նպատակով՝ մենք դիտակում ենք Ինտերֆերոմետրիկ սինթետիկ ապերտուրով ռադարի միջոցով մշտադիտարկման հնարավորությունը, որը հանդիսանում է հատկապես սողանքների տարածքներում հողի մակարդակի փոփոխությունների վերաբերյալ հստակ տվյալներ ապահովող ժամանակակից լուծում:

## ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշխատակիցներից, բնապահպանական փորձագետներից և համայնքի ներկայացուցիչներից ստացվող արձագանքներն օգնում են ավելի խորն ու բազմակողմանի ուսումնասիրել բարելավում պահանջող ոլորտները՝ մեր կողմից իրականացվող գործընթացների արդյունավետությունը հաստատելու նպատակով: Մեր համագործակցային մոտեցումը ներառում է՝

1. Կանոնավոր հանրային հանդիպումներ. Տեղի համայնքների հետ կանոնավոր հանդիպումներն ապահովում են Ընկերության գործունեության վերաբերյալ թարմ տեղեկատվություն և հետադարձ կապ/արձագանք:
2. Մեր՝ հատկապես պոչամբարին անմիջապես առնչվող աշխատակիցների արձագանքն ապահովում է իրական վիճակի վերաբերյալ անչափ կարևոր և արժեքավոր տեղեկություններ, ինչը որոշիչ դեր է խաղում որոշումների կայացման գործում:
3. Լավագույն միջազգային փորձագետների և ընկերությունների հետ համագործակցությունը թույլ է տալիս կիրառել լավագույն միջազգային փորձը:

ՄԱԿ ԿԶՆ

16 PEACE AND JUSTICE STRONG INSTITUTIONS

**2022 թ. ձեռքբերումներ. Թափանցիկության ապահովման նախադեպ**

**2022 թվականի նոյեմբերի 30-ին, տեղական մամուլում հայտնվեց «Պայթյուն ԶՊՄԿ-ի պոչամբարում» վերնագրով մի հոդված, որն արագորեն տարածվեց այլ մեդիա հարթակներում, և ըստ որի ԶՊՄԿ-ի պոչամբարում պատահած պայթյունի հետևանքով տեղի է ունեցել պոչանքների արտահոսք:**
**Քանի որ իրականում որևէ պոչանքների արտահոսք տեղի չէր ունեցել հոդվածն իրականությանը չէր համապատասխանում, մեղադրանքը պարզապես հերքելու փոխարեն Ընկերությունը որոշեց օգտվել առիթից և իր շահագրգիռ կողմերին մանրամասն ներկայացնել առկա բնապահպանական կառավարման հարցերի և արտակարգ դեպքերի նկատմամբ ընկերության մոտեցումը:**
**Ընկերությունն իհարկե թողարկեց «պայթյունը» հերքող մամլո հաղորդագրություն՝ միևնույն ժամանակ ընդունելով, որ պոչատարից իսկապես նախկինում եղել են արտահոսքի դեպքեր:**
**Այս հայտարարությունը ստիպեց մեդիա ներկայացուցիչներին Ընկերությունից ճշտել այս փաստերի իսկությունը՝ հատկապես պոչամբարում իրականում երբևէ տեղի չունեցած պայթյունի պես լուրջ մեղադրանքի համատեքստում: Ընկերությունը պատրաստակամություն հայտնեց տրամադրել իրականում տեղի ունեցած պատահարների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն: Մասնավորապես, հայտարարության արդյունքում պարզ դարձավ, որ տարիների ընթացքում ԶՊՄԿ-ի պոչատար խողովակաշարերից իսկապես արձանագրվել է արտահոսքի մի քանի դեպք: Ամենավերջինը տեղի էր ունեցել հոկտեմբերի 13-ին (2022թ): «Պատահարից հետո անմիջապես ձեռնարկված գործողությունների արդյունքում հնարավոր է եղել կանխել հետագա աղտոտումը: Սյունիքի մարզի շրջակա միջավայրի պաշտպանության տեսչական մարմնի ներկայացուցիչները տեղեկացվել են պատահարի մասին», ասված էր մամլո հաղորդագրությունում: Հայտարարության համաձայն, նախկինում (2017-2021թթ.), արձանագրվել է պոչատար խողովակաշարերից արտահոսքի հինգ դեպք, ինչպես նաև տեղի է ունեցել Ողջի գետի աղտոտման դեպք, որի կապակցությամբ հարուցվել է վարույթ՝ դեպքի պատճառներն ու ձեռնարկված մեղմացման միջոցառումները պարզելու նպատակով:**
**Ընկերությունն արեց ավելին՝ ընդունելով, որ ԶՊՄԿ-ում իսկապես առկա են բազմաշերտ բնապահպանական խնդիրներ, որոնք վերաբերում են ինչպես ընթացակարգային, այնպես էլ տեխնիկական հնարավորություններին: Այս խնդիրներն առաջացել ու կուտակվել են տասնյակ տարիների ընթացքում, և Ընկերության նոր սեփականատերը հանձն է առել ապահովել դրանց պատշաճ լուծումը ժամանակի ընթացքում: Մինչ այդ, Ընկերությունում իրականացվում է բնապահպանական խնդիրների համապարփակ ուսումնասիրություն:**

Պոչամբարների կառավարման լավագույն միջազգային չափանիշին (GISTM) համապատասխանություն ապահովելու նպատակով Ընկերության կողմից իրականացվում են, այդ թվում նաև, դերերի/աշխատանքների պարզաբանման և հստակեցման, փաստաթղթավորման և վթարների արձագանքման ռազմավարությունների մշակմանն ուղղված աշխատանքներ: Կարևորելով լավագույն միջազգային փորձի դերը՝ մենք ներկայումս ներդրում ենք Թրիգերային գործողությունների արձագանքման ծրագիր (TARP), որը հանդիսանում է որոշակի թրիգերային մակարդակներին ի պատասխան ռեալ ժամանակով արձագանք ապահովող և ցանկացած շեղման կամ անկանոնության դեպքում արագ գործողություններ ձեռնարկող համակարգ:



# ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ և ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Հանդիսանալով Կովկասում գործող խոշորագույն հանքարդյունաբերական ընկերություններից մեկը՝ ԶՊՄԿ-ն մշտապես ձգտել է նպաստել ածխածնի հետքի կրճատմանը /decarbonization/՝ ցածր ածխածնային, այն է՝ կանաչ տնտեսության, ինչպես նաև առօրյա ապրանքների արտադրության համար անհրաժեշտ մետաղներ արտադրելու, վաճառելու և մատակարարելու միջոցով:
Ի հավելումն բնապահպանական կայուն զարգացում ապահովելու և ոլորտի առաջատար փորձը կիրառելու հանձնառության՝ ԶՊՄԿ-ն սահմանագծել է իր գործունեության բոլոր փուլերում ջերմոցային գազերի արտանետումները կառավարելու հստակ շրջանակ: Այս նախաձեռնությունը ոչ միայն ապացուցում է ածխածնի հետքի կրճատմանն ուղղված ԶՊՄԿ-ի նախաձեռնողական մոտեցումը, այլ նաև ընդգրկում է գլոբալ առումով դրական բնապահպանական ազդեցություն ապահովելու Ընկերության ավելի երկարաժամկետ տեսլականը:
Այս մոտեցման հիմքում ընկած է ընկերության բնապահպանական քաղաքականությունը, որի նպատակն է՝ խրախուսել արդյունավետ էներգասպառումը, իրականացնել ապահով փոխադրումներ և ակտիվորեն կիրառել այնպիսի ռազմավարություններ, որոնք նպաստում են կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայությանն ու ապահովում են ջերմոցային գազերի արտանետումների կրճատում: Ընկերությունը, միևնույն ժամանակ, անվերապահորեն կատարում է բնապահպանական կատարողականի /մասնավորապես՝ էներգասպառման և արտանետումների արգելքի/ բարելավմանն ուղղված իր պարտավորությունը:
Նշված դրույթների և պահանջների ռազմավարական կատարման մասով մշտադիտարկումն ու ուղղորդումը ապահովում են՝

- ԶՊՄԿ-ի բարձրագույն ղեկավարությունը, որն ապահովում է նշվածի համապատասխանությունը Ընկերության գերակա նպատակներին
- մասնագիտացված բաժինները, մասնավորապես՝ կայուն զարգացման տնօրինությունն ու մասնավորապես բնապահպանական ստորաբաժանումը, որոնք պատասխանատու են ընթացիկ գործունեության և համապատասխանության ապահովման համար

Կլիմայի փոփոխության հանդեպ հարմարվողականության և դիմակայության մասով մեր մոտեցումը սահմանագծելու և իրագործելու համար՝ մենք մեր գործողություններն իրականացնում ենք հստակ ձևակերպված ռազմավարություններին և կանոնակարգային փաստաթղթերին համապատասխան: Պարբերաբար վերանայվող ու թարմացվող նշված փաստաթղթերն արտացոլում են կայուն զարգացման հանդեպ մեր հանձնառությունը՝ միևնույն ժամանակ ապահովելով դրանց համապատասխանությունը գլոբալ չափանիշներին ու ակնկալիքներին:

## ՀԻՄՆԱՐԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

### Կայուն զարգացման ռազմավարություն

այս առանցքային փաստաթուղթն արտացոլում է ԶՊՄԿ-ի երկարաժամկետ նպատակների ընդհանուր տեսլականը, այդ թվում՝ գործունեության բոլոր ոլորտներում կայուն գործելակերպ ներդնելու Ընկերության հանձնառությունը: Այն կարևորում է ածխածնի արտանետումները կրճատելու, արդյունավետ էներգասպառում ապահովելու և բնապահպանական ազդեցությունները նվազագույնի հասցնելու անհրաժեշտությունը:

### Կլիմայական ռիսկերի գնահատման հաշվետվություն

«Կրեդել» ՍՊԸ-ի (Հայաստան) և AvantGarde Group, s.r.o.-ի (Սլովակիա) հետ համագործակցության արդյունքում պատրաստված այս հաշվետվությունում ներկայացված է մեր հատուկ գործողությունների պլանը, որը թույլ կտա հաշվի առնել և ներդնել կլիմայի հետ կապված նկատառումները մեր ֆինանսական ու գործառնական ռազմավարություններում: Այս հաշվետվության շրջանակներում և ԿԱՖՀԱԽ-ի ուղեցույցների համաձայն՝ ԶՊՄԿ-ն հրապարակում է իր կորպորատիվ կառավարման, ռազմավարության, ռիսկերի կառավարման, քանակական ցուցանիշների ու թիրախային նպատակների վերաբերյալ տեղեկություններ՝ մանրամասն նկարագրելով գործառույթներն ու աշխատանքները, ներկայացնելով ածխածնի արտանետումների կրճատմանն ուղղված ճանապարհային քարտեզը, բացահայտելով հնարավոր ռիսկերն ու սահմանելով չափելի նպատակներ: ԶՊՄԿ-ի գործունեությամբ պայմանավորված ջերմոցային գազերի արտանետումները, հատկապես՝ 1, 2 և 3-րդ շրջանակների սահմաններում, մանրակրկիտ դիտարկվում են և կազմում են այս նախաձեռնության կարևորագույն մաս:

## ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

Ջերմոցային գազերի արտանետումների վերաբերյալ արձանագրություն, Կորպորատիվ հաշվապահություն և հաշվետվողականության չափանիշ

ISO չափանիշ 14064 (Մաս 1-3)

Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական խորհրդի ուղեցույցներ ջերմոցային գազերի ազգային կադաստրերի վերաբերյալ (2006 & 2019) /IPCC Guidelines for National Greenhouse Gas Inventories (2006 & 2019)/

Կարևորելով վերոնշյալ ուղեցույցները՝ ԶՊՄԿ-ն հաստատակամ է արդյունավետ կերպով կիրառել վերոնշյալ ռազմավարություններն ու քաղաքականությունները ընկերության գործունեության բոլոր մակարդակներում՝ չսահմանափակվելով սահմանված պահանջների ուղղակի կատարմամբ: Ընկերությունում պարբերաբար կազմակերպվում են դասընթացներ, սեմինարներ ու շահագրգիռ կողմերի հետ հանդիպումներ, որոնք ուղղված են ապահովելու կլիմային վերաբերող մեր ռազմավարությունների պահանջների կատարումը ԶՊՄԿ-ի գործունեությանն առնչվող բոլոր անձանց կողմից:

## ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

ԶՊՄԿ-ն քաջ գիտակցում է իր գործունեությամբ պայմանավորված հետքը՝ գլոբալ բնապահպանության ոլորտում: Հայաստանի առաջատար հանքավայրերից մեկի՝ Քաջարանի հանքի շահագործումը ենթադրում է ոչ միայն տնտեսական օգուտներ, այլ նաև կրիտիկական կլիմայական ռիսկեր և բնապահպանական բարձր պատասխանատվություն:

**Ընկերության կողմից իրականացվում են մի շարք կարևորագույն միջոցառումներ՝ ուղղված ածխածնի հետքի կրճատմանն ու կլիմայական ռիսկերի հանդեպ դիմակայության բարձրացմանը:**

13 CLIMATE ACTION

ՄԱԿ ԿԶՆ

## ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ



1. Գործառնական արդյունավետության ապահովում. մենք համոզված ենք, որ մեր գործառնական գործընթացների շարունակական վերլուծության ու արդիականացման շնորհիվ հնարավոր կլինի նվազեցնել թափոնագոյացման ծավալներն ու օպտիմալացնել էներգիայի սպառումը:
2. Ռեսուրսների ողջամիտ կառավարում. խթանելով վերամշակման և հումքի արդյունավետ օգտագործման գործելակերպը՝ մենք իրականացնում ենք ընկերության գործունեությամբ պայմանավորված բնապահպանական ազդեցությունների կրճատմանը և չվերականգնվող ռեսուրսներից կախվածության նվազեցմանն ուղղված ակտիվ աշխատանքներ:

## ՄԵՂՄԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Աստիճանական անցում դեպի վերականգնվող էներգետիկա. Հանածո վառելիքից մեր կախվածությունը նվազեցնելու նպատակով՝ ձեռնարկվում են ապահով ու անվտանգ էներգամատակարարմանն ուղղված միջոցներ:
2. Ածխածնի «որսման» տեխնոլոգիաներ. Ածխածնի արտանետումների որսման և պահեստավորման նպատակով՝ դիտարկվում է առաջատար տեխնոլոգիաների երկարաժամկետ ֆինանսավորման հնարավորությունը:

Ի հաստատումն իր հանձնառության, 2023 թ. ԶՊՄԿ-ի կողմից մշակվել է 2022 հաշվետու տարվա համար «Կլիմային առնչվող ֆինանսական հաշվետվողականության աշխատանքային խմբի (TCFD) հանձնարարականներին համապատասխանող կլիմայական ռիսկերի վերլուծություն» զեկույցը: Այս համապարփակ փաստաթղթում, ԶՊՄԿ-ի գործունեությունը համադրվում է կլիմային վերաբերող ազգային ու գլոբալ թիրախային ցուցանիշներին, ինչպես նաև սահմանվում են թափանցիկության ապահովման և ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման համար սահմանված միջազգային չափորոշիչների կատարման ոսկե ստանդարտներ:

## ՀԱՐՄԱՐՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼԵՐ

1. Ռիսկերի վերլուծություն. ԶՊՄԿ-ն՝ հնարավոր վնասները կրճատելու նպատակով, համագործակցում է համապատասխան փորձագետների հետ հավանական կլիմայական ռիսկերը կանխատեսելու և իր ենթակառուցվածքներն այդ փոփոխություններին հարմարեցնելու ուղղությամբ:
2. Համայնքների ներգրավում. Տեղական համայնքների հետ համագործակցային ծրագրերի շնորհիվ ձևավորվում է փոփոխություններին դիմադրելու ընդհանուր մոտեցում, որն իր հերթին օգնում է ավելի լայն էկոհամակարգին հարմարվել փոփոխվող կլիմայական պայմաններին:

## ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ և ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Կայուն զարգացման մշակույթի տարածումը սկսվում է Ընկերության ներսում: Կանոնավոր սեմինարների, դասընթացների և իրազեկման արշավների միջոցով մեր աշխատակիցները տեղեկանում և զինվում են անվտանգ և ապահով միջավայր ստեղծելու համար անհրաժեշտ գործիքակազմով:



## ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Մեր գործողությունների և միջոցառումների շարունակական մշտադիտարկումն ու վերլուծությունն ապահովում են Ընկերության զարգացողական ուղղվածությունը և օգնում հարմարվել նոր մարտահրավերներին ու իրողություններին՝ դրանով իսկ ապահովելով մեր նախաձեռնությունների շոշափելի արդյունավետությունը:

ՄԱԿ ԿԶՆ

## ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

GRI [302-1, 302-3, 302-4]

Ընկերության համապատասխան ստորաբաժանման միջոցով, յուրաքանչյուր ամիս, Ընկերության բոլոր ենթակառուցվածքներից ու տեղամասերից հավաքագրվում են էներգիայի ամսական ու տարեկան սպառման ծավալների վերաբերյալ տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս հետևողականորեն ուսումնասիրել էներգասպառման գործընթացը և բացահայտել այն ոլորտները, որոնցում առկա է արդյունավետության բարձրացման խնդիր:

Ընկերությունը հիմնականում օգտագործում է չվերականգնվող աղբյուրներից ստացվող վառելիք, այն է՝ բենզին, նավթ ու դիզելային վառելիք: Դիզելը հիմնականում օգտագործվում է ծանր տեխնիկայի, սարքավորումների և բացահանքում արտադրական գործընթացների համար կիրառվող բեռնատարների շահագործման համար: Մյուս կողմից, բենզինն օգտագործվում է հիմնականում Ընկերության աշխատահրապարակների և արտադրամասերի միջև ուղևորափոխադրումներ իրականացնելիս:

2022 թ. դրությամբ ԶՊՄԿ-ի ավտոպարկում առկա 406 միավոր տրանսպորտային միջոցների կողմից վառելիքի սպառման ծավալները կազմել են 1.07 մլն լիտր ոչ էթիլացված բենզին և 17.6 հազար տոննա դիզել: 2022 թ. ԶՊՄԿ-ի շենքերի, ենթակառուցվածքների ու գործընթացների համար օգտագործվել է 6.266 մլն մ3 բնական գազ:

2022 թ. ԶՊՄԿ-ի ընդհանուր էներգասպառումը կազմել է 502,855 հազար կՎ/ժ: Միևնույն ժամանակ, էներգասպառման ինտենսիվությունը նվազել է 4%-ով, ինչը խոսում է Ընկերության արտադրական գործողությունների արդյունավետության բարձրացման մասին:

| | Չ.Մ | 2021 | 2022 |
|---|---|---|---|
| Էներգասպառման ինտենսիվություն | կՎտ/տ | 1,981.0 | 1,892.8 |

Չունենալով սեփական էներգաարտադրություն՝ ԶՊՄԿ-ն այն ձեռք է բերում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» կազմակերպությունից և ազատ էներգակիրների շուկայից:

Ընկերության՝ Ռեսուրսների արդյունավետ կառավարման պլանի շրջանակներում, մշտադիտարկման տեղամասերում տեղադրվել են արևային պանելներ՝ Ընկերության էներգասպառումը որոշ չափով փոխհատուցելու նպատակով: Նման միջոցառումները նպաստում են վերականգնվող աղբյուրներից ապահովվող էներգասպառմանը, սակայն մինչ այժմ նման միջոցառումների շնորհիվ ապահովվող էներգախնայողության հաշվարկ դեռևս չի կատարվել:

## ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ

GRI [305-1, 305-2, 305-3]

Ուղղակի արտանետումները /Շրջանակ 1/ ներառում էին ԶՊՄԿ-ի շարժական ու անշարժ աղբյուրներից վառելիքի այրման արդյունքում առաջացող և չվերահսկվող ՋԳ արտանետումներ: Վառելի այրմամբ պայմանավորված արտանետումների շարժական աղբյուրներն էին մասնավորապես՝ Ընկերությանը պատկանող արտադրական և ուղևորափոխադրող մեքենաները, որոնք աշխատում են հանածո հեղուկ վառելիքներով: Վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումների անշարժ աղբյուրներն էին՝ ԶՊՄԿ-ի շենքերը, արտադրական օբյեկտները, ենթակառուցվածքներն ու բնական գազ օգտագործող գործընթացները: Փախուստային արտանետումներն առաջանում էին ԶՊՄԿ-ի շենքերում, արտադրական օբյեկտներում ու ենթակառուցվածքներում տեղադրված օդորակիչներից ու հովացման համակարգերից: Մեր նախնական հաշվարկների համաձայն, փախուստային արտանետումների ծավալը զգալիորեն ցածր էր սահմանված շեմից, ինչի պատճառով այն չի հաշվարկվել գույքագրման ընթացքում:

ՁՊՄԿ-ի անուղղակի արտանետումները /Շրջանակ 2/ ներառում էին այնպիսի ջերմոցային գազերի արտանետումներ, որոնք առաջանում էին ՁՊՄԿ-ի շենքերում, արտադրական օբյեկտներում, ենթակառուցվածքներում ու գործընթացներում էներգահամակարգից ստացված էներգասպառման հետևանքով: Չնայած որ այս արտանետումները գոյանում էին ՁՊՄԿ-ի սահմաններից դուրս իրականացվող էներգաարտադրության ընթացքում, այնուամենայնիվ ՁՊՄԿ-ն օգտագործում էր այս էլեկտրաէներգիան, հետևաբար նման սպառման հետ կապված արտանետումները համարվում էին ՁՊՄԿ-ի անուղղակի արտանետումներ:

2022 թ. Շրջանակ 1 և Շրջանակ 2-ի մասով ՁՊՄԿ-ի ջերմոցային գազերի գույքագրումը կազմել է 290,854 տCO2-համ., որտեղ Շրջանակ 2-ի մասնաբաժինը կազմել է նշվածի 75%, իսկ Շրջանակ 1-ը՝ 25%:

Շրջանակ 1-ում ներառված բոլոր արտանետումները կապված էին էներգիայի հետ և առաջանում էին վառելիքի այրման շարժական ու անշարժ աղբյուրներից: 2022 թ. նշված աղբյուրների կողմից արտադրվել է 71,626 տCO2-համ.: ՁՊՄԿ-ի տրանսպորտային միջոցներում օգտագործվող հեղուկ վառելիքի այրման մասնաբաժինը կազմել է Շրջանակ 1-ի արտանետումների 82%, որի առավելագույն մասը բաժին է ընկել արդյունաբերական մեքենաներին: Շրջանակ 1-ի արտանետումների մնացած 18% գոյացել է անշարժ աղբյուրներում բնական գազի այրումից, ընդ որում արդյունաբերական գործընթացներն ապահովում էին արտանետումների ճնշող մեծամասնությունը (90%):




Շրջանակ 2-ի գրեթե բոլոր արտանետումները՝ (99%), պայմանավորված են արտադրական գործընթացներով, իսկ մնացած 1%՝ գոյանում է շենքերում էլեկտրաէներգիայի սպառման արդյունքում: Հարստացուցիչ ֆաբրիկայի մասնաբաժինը կազմում է արտադրության առնչվող արտանետումների 90%, իսկ հանքաքարի ջարդման և փոխադրման արտադրամասերն ունեն նույնպիսի զգալի մասնաբաժին, այն է՝ (5%):



GRI [305-4]

## ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԳԱԶԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ ԿԶՆ

| ՑՈՒՑԻՉ | ԾԱՎԱԼ և ՄԻԱՎՈՐ | ՏԱՐԻ |
|---|---|---|
| Ջերմոցային գազերի արտանետումներ (Շրջանակ 1 + Շրջանակ 2) / աշխատակից | 63.4 տ$CO_2$-համարժեք/ աշխատակից | 2022թ. ջերմոցային գազեր 2022թ. աշխատակիցների թիվ |
| Ջերմոցային գազերի արտանետումներ (Շրջանակ 1 + Շրջանակ 2) / եկամուտ | 318 տ$CO_2$-համարժեք/ միլիոն ԱՄՆ դոլար եկամուտ* | Ջերմոցային գազերի արտանետումներ և եկամուտներ 2022թ. |
| Ջերմոցային գազերի արտանետումներ (Շրջանակ 1 + Շրջանակ 2) / արտադրանք | 1.06 տ$CO_2$-համարժեք/ տ. | Ջերմոցային գազերի արտանետումներ 2022թ. Չոր խտանյութ, վաճառված՝ 2021թ. |

Այլ անուղղակի արտանետումներն / Շրջանակ 3/ առնչվում են վերընթաց և վարընթաց արժեշղթային: 2022թ. նշված արտանետումների ընդհանուր ծավալը կազմել է 769,558 տ$CO_2$-համարժեք, որը կազմում է ԶՊՄԿ-ի ընդհանուր ջերմոցային գազերի մոտ 72%: Շրջանակ 3-ի արտանետումների հիմնական մասը (53%) բաժին է ընկնում Վաճառված արտադրանքի վերամշակման գործընթացին, ինչին հաջորդում է Վաճառված արտադրանքի փոխադրումը (17%):

### ՇՐՋԱՆԱԿ 3-Ի ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ ԸՍՏ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ




* 341 տ$CO_2$-համ./ եվրո միլիոն եկամուտ

# ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանդիսանալով Կովկասյան տարածաշրջանի խոշորագույն հանքարդյունաբերական ընկերություն՝ ԶՊՄԿ-ն գիտակցում է այն ազդեցությունը, որը կարող է ունենալ շրջակա միջավայրի վրա իր գործունեության արդյունքում: Հետևաբար, Ընկերությունը հանձն է առել իր գործունեության բոլոր մակարդակներում ու փուլերում, այն է՝ երկրաբանական հետախուզության, նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում, իրականացնել շարունակական բարելավման միջոցառումներ Ընկերության գործունեությամբ պայմանավորված ազդեցությունները մեղմելու նպատակով: Միևնույն ժամանակ, Ընկերությունը պարտավորվել է ապահովել էներգիայի, ջրի և այլ բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործում, ինչպես նաև կիրառվող թունավոր նյութերի ու թափոնագոյացման կրճատում ու վերամշակում:
ԶՊՄԿ-ի կողմից մշակված և որդեգրված բնապահպանական քաղաքականության համաձայն, Ընկերությունը պարտավորվել է գործունեության վայրից անկախ իրականացնել իր գործառնությունները պետական ու տեղական օրենքների պահանջների ու միջազգային լավագույն փորձի համաձայն:  ՄՖԿ-ի կատարողական չափանիշների, ՎԶԵԲ-ի կատարողական պահանջների և ՄԱԿ-ի գլոբալ կոմպակտի պահանջների հետևողական ու ամբողջական կատարումն ու համապատասխանությունը ձևավորում և ապահովում են Ընկերության կայուն զարգացման սկզբունքների, հետևաբար  նաև համապատասխան քաղաքականությունների, պլանների և ընթացակարգերի հիմքը:

## ՄԵՐ ՏԵՍԼԱԿԱՆԸ

**ՆՎԱԶԵՑՆԵԼ, ՄԵՂՄԵԼ ԵՒ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ԽՈՒՍԱՓԵԼ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՆԵՐԴՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ: ՄԵՆՔ ԳԻՏԱԿՑՈՒՄ ԵՆՔ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԵՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԵՋ ԱՅԴ ԳՈՐԾՈՆԻ ՆԵՐԱՌՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉԸ ԿՆՊԱՍՏԻ ԻՆՉՊԵՍ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐՃԱՏՄԱՆԸ:**

Նվազեցնել, մեղմել և, հնարավորության դեպքում, խուսափել շրջակա միջավայրի վրա ազդեցություններից՝ Ընկերության գործունեության բոլոր ոլորտներում բնապահպանական կառավարման համակարգ ներդնելու միջոցով: Մենք գիտակցում ենք կլիմայի փոփոխության վերաբերյալ հանքարդյունաբերության ոլորտում իրազեկվածությունը բարձրացնելու և որոշումների կայացման մեջ այդ գործոնի ներառման անհրաժեշտությունը, ինչը կնպաստի ինչպես կլիմայի փոփոխությամբ պայմանավորված, այնպես էլ այլ տեսակի երկարաժամկետ բնապահպանական ազդեցությունների կրճատմանը:



Շրջակա միջավայրի հետ համահունչ ու ներդաշնակ համակեցությանն ուղղված իր հանձնառությունը ԶՊՄԿ-ը ամրագրել է հետևյալ հիմնական փաստաթղթերում.

### ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

հիմնարար փաստաթուղթ, որում ներկայացված է գործունեության բոլոր փուլերում բնապահպանական ազդեցությունների շարունակական մեղմացում իրականացնելու ԶՊՄԿ-ի հանձնառությունը: Փաստաթուղթը հիմնականում վերաբերում է էներգիայի պահպանմանը, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործմանը, թափոնների կրճատմանը, կենսաբազմազանության պահպանմանն ու օգտագործվող թունավոր նյութերի կրճատմանը:

### ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

այս քաղաքականությամբ ուրվագծվում է Ընկերության մտադրությունը, այն է՝ տեղական, տարածաշրջանային ու գլոբալ մակարդակով իրականացվող կայուն զարգացման միջոցառումներն առաջնորդելու միջոցով դառնալ բնապահպանական առումով պատասխանատու առաջատար ընկերություն:

Որպես ոլորտի առաջատար՝ ԶՊՄԿ-ն քաջ գիտակցում է ավելի կանաչ էներգետիկային անցնելու առումով իր խթանիչ դերակատարումը, ինչպես նաև այն փաստը, որ Ընկերության կողմից արտադրվող, վաճառվող և մատակարարվող մետաղներն անփոխարինելի են կայուն ապագա ստեղծելու համար: Մեր կազմակերպության սահմաններում և մեր շահագրգիռ կողմերի շրջանում բնապահպանական պատասխանատվության մշակույթ ձևավորելու համար մենք օգտագործում ենք մեր ազդեցության լայն շրջանակը, որը գերազանցում է մեր անմիջական գործունեության ոլորտը: ԶՊՄԿ-ն իր մատակարարման շղթան ընդգրկելու և ներառելու միջոցով փորձում է տարածել իր բնապահպանական ու կայուն զարգացման սկզբունքները: Մենք աշխատում ենք մեր գործընկերների և մատակարարների շրջանում ձևավորել շրջակա միջավայրի նկատմամբ նույնպիսի պատասխանատու և հոգատար մոտեցում: Ընկերությունն իր գործունեության բոլոր մակարդակներում ու ոլորտներում կիրառում է բնապահպանական կայուն գործելաոճ և ակնկալում ու պահանջում է նույնպիսի վարքագիծ, այն է՝ ԶՊՄԿ-ի չափորոշիչների կատարում, իր բոլոր կապալառուներից ու մատակարարներից՝ դրանով իսկ ստեղծելով պատասխանատու բիզնեսների համակցված էկոհամակարգ:

Բնապահպանական պատասխանատվության չափանիշների և գործելակերպի հաջող ներդրման ու ամենօրյա կիրառման գործընթացը վերահսկվում է ԶՊՄԿ-ի բարձրագույն ղեկավարության կողմից, որին աջակցում են բնապահպանական կառավարման ու համապատասխանության ապահովման համար պատասխանատու մասնագիտացված ստորաբաժանումները:

### ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ և ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԹԻՄ

ԶՊՄԿ-ի կազմում գործող նեղ մասնագետներն իրականացնում են մեր բնապահպանական ու կայուն զարգացման քաղաքականությունների ներդրման ու իրագործման մշտադիտարկում, ինչպես նաև առաջընթացի վերահսկողություն: Կայուն զարգացման գլխավոր տնօրենի ղեկավարության ներքո գործող թիմում աշխատում են բնապահպանական ու կայուն զարգացման տարբեր մասնագետներ:

### ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

կարևորելով մեր սկզբունքներն Ընկերության ներքին սահմաններից դուրս տարածելու անհրաժեշտությունը՝ նշված ստորաբաժանումն աշխատում է մեր քաղաքականություններն ու սկզբունքները մեր մատակարարման շղթայի շրջանում տարածելու ուղղությամբ: Նրանք սերտորեն աշխատում են մեր մատակարարների հետ՝ ապահովելով վերջիններիս համապատասխանությունը մեր կայուն զարգացման տեսլականին և սահմանված չափանիշներին:

Մենք գիտակցում ենք բնապահպանական և պատասխանատու գործելակերպը Ընկերության գործառնություններում ինտեգրելու և կիրառելու խիստ անհրաժեշտությունը, ինչը կնպաստի տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի պահպանության միջև ողջամիտ հավասարակշռությանը: Մեր պարտավորությունները չեն սահմանափակվում զուտ նորմատիվային պահանջների պահպանմամբ, քանի որ մենք վճռական ենք դառնալու բնապահպանական խնդիրներին պատշաճ արձագանքող գլոբալ հանքարդյունաբերական ոլորտի ուղենիշ սահմանող ընկերություն:

## ԱՊԱԳԱ ՊԼԱՆՆԵՐ և ԹԻՐԱԽԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

**Գլոբալ չափանիշների կատարում և համապատասխանություն**

Առաջիկա 5 տարիների ընթացքում մենք նախատեսում ենք հավատարիմ մնալ և համապատասխանել միջազգային բնապահպանական կառավարման չափանիշներին, որոնցից են՝ ՄՖԿ-ի և ISO 14001 չափանիշները: Ընկերության գործունեության տարբեր ոլորտների, այն է՝ պոչամբարների կառավարման, ջրային ռեսուրսների կառավարման և կենսաբազմազանության պահպանման գործողությունները կիրականացվեն վերոնշյալ չափանիշներին համապատասխան:

**Ջերմոցային գազերի արտանետումներ**

Մենք ակտիվորեն մշակում ենք գիտահեն թիրախային ցուցանիշների վրա հիմնված գործողությունների պլան, որի միջոցով կմշակվի ջերմոցային գազերի արտանետումների էական կրճատմանն ուղղված մեր ծրագիրը:

**Էներգիայի այլընտրանքային աղբյուրներ**

Հաշվի առնելով չվերականգնվող էներգիայի աղբյուրներից հրաժարվելու մեր պարտավորությունը՝ մենք հակված ենք ներդնելու և մեր գործառնություններում կիրառելու էներգիայի այլընտրանքային աղբյուրներ: Վերականգնվող էներգետիկայի և ժամանակակից լուծումների միջոցով մենք ձգտում ենք կրճատել մեր կախվածությունը հանածո վառելիքից:

**Ածխածնի հետքի մշտադիտարկում**

Շարունակելով ջերմոցային գազերի կրճատմանն ուղղված մեր հանձնառությունը՝ մենք նախատեսում ենք ներդնել ածխածնի հետքի մշտադիտարկման համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի ստանալ ածխածնի արտանետումների վերաբերյալ իրական ժամանակի ռեժիմով տվյալներ՝ դրանով իսկ թույլ տալով ժամանակին իրականացնել համապատասխան միջամտություններ և օպտիմալացնել կիրառվող ռազմավարությունը:

**Ջրի կառավարում**

Քաջ գիտակցելով ջրի կարևորությունը, մասնավորապես՝ հանքարդյունաբերական գործառնությունների առումով, մենք ներկայումս ներդնում ենք ջրային ռեսուրսների կառավարման համապարփակ համակարգ ողջամիտ և խնայողն ջրօգտագործում ապահովելու նպատակով: Մասնավորապես, Ընկերության ողջ գործունեության ընթացքում նախատեսվում է սահմանել և ուղղորդել ջրային ռեսուրսների հայտնաբերման, օգտագործման և ջրահեռացման միջոցառումները:

**Միջազգային ԲՍԿ վարկանիշ**

Մեր շահագրգիռ կողմերի համար Ընկերության ԲՍԿ կատարողականի վերաբերյալ թափանցիկ տեղեկատվություն ապահովելու նպատակով՝ մենք ձգտում ենք միջազգային վարկանիշային հարթակում ստանալ ԲՍԿ վարկանիշ: Այս վարկանիշը կարտացոլի Ընկերության նվիրումն ու կայուն հանքարդյունաբերությանն ուղղված շարունակական ջանքերը:

Ինչպես ԶՊՄԿ-ն, այնպես էլ իր դուստր ընկերությունները կարևորում են Կովկասյան տարածաշրջանում էկոգիտակից ընդերքօգտագործում իրականացնելու անհրաժեշտությունը: Մենք ձգտում ենք համապատասխանեցնել մեր յուրաքանչյուր գործառնություն, այն է՝ երկրաբանական հետախուզությունից մինչև նախագծում, շինարարություն և իրական ընդերքօգտագործում, շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված մեր հանձնառությանը՝ հետևյալ միջոցներով.

1. Էներգախնայող տեխնոլոգիաների կիրառման ռազմավարություն,
2. ջրի և այլ կարևորագույն բնական ռեսուրսների օպտիմալ օգտագործում,
3. թափոնագոյացման կրճատում,
4. թափոնների անվտանգ կառավարում ու վերամշակում,
5. կիրառվող վտանգավոր նյութերի կրճատում:

# ՋՈՒՐ և ԿԵՂՏԱՋՐԵՐ

GRI [303-1, 303-2, 303-3, 303-4, 303-5]

ՄԱԿ ԿԶՆ

Հանդիսանալով հանրապետության թիվ մեկ հարկատուն և խոշորագույն հանքարդյունաբերական ընկերությունը՝ ԶՊՄԿ-ն կարևորում է, ինչպես նաև ստանձնում է պատասխանատվություն և ձեռնարկում է գործողություններ բնապահպանական կատարողականի առումով առաջատար ընկերություն դառնալու և պատասխանատու ընդերքօգտագործման ու ռեսուրսների, այդ թվում՝ ջրի, ողջամիտ կառավարման միջոցով շրջակա միջավայրի վրա ազդեցությունները նվազեցնելու համար:

Հանքարդյունաբերական ընկերությունների արտադրական գործընթացների համար պահանջվում են մեծածավալ ջրային ռեսուրսներ: Օրինակ, ԶՊՄԿ-ն ջուրն օգտագործում է արտադրության, տեխնիկական ու կենցաղային նպատակներով: Արդյունավետ ջրօգտագործումը Ընկերության կարևորագույն նպատակներից է, և դրան հասնելու համար մենք ներդրել ենք ջրի կառավարման պլան, որի շրջանակներում իրականացվում է ջրասպառման և ջրօգտագործման մշտադիտարկում:

ԶՊՄԿ-ի համար Ողջի գետն ու վտակները հանդիսանում են ջրի հիմնական աղբյուր: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը, որտեղ տեղակայված են Ընկերության հիմնական ակտիվները, գտնվում է սակավ ջրային ռեսուրսներ* ունեցող տարածաշրջանում: Հետևաբար, հաշվի առնելով տարածաշրջանում ջրի սակավության խնդիրը, ԶՊՄԿ-ն ձգտում է նորագույն տեխնոլոգիական լուծումների միջոցով ապահովել ջրային ռեսուրսների արդյունավետ կիրառում: Ընկերության համար բոլոր տարածքներում ընդհանուր թույլատրելի ջրառի ծավալները կազմում են տարեկան 68,840 հազար մ³: Մինչդեռ 2022 թվականի իրական ջրառի ծավալը զգալիորեն ցածր էր՝ կազմելով 49,088 հազար մ³ տարեկան, որից 114.9 հազար մ³/տ կազմում էր տնտեսական ու կենցաղային կարիքների համար օգտագործվող խմելու ջուրը:




ԶՊՄԿ-ի գործունեության հետևանքով առաջացող զգալի քանակությամբ ջրերը հիմնականում ուղղվում են դեպի մակերևութային ջրային մարմիններ: 2022 թ. Ընկերության փաստացի ջրահեռացման ծավալները կազմել են 41,359 հազար մ³, որից 99.9% ուղղվել է դեպի Աճանան գետը և միայն մոտ 40 հազար մ³ ՝ դեպի քաղաքի կոյուղատարեր: Ընկերությունը դիտարկում է շրջանառու ջրամատակարարման ծրագրի իրագործման հնարավորություններ: Ներկա պահի դրությամբ որևէ տեսակի ջրահեռացում դեպի ստորերկրյա ջրային մարմիններ, ծով կամ երրորդ անձանց պատկանող այլ ջրային մարմիններ, չի իրականացվում:

*Համաձայն ՄԱԿ-ի ԵՏՀ հաշվետվության “Level of water stress: freshwater withdrawal as a proportion of available freshwater resources”: https://w3.unece.org/SDG/en/Indicator?id=140

ԶՊՄԿ-ի կողմից պարբերաբար իրականացվում է կեղտաջրերի որակի մշտադիտարկում, այն է՝

1. Ողջիի գետաջրերի որակի ստուգում /որակական վերլուծություն/, որի միջոցով հստակեցվում են յուրաքանչյուր ջրային ավազանի կառավարման գոտու համար ջրի որակի նորմեր: Այս ստուգումը կատարվում է ըստ սեզոնների և պատահարների ժամանակ
2. Գեղի գետի ջրի ոչ կանոնավոր ստուգում-վերլուծություն*
3. Հարստացուցիչ ֆաբրիկա մուտք գործող և Արծվանիկի պոչամբար արտահոսող ջրի շաբաթական ստուգում-վերլուծություն
4. Արծվանիկի պոչամբարի 4-րդ թունելից արտահոսող ջրի որակի շաբաթական վերլուծությունը կատարվում է ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված առավելագույն թույլատրելի արտահոսքի նախագծի համաձայն

Բացի այդ, ամեն շաբաթ մենք իրականացնում ենք նաև որակի մշտադիտարկում՝ համադրելով մշտադիտարկման տվյալները ջրառի կետերի համար ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված էկո-արտահոսքի տվյալների և գետի միջին հոսքերի հետ:

2022 թ. Ընկերության ջրի կառավարման ռազմավարությունը լրամշակելու աշխատանքներում ընդգրկվել են ջրի կառավարման ոլորտի անկախ փորձագետներ: Մեր աշխատակիցների աջակցությամբ, մենք կարողացանք նույնականացնել ջրի անարդյունավետ օգտագործման կետերն ու ոլորտները, որոնց վերացման ուղղությամբ այնուհետև ձեռնարկվեցին համապատասխան քայլեր: Բացի այդ, մենք փորձեցինք ներգրավել նաև տեղական համայնքներին՝ սահմանված պահանջներին ու ակնկալիքներին համապատասխանող գործունեություն իրականացնելու նպատակով:




2021 թ. համեմատ 2022 թ. արձանագրված ջրասպառման ծավալների ավելացումը պայմանավորված է այն փաստով, որ Ընկերությունը 2021 թ. աշխատել է ոչ լրիվ արտադրական հզորությամբ:

2021 թ. համեմատությամբ, 2022 թ. մենք ավելացրել ենք արդյունավետ ջրի կառավարման ռազմավարություններին ուղղված մեր ներդրումները: Ձևավորված մասնագիտական թիմը թույլ է տալիս առավել թիրախային ու կենտրոնացված ուշադրություն դարձնել այս կարևորագույն ոլորտին: Բացի այդ, մենք ակտիվացրել ենք նաև թափանցիկության ապահովման մեխանիզմները՝ ջրի կառավարման առումով գրանցված առաջընթացի մասին մեր շահագրգիռ կողմերին իրազեկելու միջոցով: Վերջում անհրաժեշտ է նշել, որ Ընկերության ջրի կառավարման ռազմավարություններն ու համակարգերը մշակված են նվազեցնելու ջրի անարդյունավետ օգտագործումն ու վատնումը:



* Վերլուծությունը կատարվում է պատահարների դեպքում և ըստ անհրաժեշտության

## ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ և ԱՆԹԱՓՈՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

GRI [306-1, 306-2, 306-3, 306-4, 306-5]

ԶՊՄԿ-ի արդյունահանման ու արտադրական գործընթացների հետևանքով, բնականոն կերպով, որպես կողմնակի արտադրանք, առաջանում են թափոններ: Ընկերության գործունեության արդյունքում առաջացող թափոնների կառավարումն իրականացվում է լավագույն միջազգային փորձի և Ընկերությունում կիրառվող թափոնների կառավարման աստիճանակարգային /հիերարխիկ/ մոդելի համաձայն: Մեր կողմից ներգրավված կապալառուները պատասխանատու են սեփական գործունեության հետևանքով առաջացող թափոնների պատշաճ հեռացման և վերամշակման համար: Թափոնների տեղափոխումն իրականացվում է արտոնագրված հատուկ մեքենաներով, իսկ լրիվ գործընթացը՝ մասնագիտական անվտանգության և բնապահպանական ստանդարտ կանոնակարգերի համաձայն: Մենք՝ կապալառուների գործողությունները պարբերաբար ստուգելու և մշտադիտարկելու միջոցով, խստորեն վերահսկում ենք վերոնշյալ գործընթացները:

Բոլոր թափոնահոսքերն արձանագրվում են թափոնների քարտեզագրման հիմք հանդիսացող հատուկ գրանցամատյանում: Այնուհետև, այդ գրանցված տվյալներն արտացոլվում են համապատասխան մարմիններ ներկայացվող մեր տարեկան վիճակագրական և բնապահպանական վճարների վերաբերյալ կիսամյակային հաշվետվություններում: Այս եղանակով մենք իրականացնում ենք Ընկերության թափոնների գոյացման և կառավարման գործընթացների նկատմամբ վերահսկողություն և մշտադիտարկում:

2022 թ. Ընկերության թափոնների ընդհանուր ծավալը կազմել է 36 մլն տոննա՝ ներառելով տարատեսակ վտանգավոր դասի թափոններ, այն է՝ 20.5 մլն. մետրային տոննա վտանգավոր դասի թափոններ (թափոն-պոչանքներ) և 15.7 մլն. տոննա ոչ վտանգավոր դասի թափոններ (մակաբացման ապարներ):




Մենք հավատարիմ ենք մեր այն հանձնառությանը, որով պարտավորվել ենք շրջակա միջավայրի վրա ազդեցությունները նվազեցնելու նպատակով որդեգրել թափոնների կրճատման ռազմավարություններ ու կիրառել թափոնների պատասխանատու կառավարման տեխնոլոգիաներ: Մենք մշտապես փնտրում ենք Ընկերության թափոնների կառավարման գործընթացը բարելավելու ուղիներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով թափոնների հեռացմանը նախորդող կրկնակի օգտագործման, վերամշակման և վերականգնման հնարավորություններին, թափոնների կանխարգելմանն ու կրճատմանը, ինչպես նաև համակարգերի և գործընթացների վերանայմանը:

Մեր մոտեցման հաջողված օրինակներից է՝ 1-ին դասի վտանգավոր թափոնների շարքին դասվող սնդիկ պարունակող լյումինեսցենտային լամպերի փոխարինումը լուսադիոդային լամպերով: Վերջինիս շնորհիվ լուծվեց Ընկերության կողմից օգտագործվող սնդիկային լամպերով պայմանավորված թափոնների խնդիրը:

Թափոնների կառավարման ռազմավարության շրջանակներում հետևյալ թափոնատեսակները ենթարկվում են կրկնակի օգտագործման ու վերամշակման.

Չտեսակավորված պղնձի ջարդոն

Չաղտոտված ձուլածո պողպատե ջարդոն

Օգտագործված արդյունաբերական յուղերը կրկնակի օգտագործվում են հանքաքարի մանրացման արտադրամասում այլ սարքավորումների շահագործման համար

Թեփը կրկնակի օգտագործվում է հետլիցքի և յուղերի արտահոսքերը կանխելու նպատակով

Օգտագործման համար ոչ պիտանի չաղտոտված ալյումինե մետաղալարեր

2022 թ. աղբավայր չհեռացված թափոնների ծավալը կազմել է 1085.7 տոննա, որից 169.8 տոննան ենթարկվել է կրկնակի օգտագործման, իսկ 915.9 տոննան՝ վերամշակման:




ԶՊՄԿ-ի կողմից իրականացվում է թափոնների վերամշակում՝ ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ ընկերությունների հետ համատեղ: 2022 թ. տվյալների համաձայն՝ վտանգավոր թափոնների վերամշակման ծավալները կազմել են 20.7 տոննա, որոնց 6.1 տոննան վերամշակվել է անկախ ընկերությունների կողմից, իսկ 14.6 տոննան՝ Ընկերության սեփական ուժերով: Բացի այդ, ոչ վտանգավոր թափոնների վերամշակման ու վերաօգտագործման ծավալը կազմել է 298.1 տոննա, որից 291 տոննայի կառավարումն իրականացրել են անկախ կազմակերպություններ, իսկ 7 տոննան՝ Ընկերությունն ինքնուրույն:

ՄԱԿ ԿԶՆ

9 INDUSTRY, INNOVATION AND INFRASTRUCTURE

15 LIFE ON LAND

## ՊՈՉԱՄԲԱՐՆԵՐ

Պոչամբարների կառավարումը հանդիսանում է հանքարդյունաբերական գործառնությունների կարևորագույն բաղադրիչ, որի հնարավոր հետևանքները կարող են տարածվել հանքի անմիջական տարածքից շատ ավելի հեռու: ԶՊՄԿ-ն գիտակցում է իր պարտականություններն ու համակարգված ջանքեր գործադրում՝ ազդեցությունները հստակեցնելու, չափելու և կառավարելու ուղղությամբ:

### ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

**Հողի կայունություն**

Պոչամբարի և հարակից տարածքների կայունությունն ապահովելու նպատակով ձեռնարկվում են շարունակական վերականգնողական բնույթի միջոցառումներ: Սողանքների առաջացման վտանգի մշտադիտարկումը հնարավորություն է տալիս նկատել չնչին տեղաշարժն ու անմիջապես արձագանքել դրան: Այս միջոցառումները նախատեսվում է շարունակել նաև 2023 թ.:

Առկա է նաև ուղղահայաց և հորիզոնական դրենաժային համակարգի ծրագիր, որն ուղղված է պոչամբարի կայունության ամրապնդմանը:

**Աղտոտում**

Բնական ռեսուրսների հնարավոր աղտոտումը կանխարգելելու համար ԶՊՄԿ-ն առաջարկում է նախագծային լուծումներ՝ պատվիրելով պոչատար խողովակաշարի նոր նախագիծ, որը թույլ կտա ապահովել տեղական ու միջազգային չափանիշների համապատասխանություն: Սպասվող ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել երկաթբետոնե վաքեր և վերանորոգել հակավթարային ավազանները՝ խողովակներից հնարավոր արտահոսքերն արդյունավետ կերպով կանխարգելելու նպատակով:

**Էկոհամակարգերի խախտում**

Պոչամբարային տնտեսության կառուցումը, տեղադրումն ու շահագործումը կարող են հանգեցնել տեղի էկոհամակարգերի խախտման: Սակայն, մեր կողմից խստորեն պահպանվող միջազգային ուղեցույցների և չափանիշների շնորհիվ, նման հողախախտման դեպքերը հնարավորինս նվազել են, իսկ հնարավորության դեպքում՝ վերականգնվել:

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

**Զբաղվածության ապահովում**

Ընկերության պոչամբարի շահագործումն ու վերականգնման աշխատանքները ստեղծում են նոր աշխատանքային հնարավորություններ, այն է՝ ուղղակի աշխատատեղեր Ընկերությունում և անուղղակի աշխատատեղեր հարակից բնագավառներում: Այս աշխատատեղերը հաճախ պահանջում են մասնագիտական հմտություններ, ինչը հանգեցնում է տեղական աշխատուժի որակավորման բարձրացմանը:

**Համայնքի անվտանգություն**

Պոչամբարի պատշաճ շահագործումն ապահովում է տեղական համայնքների անվտանգությունը պոչամբարի և սողանքների հետ կապված պատահարներից: Անվտանգ աշխատանքի մեր հանձնառությունն ապահովում է մեր ակտիվների պաշտպանվածությունը, համայնքների անվտանգությունն ու մեր բիզնեսի կայունությունն ու ամբողջականությունը:

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ

**Գործառնական ծախսեր և օգուտներ**

Չնայած որ պոչամբարի և հարակից ենթակառուցվածքի անվտանգ նախագծումն ու շահագործումը ենթադրում են զգալի ծախսեր, այնուամենայնիվ, դրանք մասամբ դիտարկվում են որպես կապիտալ ծախսեր, որոնք կանխարգելում են հետագա հնարավոր պարտավորությունները, ապահովում են նորմատիվային պահանջների կատարումն ու նպաստում են բարի համբավին, ինչը՝ երկարաժամկետ կտրվածքով, հանգեցնում է տնտեսական օգուտների գործունեությունը դյուրացնելու և համայնքային կապերն ամրապնդելու միջոցով:

Պոչանքների արդյունավետ կառավարումը ենթադրում է որակյալ նյութերի և տեխնոլոգիաների ձեռքբերում, ինչի համար անհրաժեշտ են միջազգային մատակարարների հետ համապատասխան կապեր: Այս ամենն ունի երկակի ազդեցություն, քանի որ մի կողմից ապահովում է մեր պոչամբարի համար լավագույն որակի նյութեր, իսկ մյուս կողմից՝ ներմուծում է որակի միջազգային ստանդարտներ:

**Պոչամբարի կառավարման մեր մոտեցումը ներկայացնող այս բոլոր փաստաթղթերն ու ռազմավարական քաղաքականությունները արտացոլում են ԶՊՄԿ-ի անմնացորդ նվիրումը անվտանգ ու ապահով հանքարդյունաբերության բարձր չափանիշներին: Այս փաստաթուղթը ոչ միայն սահմանում է մեր գործողությունների համար չափանիշներ, այլ նաև ծառայում է որպես թափանցիկություն ապահովող գործիք, որի միջոցով մեր շահագրգիռ կողմերը կարողանում են հասկանալ և գնահատել մեր գործելակերպը:**

## ՊՈՉԱՄԲԱՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Այս փաստաթուղթը ներկայացնում է Պոչամբարների կառավարման առումով գլոբալ չափանիշներին (GISTM) համապատասխանելու մեր հանձնառությունը:




Պոչանքների հեռացումը բնապահպանական պատասխանատու մոտեցմանն ուղղված մեր պարտավորության կարևորագույն մաս է կազմում:

Յանքարդյունաբերությունը, լինելով իր բնույթով գլոբալ ոլորտ, պահանջում է համապատասխան միջազգային նորմերի պահպանում:
Այս վերլուծության միջոցով կատարվում է մեր գործողությունների և միջազգային չափորոշիչների խաչաձև համադրում, ինչն ապացուցում է, որ մենք մնում ենք պատասխանատու հանքարդյունաբերության առաջապահ:

Այս փաստաթուղթը սահմանում է այն քայլերի հաջորդականությունը, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել պոչամբարի հետ կապված արտակարգ իրավիճակներում ու անկանխատեսելի դեպքերում՝ հնարավոր վնասը նվազագույնի հասցնելու նպատակով արագ ու արդյունավետ արձագանքման միջոցներ ձեռնարկելու միջոցով:

Գործունեության արդյունավետության կառավարումը, հատկապես պոչամբարների կառավարման պես կարևոր ոլորտում, ենթադրում է շատ ավելին, քան զուտ մշտադիտարկումն է: Մասնավորապես, այն ներառում է նախաձեռնողական միջոցառումների, շարունակական բարելավման ու ոլորտի լավագույն չափանիշների խթանմանն ուղղված մի ամբողջական շրջանակ: ԶՊՄԿ-ում, գործունեության արդյունավետության կառավարման մեխանիզմների հիմքում ընկած են գլոբալ չափորոշիչներ և չափանիշներ, ինչպես նաև մեր գործառնությունների բնույթին բնորոշ հստակ մարտահրավերներ և պահանջներ:

## ՊՈՉԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

### ›› ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ /ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ/ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

**Պոչամբարների կառավարման ուղեցույցներ ու հրահանգներ**
Պոչամբարների կառավարման գործընթացի յուրաքանչյուր փուլի /սկսած՝ պոչանքի հեռացումից մինչև բնապահպանական նախազգուշական միջոցներ/ համար նախատեսված է ուղեցույցների փաթեթ: Այս հրահանգները հաշվի են առնում գործընթացի ինչպես մակրո, այնպես էլ միկրո տարրերը՝ դրանով իսկ ապահովելով գործառնական հստակ ճանապարհային քարտեզ:

**Անվտանգություն**
Պոչամբարի կառավարումից բացի, առկա են նաև ուղեցույցներ՝ պոչամբարի տարածքում և մոտակայքում բոլոր գործողություններն անվտանգ ու արդյունավետ իրականացնելու վերաբերյալ:

## ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

**Պոչամբարի կառավարման թիմ**
Այս մասնագիտական թիմը, որը բաղկացած է ներքին ու արտաքին խորհրդատուներից, նախատեսված է բացառապես պոչամբարի գործողությունները վերահսկելու համար: Այս մարմինն ապահովում է պոչամբարի անխափան աշխատանքը՝ ամենօրյա հաշվետվությունների վերլուծությունից մինչև գործառնական որոշումների կայացումը:

**Մատակարարման շղթայի մեխանիզմներ**
Պոչամբարային տնտեսության կառավարմանն ուղղված այս պարտավորությունը տարածվում է նաև մեր մատակարարների վրա: Մատակարարների գնահատման և պարբերական ստուգումների միջոցով մենք ապահովում ենք Ընկերության մատակարարման շղթայի բոլոր տարրերի համապատասխանությունը մեր չափանիշներին:

## ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ և ՎԿԱՅԱԳՐՈՒՄ

**Ներքին ստուգումներ**
Մեր ներքին թիմերի կողմից կազմակերպվող ընթացիկ և անակնկալ ստուգումներն ապահովում են Ընկերության բոլոր ընթացակարգերի /protocols/ համապատասխանությունը միջազգային չափանիշներին:

**Արտաքին ստուգումներ**
Միջազգային փորձագետների հետ համագործակցությունն ապահովում է մեր գործունեության անկախ ու օբյեկտիվ գնահատական:



## ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ընկերության պոչամբարն ապահովված է **արդիական թվային համակարգերով**, որոնք իրականացնում են իրական ժամանակում տարատեսակ պարամետրերի մշտադիտարկում:

Պոչամբարների կառավարման օբյեկտներն ունեն իրենց բնորոշ ռիսկերը: Մանրամասների համար տե՛ս «Կրիտիկական պատահարների կառավարում» բաժինը:



**2022թ. ձեռքբերումներ. Բնապահպանական կառավարման նկատմամբ նոր մոտեցում**

**Տարիներ շարունակ, Ընկերությունն իրականացնում էր Արծվանիկի պոչամբարի տարածքի աստիճանական ռեկուլտիվացիա:**

**2022 թ. Ընկերությունը որոշեց գնահատել Արծվանիկի պոչամբարի ռեկուլտիվացված հատվածի շերտերի արդյունավետությունը, և ստացված արդյունքների հիման վրա՝ նախագծել ժամանակակից պահանջներին համապատասխանող ռեկուլտիվացման շերտ: Ուսումնասիրության համար ընտրվել էր երկու տեղամաս պոչամբարի լանջին:**

**1. Առաջին տեղամասում առկա ծածկի համար (20 սմ հողի վերին շերտ և 70 սմ պահեստային հող) կատարվեց կիրառված ռեկուլտիվացիայի մեթոդի շերտագրություն /ստրատիգրաֆիա/:**
**2. Երկրորդ տեղամասում, ներդրվեց նոր փորձարարական մեթոդ նոր նախագծային շերտի ուսումնասիրության նպատակով (20 սմ խիճ, 50 սմ կավ և 20 սմ հողի վերին շերտ):**

**Ուսումնասիրությունը կատարվեց հողի խոնավության սենսորային չափման մեթոդով՝ ելնելով բոլոր կլիմայական պայմաններում ջրի թափանցելիության գործակցից: Նոր փորձարկվող ռեկլամացիոն մեթոդի խցում տեղադրվեց 4 նմուշ, իսկ 2 նմուշ տեղադրվեց նախորդ ռեկուլտիվացիոն շերտի վրա: Մեկ տարի շարունակ անհրաժեշտ կլինի հավաքել ու վերլուծել ստացված տվյալները, իսկ շարունակական մշտադիտարկման միջոցով հնարավոր կլինի բացահայտել յուրաքանչյուր սեզոնի ընթացքում տվյալ տեղանքի վարքագիծը: Այս ուսումնասիրության արդյունքները կներկայացվեն 2023թ. կայուն զարգացման հաշվետվությունում՝ բոլոր չորս սեզոնի ուսումնասիրությունն ավարտելուց հետո:**

**Ռեկուլտիվացիայի մեթոդի փոփոխությունը պայմանավորված է 2022 թ. Ընկերության ստանձնած հանրային հանձնառությամբ, համաձայն որի Ընկերությունը պարտավորվել է նախաձեռնել բնապահպանական կառավարման առումով առկա /չափանիշների համապատասխանության/ բացերի համապարփակ գնահատում՝ թերությունների աստիճանական վերացման ու ըստ անհրաժեշտության ընթացակարգերի փոփոխման ռազմավարության շրջանակներում:**

ԶՊՄԿ-ի՝ պոչամբարային տնտեսության նկատմամբ մոտեցումը ոչ միայն հակադարձում է ընթացիկ մարտահրավերներին, այլ նաև հեռատեսական է, քանի որ կանխատեսում և ակտիվորեն արձագանքում է հնարավոր ապագա մարտահրավերներին: Մեր գերնպատակն է ստեղծել ճկուն, ապահով և արդյունավետ պոչամբարային տնտեսության համակարգ, որը կապահովի շրջակա միջավայրի, մեր աշխատակիցների ու հարակից համայնքների պաշտպանվածությունը:

## ՉՊՄԿ-Ի ՊՈՉԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԹԻՐԱԽԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ



**Ռազմավարական տեսլական**

1. Մեր նպատակների հիմքում ընկած է պոչամբարի կառավարման առումով **«Զրոյական պատահար»** տեսլականը:
2. Մեր նպատակն է ապահովել պոչամբարային տնտեսության ոլորտում **լավագույն գործելակերպի չափանիշ**՝ տարածաշրջանի և համաշխարհային մակարդակով: Վերջինս ներառում է ոչ միայն տեղական իրավական պահանջների, այլ նաև համապատասխան միջազգային չափանիշների կատարում և, հնարավոր է նաև, գերազանցում:

**Հետազոտություն և մշակում (R&D)**

Մեր տարեկան բյուջեի մի մասը մենք հատկացրել ենք հետազոտական և զարգացման նպատակներին՝ նախատեսելով ներդնել առավել առաջադիմական, ապահով և արդյունավետ պոչամբարների կառավարման տեխնոլոգիաներ:



**Հստակ թիրախային ցուցանիշներ և փուլեր**

1. Նպատակ ունենալով մինչև 2028թ. ապահովել **Թափոնների կառավարման գլոբալ ոլորտի չափանիշ**-ի ամբողջական համապատասխանությունը՝ մենք նախաձեռնում և ակտիվորեն աշխատում ենք կառավարման, բնապահպանական անվտանգության, շահագրգիռ կողմերի ներգրավման ու արտակարգ իրավիճակների արձագանքման ռազմավարությունների ուղղությամբ:
2. Մինչև 2024 թվականի ավարտը, մենք մտադիր ենք ունենալ **ամբողջովին ինտեգրված մշտադիտարկման համակարգ**, որը գործում է Ինտերֆերոմետրիկ սինթետիկ ապերտուր ռադարի (InSAR) և ռեալ ժամանակում աշխատող մշտադիտարկման սարքերի հիմքով՝ հնարավոր խնդիրները կանխատեսելու և մեղմելու նպատակով:
3. Ապահովել պատվարում ջրի մակարդակի **20% կրճատում** մինչև 2026թ.՝ դրանով իսկ նվազեցնելով հեղուկացման ու դրան առնչվող պատահարների ռիսկը:

**Շարունակական բարելավում և վերապատրաստում**

Կազմակերպվում են կանոնավոր ուսումնական միջոցառումներ, սեմինարներ և հմտությունների զարգացման ծրագրեր՝ պոչամբարին առնչվող յուրաքանչյուր աշխատակցին ամենաարդիական գիտելիքներով ու լավագույն փորձով ապահովելու նպատակով:
2025 թ. մեր նպատակն է՝ ապահովել պոչամբարին առնչվող մեր ողջ՝ 100% անձնակազմի վերապատրաստումն ու միջազգային չափանիշներին համապատասխանող պատրաստվածությունը՝ դրանով իսկ ընդլայնելով նրանց իրավունակության ու փորձագիտական շրջանակն ու բարձրացնելով մեր գործառնությունների անվտանգության մակարդակը:

# ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ

ԶՊՄԿ-ի գործունեությունը ենթադրում է որոշակի, հանքարդյունաբերությանը բնորոշ մարտահրավերներ՝ միևնույն ժամանակ առաջարկելով ապահով շրջակա միջավայր ստեղծելու հնարավորություններ: Ընկերության արժեքների հիմքում ընկած է շրջակա միջավայրի հետ ապահով ու անվտանգ համակեցության գաղափարը, ինչի համար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել օդի որակի վրա բացասաբար ներազդող աղտոտիչների վրա: Ընկերության գործունեությամբ պայմանավորված շրջակա միջավայրի վրա ազդեցության հետքը զգալիորեն կրճատելու նպատակով, ԶՊՄԿ-ի շրջակա միջավայրի պահպանության շրջանակում հատուկ տեղ է հատկացվել օդի որակի ապահովման հարցերին: Օրինակ, 2020-2021 թթ. փոշու արտանետումների կրճատման նպատակով, առաջնային ջարդիչ կայանում, տեղադրվել է ժամանակակից ասպիրացիոն համակարգ, որի համարժեք համակարգերը մենք նախատեսում ենք տեղադրել նաև հարստացուցիչ ֆաբրիկայում  և այլ արտադրամասերում: Բացի այդ, մեր առցանց մշտադիտարկման համակարգը թույլ է տալիս իրականացնել իրական ժամանակով մշտադիտարկում և հայտնաբերել հնարավոր անհամապատասխանությունները վաղ փուլում՝ հնարավորություն տալով ժամանակին ձեռնարկել ուղղիչ գործողություններ:

